

Ս. Ա. ՈՐԼՈՎ

---

# ՏԱՎԱՐԱԾԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

---

636

0-60

---

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԹԵՐԵՎԱՆ 1936

02 SEP 2013

ԱԿ

636

0-60

Ա. Ա. ՈՐԼՈՎ

39894  
6000

ՀՈՐԿ

# ՏԱՎԱՐԱԾԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

Յերկրոյ վերամշակված յեզ լրացված  
հրատարակութուն



1936

Յերեվան

## ՅԻՐԱՊԵՏԵԼ ԳՈՐԾԻ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

Կոմունիստական կուսակցության 17-րդ համագումարում ընկ. Ստալինը կոչ էր անում վողջ կուսակցությանը, մեր Միության վողջ աշխատավորությանն ամուր կպչել անասնապահության, անասունների թվի աճման, անասունների վորակի բարելավման գործին:

Այս կարևորագույն խնդրի կենսագործման համար կուսակցության Կենտկոմի պլենումը 1934 թվի հուլիսի 1-ի բանաձևով «կուսակցական կազմակերպությունների, հողային որդանների, խորհտնտեսությունների ղեկավարների, ՄՏԿ և կոլտնտեսությունների առաջ դնում է արտոնների և մարզագետիկների բարելավման ու նրանց բերքատվության բարձրացման հարցը, վորպես կարևորագույն խնդիրներից մեկը»:

Ինչո՞ւ կուսակցությունն արոտավայրերի խնդիրներին հատուկ ուշադրություն է դարձնում: Վորովհետև արտոնները սոցիալիստական անասնապահության կերրի կարևորագույն աղբյուրն են հանդիսանում: Այս հարցին հիմնովին տեղյակ պրոֆեսոր Լարինն այսպես է ասում.

«...Մեր անասունների յերկու յերրորդից ավելին տարեկան կերրի վողջ պահանջի 60—70%-ն ստանում է բնական արոտներից. ամբանը կթվում է կաթի 60%-ից ավելին և հավաքվում է վողջ յուղի 70%-ը: Հատկապես ամբան արոտներում է, վոր գերանում են խոչը յեղջուրավոր անասուններն ու վոչխարները, վորով ապահովվում է մսի մթերման պլանի նորմալ կատարումը: Արոտների ոգտագործման և բարելավման ամեն մի ռացիոնալ միջոցառում, վորն ընդամենը 1%-ով ավելացնում է արոտների արդյունավետությունը, մեր Միությանը տասը հազար տոնն կաթի և մսի ավելացում է տալիս»:

Անասուններէ արոտային պահածքը խոշոր նշանակութիւն ունի նաև նրանց առողջութեան և մթերատվութեան բարձրացման համար:

Սակայն պետք է ասել, վոր արոտի շրջանում թե կերերէ ոգտագործումը և թե արածեցնելու բարենպաստ ազդեցութիւնն անասուններէ վրա կախված է նախևառաջ արածեցնելու ճիշտ տեխնիկայից և արոտների խնամքից: Այս գործի վատ դրվածքը կարող է անասունների առողջութեանը և մթերատվութեանը մեծ վնաս հասցնել:

Իսկ մեծ ձեռքումն է գտնվում արածեցման տեխնիկան և այս հսկողութիւնը: Պարզ է, վոր տավարածի ձեռքում:

Տավարածից է կախված նախրի պահպանութիւնը, առողջութիւնը, գիրութիւնն ու մթերատվութիւնը. տավարածին են վստահում հանրային խոշոր սեփականութիւնը, վորը նա պետք է խնամքով պահպանի: Նախրին խնամելու ցանկութիւն ունենալը դեռ բավական չէ. տավարածը պետք է գիտենա նախրին ճիշտ խնամք տանելը. նա պետք է յուրացնի և յուր առորյա աշխատանքներում կիրառի արածեցնելու տեխնիկան:

Յեթե տավարածը գիտենա արածեցնելու, ջրելու ճիշտ կարգը, սովորի ժամանակին նկատել և վերացնել այն պատճառները, վորից կարող են հիվանդութիւններ առաջանալ, հիվանդութիւններ առաջանալու դեպքում կարողանա ժամանակին միջոցներ ձեռք առնել, — այս դեպքում նա կարող կլինի պահպանել նախրը, գիրացնել անասուններին և բարձրացնել մթերատվութիւնը:

Մեզ մոտ հազարավոր տավարածներ կան, վորոնք հրաշալի հարվածայիններ են: Սրանք և՛ գործը մյուսներին լավ գիտեն, և՛ դեպի իրենց աշխատանքն ազնիվ վերաբերմունք ունեն նման տավարածին հարգանք ու պատիվ: Այդպիսի տավարածը պետք է լինի գյուղի նշանավոր մարդը:

Բայց և այնպես սոցիալիստական տնտեսութեան ազնիվ աշխատավորին բավական չէ, վոր մենակ ինքը գործը գիտենա և կատարի այն, այլ հարկավոր է ոգնել, առաջ տանել յետ մնացողներին. սրանք էլ պետք է հասնեն առաջավորներին, իսկ գրա

համար անհրաժեշտ է լայն ծավալել սոցիալիստական մրցութիւնը թե առանձին տավարածների, և թե սրանց բրիգադների միջև:

Ընկ. Ստալինը սոցիալիստական մրցութեան մասին ասել է.

«Սոցիալիստական մրցութիւնն ասում է՝ ոժանդակիւր յետ մնացողին՝ հասնելու լավագույններին և ձգտիւր ընդհանուր վերելքին»:

Տավարածը պետք է հիշի նաև, վոր դասակարգային թշնամին դեռևս ձգտում է ֆրաս հասցնել կոլտնտեսային կարգերին, կոլտնտեսային տնտեսութեանը և խփում է թույլ կողմերին, վորպիսին մինչ այժմ հանդիսանում է անասնապահութիւնը:

Տավարածների մեջ ևս լողբեր կան, վորոնք՝ ինչպես հայտնի յե՝ սոցիալիստական աշխատանքի թշնամիներն են: Տավարածների մեջ կան և այնպիսի մարդիկ, վորոնք գիտամտ աշխատում են անասուններին կանոնավոր շարածեցնել, կանոնավոր չլրել. կան նաև այնպիսիները, վորոնք կարծես թե չեն նկատում, վոր անասունները հիվանդացել են և ժամանակին այդ մասին կոլտնտեսութեան վարչութեանն ու անասնաբուժին չեն հայտնում:

Այդպիսի նենգութեամբ կոլտնտեսութեան թշնամիները վոչընչացնում են նախրը: Այդպիսի թշնամիների դեմ պետք է անխնա պայքար մղել:

Տուրաքանչյուր անասունի պահպանման, առողջութեան, քաշի ավելացման և կաթնատվութեան բարձրացման համար մղվող պայքարը պետք է յուրաքանչյուր տավարածի պատվի գործը դառնա:

1934 թ. նոյեմբերի 14-ին ԽՍՀՄ Հողմողկոմատի կողմից հաստատված է կոլտնտեսային ֆերմաների աշխատանքի կազմակերպման վերաբերյալ կանոնադրութիւնը: Այս վորոյման մեջ հետեյալ կերպ է ասված. «տավարածն սպասարկում է մինչև 100 կովի, մեկ կամ յերկու ոգնականով: Վորպես կանոն, տավարածների պարտականութիւնները կատարում են լավագույն անասնապահները»: Տավարածին աշխոր է գրանցվում՝ ամսական տաար հարյուրերորդական՝ յուրաքանչյուր կովն արածեցնելու համար և 12—30 հարյուրերորդական աշխոր՝ արոտի շրջանում ստացված յուրաքանչյուր 100 լիտր կաթի համար:

Այնուհետև՝ տավարածի հաշվին գրանցվում է արոտի շրջանում բեղմնավորված ամեն մի կովի համար 50 հարյուրերորդական աշխոր, և արոտի շրջանում ամեն մի հաջող ծնի համար 0,50 աշխոր: Բտվող նախրին սպասարկող տավարածն իր ոգնականի հետ արածեցնում է 30—40 անասուն և ամեն մի անասունի համար ամսական ստանում է 0,25 աշխոր, սպա անասունների բոլորը վերջանալուց հետո յուրաքանչյուր մեկ գլուխ միջակ գիրացած տավարի համար ստանում է 3 աշխոր, իսկ լավ չաղացածի համար՝ 5 աշխոր:

Մատղաշներ և հորթեր արածեցնող տավարածն սպասարկում է 50 անասունի, իսկ ավելի շատ անասուն պահելու դեպքում նրան ոգնականներ են տալիս: Հորթերի պահպանման համար առանձին տավարած է նշանակվում այն դեպքում, յերբ այդ աշխատանքը հորթերին խնամք տանողները չեն կարողանում կատարել: Տոհմական ֆերմաներում մատղաշների և հորթերի տավարածներին նախրի կենդանի քաշի յուրաքանչյուր 10 կգ անի համար գրանցվում է 33—70 հարյուրերորդական աշխոր, իսկ կաթնանասնապահական ֆերմաներում՝ 50—70 հարյուրերորդական աշխոր՝ յուրաքանչյուր գլխի համար, նայած մատղաշի դրուժյանն ու գիրուժյանը: Բացի դրանից, արոտի շրջանում յուրաքանչյուր բեղմնավորված յերինջի (բեղմնավորման տարիքի) համար տավարածը 50 հարյուրերորդական աշխոր է ստանում:

Տավարածի ոգնականների աշխատանքի վարձատրուժյունը սահմանում է կոլտնտվարչուժյունը, համաձայն նրանց աշխատանքի վորակի:

Ֆերմայում յերկու տարի աշխատող կոլտնտեսականների համար սահմանված զնահատուժները բարձրացվում են 10%-ի չափով, իսկ յերեք և ավելի տարի աշխատողներին՝ 15%-ով:

Անասնապահը (վորն արոտի շրջանում նաև տավարած է) իր սպասարկած նախրի 96%-ի բարեհաջող ծնի դեպքում վորպես պարգև ստանում է մեկ հորթ:

## ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԱՐՈՏՆԵՐԻ ՎՈՐԱԿԸ

Լավ արոտատեղը պետք է համապատասխանի հետևյալ պայմաններին, վորը և հետագայում քննության կառնենք.

1) արոտատեղը պետք է ունենա նախրի կերակրման համար բավարար քանակի կոնաչ խոտ:

2) արոտատեղում չպետք է լինեն մեծ քանակությամբ մոլախոտեր, թունավոր բույսեր, ճահիճներ, մորուտներ և թվուտներ:

3) արոտատեղը պետք է ունենա բավականին մաքուր ջրելատեղ՝ խմելու համար պիտանի ջրով:

4) արոտատեղը տնտեսությունից շատ հեռու չպետք է լինի: Մեկ մոտ շատ կան արդյոք այս բոլոր պայմաններին բավարարող արոտավայրեր:

Պետք է ասել, վոր շատ քիչ կան:

Իսկ մենք հնարավորություն ունենք նման արոտավայրեր ունենալու: Պետք է ասել, վոր լիովին հնարավորություն ունենք:

Մեր գյուղերի շուրջը՝ ցածրավայրերում և հովիտներում հողաթմբերի մեծ տարածություններ կան, վորոնք ընկած են այնպիսի վայրերում, վոր արոտի համար ամենից շատ պիտանի յեն և դրանցից, մշակման դեպքում, կարելի կլիներ ստեղծել արոտատեղի մեծ ֆոնդ: Այս հողաթմբերը ցույց են տալիս արածեցման պատմությունը. նրանք ցույց են տալիս, վոր արածեցումն սկսել են գյուղի մոտակայքից, իսկ հետո՝ բնական բուսականության վատանալուն զուգընթաց՝ սկսել են գյուղից հեռու հեռավոր ավելի ու ավելի հեռու արածեցնել: Գիշատիչ ձևով արածեցնելու հետևանքով բոլոր ավելի քան համապատասխան հողակտորները վեր են ածվել ամենաաղքատ բուսականությամբ ծածկված հողակտորների, վորոնք, բնական է, իրենց կերով նախրին չեյին բավարարի:

Այժմ ել մի շարք տեղերում արոտավայրի գործը դեռևս այս դրության մեջ է գտնվում:

Յերբ առիթ է լինում այցելել այդ վայրերը և խոսել արածեցնելու մասին, միշտ բողոքներ են լսվում այն մասին, թե արոտավայրերը վատ են, ամբողջությամբ հողաթմբեր են և այլն:

Այդպիսի բողոքները հավասարազոր են այն բանի, վոր մարդն ասի՝ ուտելու վոչինչ չկա, քանի վոր վոչ հաց, վոչ ել ճաշ կա, բայց կա միայն ցորենի ալյուր և հնդկացորեն:

Հողակոշտերի առաջացումն արդեն իսկ ցույց ե տալիս, վոր առաջ այդտեղ արածեցնելու ամենախիղճ տեղերն են յեղել, վորովհետև հողակոշտերն առաջանում են խոնավ հողերն անասունների վտառի տակ տրորվելուց, տրորված տեղերի կակղելուց, աստիճանաբար ճիմապատվելուց և ապա մամուսապատվելուց: Հարթավայրի յուրաքանչյուր մարդագետին անփուլթ արածեցնելու, հարկ յեղած խնամքի բացակայութեան դեպքում կարող ե հողակոշտերի վերածվել:

Սակայն հատկապես այդպիսի ցածրադիր մարդագետիններն են, վոր արածեցնելու համար սիրված տեղեր են հանդիսացել, վորովհետև սրանք նախիրը կերակրելու համար, ճիշտ ե, վոչ այնքան վորակով, բայց առատ կանաչ եյին տալիս: Սրա հետ միասին ցածրադիր մարդագետիններն ու հողակոշտերն ամենից հաշող և պարզ ձևով կարելի յե վերածել ամենահարուստ արոտատեղի՝ կանոնավոր ձևով, վոչ չափից ավելի չորացնելու, ապա հերկելու ու բազմամյա բույսեր ցանելու միջոցով:

## ԱՐԱՄԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՐԱԺԵՑՑ ՏԱՐԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ

Արոտավայրի վորակը հաշվի առնելու և այն նախրի կերի պահանջին համադրելու համար հարկավոր ե ծանոթանալ կերի հաշվարկին և արոտավայրի կերի վորակը վորոշելու հիմունքների հետ:

Ցելը, խոզանը, աշնանացան հացահատիկները նոր ծլած արտերը չի կարելի իբրև արոտատեղ հաշվել, վորովհետև արածեցնելն ամենից առաջ փաստակար ե հենց այդ պաշտերի համար, յերկրորդ՝ կարող ե փաստակար լինել նաև անասունների համար, յերրորդ՝ այդ տարածութեաններից ստացվում ե շատ զիչ կեր, այն ել կարճ ժամանակով, չորրորդ՝ արոտների ճիշտ կազմակերպման դեպքում այդ տեղերն իբրև արոտ ոգտագործել բոլորովին պետք չե:

Այդ արածելու տեղերը նկարագրելու նույնպես կարիք չկա, վորովհետև ամենքը գիտեն, թե նրանց վրա ինչ ե աճում: Արոտներ են համարվում այդ նպատակին ծառայող հատուկ հողամասերը, այլև մարգագետինները՝ խոտհարքից հետո: Ահա այս արոտավայրերի հետ ամեն մի տավարած պետք ե լավ ծանոթանալ:

Արոտի կերարժեքը կախված ե բուսական մի վորակից, այն ե՝ բույսերի տեսակներից և նրանց աճման թափից: Կավազույն մարգագետնային բույսերի, որինակ տիմֆեյեվկայի, սեզի, անքիստցորնուկի, կանաչ վարսակի, ռայդրասների, շյուզախոտի, յերեքնուկի, վիկի, առվույտի, կորնզանի, վոլուսի 4—5 կգ-ը հավասար ե մեկ կերի միավորի, լավագույն մարգագետնային այլազգի բույսերի՝ 5—6 կգ-ը, իսկ անտառային և ցածրադիր արոտների այլազգի բույսերի մինչև 7, անգամ 8 կգ-ը (տես եջ 13): Կերի միավոր ե համարվում այս կամ այն կերի այն քանակը, վորն իր սննդարարութեամբ հավասար ե մեկ կգ վարսակի սննդարարութեանը:

Ինչպես տեսնում ենք, լավ կանաչ կերից 4 անգամ ավելի պետք ե վերցնել, վոր իր սննդարարութեամբ համապատասխանի 1 կգ վարսակին, իսկ վատորակ կանաչից՝ 8 անգամ ավելի: Յերեքնուկի լավագույն խոտից մի կերի միավորին զայիս ե 2—2,5 կգ, քուսպից՝ միայն 800—900 գրամ, իսկ լավ սիլոսից՝ 6 կգ, այսինքն թված չափերը համապատասխանում են 1 կգ վարսակի սննդարարութեանը:

400 կգ կենդանի քաշ ունեցող և 10 լիտր կաթ տվող կովին իբրև կենսապահ կեր անհրաժեշտ ե տալ 4 կերի միավոր (100 կգ կենդանի քաշին մեկական միավորի հաշվով), իսկ կաթ արտադրելու համար՝ 4 կերի միավոր իբրև կանաչ խոտ, այլև սպիտակուցային ոժանդակ կեր՝ 1—1,5 միավոր: Այսպիսով, ընդամենը կովին հարկավոր ե տալ 8 կերային միավոր իբրև կանաչ կեր: Նշանակում ե այդպիսի կովին պետք ե տալ մոտավորապես 40 կգ լավ կանաչ կեր՝ ոժանդակ խոտացրած կերի հետ միասին: Յեթե արոտի բուսական միավոր լավորակ ու փարթամ ե, կովը կարող ե այդքան կանաչ արածել, ծամել ու մարսել: Հաշվելով արոտի շրջանը մոտ 150 որ, մեկ կովի համար անհրաժեշտ կլինի 6 հա-

դար կգ (6 տոնն) կանաչ խոտ, վորպիսի քանակութիւնը կովը կարող է վերցնել 1 հեկտար լավ բնական կանաչ բուսականութիւն ունեցող արոտից՝ կանոնավոր արածեցնելու դեպքում: Իսկ կուլտուրական և ցանովի մարգագետիններում այդ մի հեկտար տարածութիւնն արածեցման շրջանում կարող է 4—5 անգամ նորոգվել, արածեցնելուց հետո արագ վերածելով: Թեև նրա բուսականութեան աճը կսկսի թուլանալ, սակայն և այնպես նա կկերակրի վոչ թե մեկ, այլ 2—3, անգամ 4 կով: Այսպես, որինակ, գերմանացիները մի հեկտարի վրա կերակրում են 2—3 կթան կով և 3—4 մատղաշ, կթան կովերին քիչ քանակութեամբ լրացուցիչ խտացրած կերեր տալով:

Ցամաքած կովերին համարյա կեսի չափով պակաս պետք է տալ, քան թե լավ կթվող կովին, իսկ սաերջներին և յերինջներին համար պահանջվում է կթվող կովի նորմայի կեսից պակաս: Վոչխարների համար մոտ 10 անգամ պակաս կեր է պահանջվում՝ քան կովերի:

Շատ դժվար է հաշվել մեկ մոտ գոյութիւն ունեցող գյուղամերձ արոտների կերի պաշարը, քանի վոր նրանց վրա աճող բույսերի կեսից ավելին կաղմում են այնպիսի մոլախոտեր, ինչպիսին են զանգածաղիկը, հասարակ դայլաթաթը, յերիցուկը, հազարաթերթիկը, խոտուիկը, հրեշտակախոտը, փշախոտը, փետրախոտը, ջղախոտը և բոշխը: Ի հարկե, լավ բույսեր չլինելու դեպքում անասուններն ուտում են նաև այս այլազգի բույսերը և սնունդ են ստանում մի քանի բույսերից, ինչպիսին են հասարակ դայլաթաթը, ապիկոյ խոտը, բոշխը, փետրախոտը և հրեշտակախոտը: Յեթե հաշվի առնվի այն հանգամանքը, վոր այսպիսի վատ խոտով ծածկված մարգագետիններից կրկնակի անգամ քիչ սնունդ է ստացվում, քան լավ խոտերով ծածկված մարգագետիններից, այս դեպքում պետք է յերկու անգամ ավելացվի արոտների անհրաժեշտ քանակը. այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, վոր այս դեպքում ևս կովը չի տա ացնքան կաթ, վորքան կտար լավ բուսակազմ ունեցող արոտի դեպքում: Վորպեսզի կովը վատ մարգագետիններում կարողանա բավարարել իրեն անհրաժեշտ սննդանյութերի պահանջը, հարկադրված է լինում ավելի շատ

կանաչ ուտել, իսկ վատ կանաչի 7-8 կգ-ը և գեա ավելին հավասար է կերի 1 միավորի: Այսպիսով, 400 կգ կենդանի քաշ ունեցող և 10 լիտր կաթ ավող կովը որովա ընթացքում պետք է ուտի 60 կգ-ից ավելի կանաչ: Կանաչի այդ քանակի հետ կովի ստամոքան ինչպես հարկն է չի հաշտվի և, հետևաբար, կթերակերակրվի, վորի հետևանքով կաթը կպակասեցնի:

Բայց դրանից, պետք է հաշվի առնել կերերի մի շատ կարևոր հատկութիւնը, վորով հաշվում են նրանց սննդարարութիւնը: Ամեն վոք լսել է կոնցենտրատների (ուժեղ կերերի) մասին: Այսպես են կոչվում այն կերերը, վորոնց մեջ սպիտակուց կոչված նյութը շատ է լինում: Սրանց թվին են պատկանում վարսակը, գարին, թեփը, քուսպը և այլն: Սպիտակուցը շատ անհրաժեշտ է անասունի որգանիզմի համար: Սպիտակուցներով ավելի հարուստ են բակլայագգի (թիթեանծաղկավոր) բույսերը և հացազգի լավ բույսերը, վորոնց հետ հետագայում մանրամասն կծանոթանանք: Բակլայագգիներին մեկ կգ-ի մեջ պարունակվում է մինչև 25 գր սպիտակուց: Մարգագետնային և հատկապես անտառային այլազգիներն սպիտակուցով աղքատ են. սրանց մեկ կգ-ի մեջ 10 գրամից պակաս սպիտակուց կա: Այսպիսով, սպիտակուցը բոլոր տեսակի կերերի, այս թվում նաև արոտի կանաչի սննդարարութեան վորոշման չափանիշն է. նշանակում է պետք է հաշվի առնել արոտի 2 հիմնական հատկութիւններա բուսակազմի մեջ գտնվող լավագույն լոբազգի և հացազգի բույսերի քանակը ու նրանց աճման թափը: Ասենք, որինակի համար, ինչ կարող է տալ մամուակալած, տրորած հորթավայրերի խորդուրորդ հողամասերի մեկ հեկտար տարածութիւնը լոբազգի և հացազգի բույսերի լրիվ բացակայութեան դեպքում. ամբողջ արոտի շրջանում ամենաշատը 300—350 կգ վատ խոտ: Այսպիսի արոտի դեպքում, անգամ հազար հեկտարի վրա արածեցնելիս, նախիրը կոշտ չի լինի և արդյունք չի տա: Այստեղ, ըստ հողակտորների ձիշտ արածեցնելու դեպքում անգամ, քիչ արդյունք կստացվի: Այստեղ անհրաժեշտ է կիրառել արմատական միջոցներ՝ արոտավայրերի բարելավման համար: Որինակի համար վերցնենք անտառային արոտավայրը, վորի վրա մոտ 15% -ով լոբա-

հացահատիկային բույսեր են, իսկ մնացածներն այլազգիներ և բոշխեր են: Մորոչնոյն տոհմական տնտեսութեան նույն կարգի արտոններն ուսումնասիրելիս պարզվել է, վոր անսխտեմ արածեցնելու դեպքում, 3—4 ամսվա ընթացքում սրանք հեկտարից տալիս են մոտ 670 կգ կանաչ խոտ, իսկ 4 հոգակտորի բաժանելու և հերթով արածեցնելու դեպքում տալիս են 1,5—2,5 տոնն: Բաց արտոնները, վորոնց վրա 25—35% հայազգի-բակլայազգի բույսեր են, իսկ ուտելի այլազգի բույսերից կան հասարակ գայլաթաթը, ջղախոտը, հաղարաթերթիկը և ուրիշ բույսեր, անսխտեմ արածեցնելու դեպքում մեկ հեկտարից 3—4 ամսվա ընթացքում տալիս են 2, 3 տոնն կանաչ խոտ:

Չորս հերթական հողակտորի բաժանելու դեպքում նույն ժամանակամիջոցում նման արտոնները տալիս են 6, անդամ 7 տոնն խոտ մեկ հեկտարից: Սա արդեն բնական արոտի բարձր գնահատականն է: Հետևյալ ավելի քան բարձր գնահատականը պատկանում է լավագույն, վորողվող մարգագետիններին և տափաստանային խամերին, վորոնց մեջ գերակշռում են բակլայազգի և հացազգի բույսերը: Ամենաբարձր գնահատականը պատկանում է կուլտուրական ցանովի արոտավայրերին, վորոնք հեկտարից տալիս են 20 տոննից ավելի կանաչ խոտ:

Ինչ վերաբերում է մարգագետնի կանաչի վերաճման արագութեանը, դա կախված է տարբեր պայմաններից, խոնավութեան չափից, արածեցնելուց հետո թողնված բույսերի բարձրութեանից, բույսերի տեսակից, վորոնցից մի մասն արագ են վերաճում, իսկ մյուսները՝ դանդաղ: Նայած բույսերի վերաճման թափին, արոտները բաժանվում են հողակտորների՝ ըստ արածեցման հերթի, ըստ վորում անձրևային օրերին արածեցնում են բարձր և չորային հողակտորները վրա, իսկ չորային ժամանակներում՝ ավելի ցածրադիր արոտներում: Պետք է արածեցնել մինչ խոտի բարձրութեան հետևյալ սահմանը — անտառային շրջաններում՝ 5—6 սմ-ից վոչ ցածր, այլազգի բույսերով հարուստ տափաստաններում՝ 4—5 սմ-ից վոչ ցածր, իսկ անջրդի արոտներում՝ 3—4 սմ-ից վոչ ցածր: Ամենից ավելի ջատ կանաչ մասսա յեն տալիս, ավելի մեծ կայունութուն ունեն և ուժեղ վերաճում են բազմամյա

բույսերը: Մարգագետիններում այս բույսերի հազվադեպը հնարավորութունն է տալիս զաղափար կազմել կանաչ խոտի պաշարի մասին:

Բացի այդ, բազմամյա բույսերը տալիս են ամենից ավելի վաղ մայիսյան կեր: Արոտներում վորքան բակլայազգի և հացազգի բազմամյա բույսերը ջատ լինեն, այնքան ավելի ջատ կանաչ կեր կստացվի:

Բազմամյա բույսերից պետք է նշել յերեքնուկը, ապուլյոը, ազվեսապոչուկը, տիմոֆեյեվկան, մարգագետնային վարսակը, վորդուկը, ագրիտոը, կորնգանը, իշապուլյոը, անքիստ ցորնուկը և սիդախոտը:

Նկատի ունենալով այս պայմանները, տավարածը կարող է մոտավորապես հաշվի առնել արոտային կերի ֆոնդը և հաշվումներ կատարել արածեցման վորոշ շրջանի համար:

Այսպիսով, յեթե արոտի գործին վերաբերվենք այնպես անփուլթ, ինչպես մեզ մոտ են հաճախ վերաբերվում, գտնելով, վոր չարժե զբաղվել արոտները բարելավման գործով, քանի վոր նրանք չնայած վատ են, բայց տարածութեամբ ջատ են, ապա դրա հետևանքով կստացվի այնպիսի խառնաշփոթութուն, ինչպիսին առիթ է յեղել տեսնել Ուրալի և արևմտյան Սիբիրի անտառապահական շրջաններում: Այնտեղ արոտավայրերը տասնյակ կիլոմետրներ են կազմում, սակայն այս ամենը կամ հողաթմբերից են կազմված, կամ թե անտառների մեջ են գտնվում, այսինքն՝ ունեն վատ բուսակազմ, այնպես վոր կովին անհրաժեշտ է լինում որվա ընթացքում արոտից վերցնել 60 կգ-ից վոչ պակաս կանաչ կեր: Ահա սրա հետևանքով էլ ստացվում են ցածր կիթեր: Հաշվենք կոլտնտեսութեան անասունների միջին զխաքանակի արոտի մոտավոր պահանջը, նկատի ունենալով, վոր յեթե կիթ կովերի մի մասը ցամաքի, ապա նրանցից մի մասը կձնի:

Նախորի 100 կիթի կովի համար՝ հաշվելով մեկ կովի միջին կենդանի քաշը 400 կգ, կիթը որակաւ 10 լիտր, իսկ նրա օրական կերի պահանջը մոտ 40 կգ կանաչ (1—1,5 կերի միավոր լրացուցիչ ուժեղ կերի հետ), ընդունելով վոր 5—5,5 կգ կանաչը հաշվար է կերի 1 միավորի, 5 ամսվա արոտի ընթացքում ըն-

դամենը կպահանջվի մոտ 600 տոնն լավորակ կանաչ, 20 ցամաքած կովի համար 70 տոնն, 10 ստերլ կովին՝ 25 տոնն, 20 գլուխ յերկու տարեկան յերինջներին՝ 60 տոնն, յերեսուն գլուխ մեկ տարեկան հորթերին՝ 50 տոնն, մի տարեկանից ցածր 60 հորթին՝ 50 տոնն (ոժանդակ կերակրման դեպքում), 200 վոչխարին՝ մտադաշների հետ՝ 150 տոնն, 50 ձիուն (պարբերաբար) 50 տոնն, 100 խոզին՝ մատադաշների հետ՝ (ոժանդակ կերակրման դեպքում) 75 տոնն: Բնական լավ արոտի մեկ հեկտարից, արոտակտորները ձիշտ ու հերթականութեամբ արածեցնելու դեպքում, կարող ե ստացվել մոտ 6—7 տոնն արածեցված և նորից վերածած կանաչ: Նշանակում ե բնական լավ արոտից, կանոնավոր արածեցնելու դեպքում, այդպիսի մի նախրի համար բավական ե 200 հեկտար: Շանովի արոտները կարող են տալ 3 և նույնիսկ 4 անգամ ավելի շատ կանաչ, հետևապես զբանցից ավելի քիչ տարածութուն կպահանջվի: Իսկ վատ արոտները չեն տա 0,5 տոնն, կարող ե պատահել նույնիսկ՝ 0,25 տոնն, հետևապես զբանցից պետք ե 3 և նույնիսկ 4 անգամ ավելի շատ, քան բնական լավ արոտներից: Իհարկե, այդ արոտները ցանովի արոտների հետ համեմատել անգամ չի կարելի:

Ինչպես վոր աշորայի ծղոտի քանակով չի կարելի փոխարինել յերեքնուկի խոտի վորակը, այնպես ել վատորակ արոտների քանակով չես փոխարինի լավագույն արոտի վորակը, սակայն ամեն տեսակի կերի լավագույն վորակով կարելի յե և շատ ձեւնտու յե փոխարինել նրա քանակը: Նշանակում ե՝ հարկավոր ե առաջին հերթին դնել մեր արոտների վորակի բարձրացման հարցը:

### ՅԱՐԲԵՐ ԽՈՏԱՐՈՒՅՍԵՐԻ ԿԵՐԱՐԺԱՆԻՔԸ

Բույսերը սնունդն ստանում են հողից. վորպեսզի հողը կարողանա բույսի սնման համար բավական քանակի սննդարար նյութեր հավաքել, անհրաժեշտ ե յերկու հիմնական պայման՝ հողի բավականաչափ խոնավութուն, բայց վոչ չափից անց, և ողի ազատ մուտքը հողում:

Վողողվող մարգագետիններն ավելի յեն բավարարում այս

պայմաններին, վորովհետև սրանց հողն ավազա-կավային ե, փուխը և բավականաչափ խոնավ: Բայց յերբ այս մարգագետինները խիստ ցածր են ընկած և գետի վարարած ջրերը ճահճային են դարձնում, նրանք կորցնում են իրենց լավ հատկութունները, նրանց բուսակազմը վատանալով դառնում ե ամենացածր վորակի, ինչպիսին հատուկ ե մարգագետնային ճահճներին: Այս բանն առաջանում ե նրանից, վոր հողի մեջ կուտակված ջուրն արգելք ե հանդիսանում ողի ազատ մուտքին, վորից և խախտվում ե բույսի սննդաուսթյունը: Լավագույն բույսերը մեռնում են սննդի պակասից և միայն աճում են այսպես կոչված թթու հացազգիները (բոշխերը, կնյունները) ու մամուռները: Այս յերեկությունն առաջանում ե նաև բոլոր տեսակի ցածրադիր, խոնավ մարգագետիններում, վորտեղ ստորերկրյա ջրերը մակերեսին շատ մոտ են և նույնիսկ գուրս են գալիս հողի մակերեսը:

Հենց նման խոնավ տեղերում առաջանում են հողակոշտեր՝ անասունների կողմից արորվելու հետևանքով:

Գետերի բարձր ափերի, տափաստանների, անտառային բացատների չոր հոգերն ուղիղ հակապատկեր են հանդիսանում այդ խոնավ հողակտորների: Այստեղ հողի խոնավութան չափը կախված ե ձյան և անձրևային տեղումների քանակից: Ուստի խոտի բերքն ամբողջովին կախված ե կլիմայական պայմաններից. տուտ անձրևներ կլինեն — խոտ կլինի, անձրև չի լինի — խոտ ել չի լինի:

Հողի մեջ ողի մուտք գործելու վերաբերյալ պետք ե առել, վոր անջրղի մարգագետիններում բույսի աճման համար այդ անհրաժեշտ պայմանը շատ բազմազան ե և կախված ե նախ՝ հողին փխրութուն ավող հումաւի քանակից, յերկրորդ՝ ճմակալելուց: Ճմակալումը մարգագետնի հնանալու և այլասեռման նշան ե:

Իհարկե, ճմակալումն առաջանում ե նաև ցածրադիր մարգագետիններում և այստեղ նա, ի վերջո, չի ե անվում մամուռային շերտի, վորը զցում ե մարգագետինների կերային արժեքը: Իսկ ավելի բարձրադիր մարգագետիններում, անտառային բացատներում ճմակալելուն, մարգագետինների այլափոխման և հնանալուն գուրքնթաց սկսում են աճել մի խումբ գեղեցիկ մոլախոտեր՝

1009  
39894  
1017





Նկ. 1. Յիմաֆեյեվկա



Նկ. 2. Վողնախոտ

զանգածազիկը, մարգագետնային տերեփուկը, պուտը, խորդենին, յերիցուկը, մեխակը, անանուխը, շողավարդը, մկանականջը և այլն:

Մաղիկների գեղեցիկ ծածկոցն այդ վատ բուսակազմի, հետեաբար և մարգագետնի վատ դրուժյան առաջին նշանն է:

Այսպիսով, կանաչ խոտի վորակը հիմնականում կախված է հողի վիճակից, նրա խոնավութունից, ճմակալուծից, պնդանալուց և հողակոշտերի առաջացումից: Տեղում մեծացած տավարածնեքը սովորաբար խմանում են, թե վնր արտաք, վնր տարում (խոնավ, թն չորային) լավ կամ վատ բերք է տալիս: Սակայն, հաճախ բերքատվության մասին դատում են մարգագետնի կանաչով ծածկված լինելուց, չհասկանալով և հաշվի չառնելով, վոր նրա միջի բույսերի կեսը և նույնիսկ կեսից ավելին ցածրորակ, քիչ սնունդ պարունակող այլազգի բույսեր են:

Ի հարկե, այս այլազգի բույսերը հաշվառումից չպիտի հանել, վորովհետև մեր բնական, չբարելավվող արտոններում այլազգի բույսերը մեծ մասամբ կազմում են խոտի գլխավոր մասսան, իսկ կենդանիներն ուտում են և հասարակ գայլաթաթը, և ապիկոյը, և շղախոտը: Բայց մենք խնդիր ենք դնում այդ այ-



Նկ. 3. Կարմիր յերեքնուկ



Նկ. 4. Սպիտակ յերեքնուկ

լազգի բույսերը փոխարինել ավելի սննդարար և արտոնների խոտի վորակը բարձրացնող հացազգի և բակլայազգի բույսերով: Այդ պատճառով անհրաժեշտ է տալ այդ լավագույն մարգագետնային բույսերի թեկուղ համառոտ բնութագիրը:

Ինչպես ցույց է տալիս անունը, հացազգի բույսերը նման են հացահատիկներին. նրանք ունեն ծղտանման ցողուն՝ օնամեջ, ուղիղ և առանց ճյուղավորության, բայց հանգույցներով: Ցողունից սկիզբ են առնում բարակ տերևներ, իսկ վերևում ծաղիկներ՝ հասկի կամ հուրանի ձևով: Ողակածե հանգույցները ցուցանիչ են այսպես կոչված քաղցր հացազգիները թթու, ճահային բույսերից տարբերելու համար:

Լավագույն հացազգի խոտաբույսերը հետևյալներն են. ախոֆեյեվկան և ազվեսապոչը մի ծաղիահասկիկով՝ նման թավ պոչի, պոչուկը և ցորնուկը՝ վարսակի նման հասկով, վողնուկը, վորի հասկը նման է մի քանի կլոր հուրանների, սիդախոտը, ապյրասոր, վորոնց հասկերը նման են ցորենի հասկին, մարգագետնային ավելուկը, վորն ունի առանձին հուրաններից կազմված բաց հասկ



Նկ. 5. Կիկ



Նկ. 6. Աավույտ

Բակլայազդի կամ թիթեռնածաղկավոր խոտաբույսերն այսպես են կոչվում նրա համար, վոր սրանցից մի քանիսը բակլայի նման պտուղ են տալիս, իսկ մի քանիսի ծաղիկները հիշեցնում են նստած թիթեռը:

Սրանք յերկաերևանի յեն (փետրածն), ինչպես, որինակ՝ վիկան, կամ թե յերեք տերևանի, ինչպես, որինակ՝ յերեքնուկը: Այս բույսերից ավելի շատ հայտնի յեն յերեքնուկի տարբեր փոփոխակները՝ կարմիր յերեքնուկը, սպիտակ փավոյ յերեքնուկը, շվեդական յերեքնուկը՝ վարդագույն ծաղկե գլխիկով: Այնուհետև բոլորին հայտնի են վիկը և վոլուբիկի տարբեր փոփոխակները: Մի շարք տեղերում ցանում են աավույտ, կորնգան և սոյա, վորոնք մեծ կերային արժեք ունեն (Նկ. 6, 7): Թիթեռնածաղկավոր բույսերն ունենում են շատ խորը գնացող արմատներ, վորի հետևանքով

լավ են աճում նույնիսկ այնպիսի չոր հողերում, վորտեղ հողի խոնավությունը հացահատիկային բույսերին չի բավարարում:

Բացի դրանից, թիթեռնածաղկավոր բույսերն իրենց մեջ ավելի մեծ քանակությամբ սպիտակուցային և հանքային նյութեր են պարունակում, քան հացազգի բույսերը, սրա համար ել նրանք խոտի ցանքային խառնուրդի գլխավոր մասն են հանդիսանում:

Վերը թված հացազգի կամ թիթեռնածաղկավոր բույսերի առկայությունը մար-

գագետիններում կարող և մարգագետնի վորակի ցուցանիչ հանդիսանալ ինչքան այս բույսերից շատ կան, այնքան մարգագետինը լավորակ և: Չնայած վոր այս բույսերի մեծ մասը բազմամյա յեն, սակայն բարձիթող արված մարգագետիններում, այնուամենայնիվ, աստիճանաբար մոլախոտերի տակ խեղդվելով անհետանում են, վորի մասին մենք արդեն խոսեցինք և կխոսենք նաև արածեցնելու կարգը նկարագրելու ժամանակ:

Այսպիսով, ձանաչելով իր արոտավայրերը, տավարածն արոտներում պետք և կատարի հաշվառում ըստ բուսակազմի, այսինքն՝ ինչ տեսակի ու վորակի բույսեր են աճում նրա վրա,



Նկ. 7. Կորնգան

և վորքան կեր կարելի յե սպասել առանձին արտակտորներէից յերկու հերթ արածեցնելու դեպքում:

Այնուհետև հաշվով դուրս բերել ամբողջ նախրի կերի պահանջը, հաշվելով կթվող կովի համար, ինչպես ցույց ենք արել մոտավորապես 6000 կգ՝ ամառվա ընթացքում, կամ թե 1200 կգ ամսական, ստերջները և մի սարեկանների համար՝ 2500 կգ ամառվա ընթացքում, կամ թե 500 կգ ամսական, իսկ ցամաքներին՝ 3750 կգ ամառվա ընթացքում, կամ թե 750 կգ ամսական և այլն (տես էջ 15):


Արտաներում սննդաբար նյութերը չբավարարելու դեպքում տնկրաժելտ և ոժանդակ կեր տալ: Խտացրած կերերով լրացուցիչ կերակրումն անհրաժեշտ է բարձր կիթ տվող կովերի համար. իսկ ամբողջ նախրի լրացուցիչ կերակրումը տնտեսութունը խիստ ծանրաբեռնում է, ուստի պետք է այլ միջոց գտնել, այն է՝ բարելավել արտաները մի շարք միջոցառումներ գործադրելով:

### ԱՐՈՏԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Արտավայրերի բարելավման յեղանակները կոլտնտեսութունների և խորհրտնտեսութունների համար միանգամայն մատչելի չեն, սակայն բազմազան են և կախված են արտավայրերի հատկութուններից: Այս յեղանակների վորոշելը մտրգաբուծ մասնագետների գործն է:

Մենք այստեղ, վորպես ընդհանուր միջոցառումներ, կնշենք հետևյալը. խոնավ հովիտները չորացնել առուների միջոցով, կոճղերը կտրատել և հողը վարել, պարարտացնել մոխրով, կրով և արհեստական ֆոսֆորային պարարտանյութերով: Ճածրադիր տեղերը պետք է չորացնել մասնագետի ղեկավարությամբ, վորպեսզի հողը չափից դուրս չչորանա (նկ. 8):

Կան նաև թփուտներով և կոճղերով պատած այնպիսի հըսկայական տարածութուններ, վորոնք անգամ չորացման կարիք չեն զգում, այլ պահանջում են միայն թմբերի և կոճղերի կլորատում, կրկնահերկ և հանքային պարարտացում, թեկուզ մոխրով և կրով: Ցեթն հողի այս բարելավմանն ավելացվի նաև այնպիսի խոտերի յեթացանքը, ինչպիսին են՝ յերեքուկի, վիկի, տիմոֆեյիվայի, վարսակի, և վերը թված մի շարք այլ խոտաբույ-



Նկ. 8. Չորացնող առուների սխեմա

սերի ցանքը, այդ դեպքում՝ արտավայրի համար վոչ պիտանի հողերից (վորտեղ նախիրը սոված է մնում) կստացվեն կերով շատ հարուստ արտավայրեր: Չոր հողերում, անտառային բացուտներում և չոր մարգագետիններում, վորոնք ծածկված են ծաղկող մուխխոտերով, նույնպես պահանջվում է հողի յերեսի յերտի փխրեցում՝ հողի մեջ ողն ազատ մուտք գործելու և ձյան ու անձրևային ջրերը լավ ներծծվելու համար: Այստեղ նույնպես

հանքային պարարտացուժը և լավադույն կերաթոտերի լին-  
թացանքը կբարձրացնի բերքատվությունը: Նույնիսկ այն-  
պիսի հասարակ միջոցառումներ, ինչպես են՝ մարգագետնային  
ծանր փոցխով փոցխելը, մոխրով և կրով պարարտացնելը, կոճ-  
ղերի ու թփուտների հեռացնելը, դգալիորեն լավացնում և աչքա-  
թող արված մարգագետնային հողամասի բուսակազմը:

Մրա համար ել Կուսակցութեան Կենտկոմի հունիսյան պլե-  
նումը վերոգեց՝ «պարավորեցնել ԽՍՀՄ-ի ՀԺԿ-ին 1934 թ.  
մթերել և մարգագետիններում ու արոտներում ցանել վայրի խո-  
տերի 2000 ցենտներից վոչ պակաս սերմ: Նույն այս նպատակով  
պարտավորեցնել շրջհողաժիններին և կոլտնտեսություններին  
լայն կերպով ծավալել վայրի խոտաբույսերի սերմերի հավաք՝  
առանձնացելով սրա համար հատուկ հողամասեր 34 թ. խոտ-  
հարքի տարածություններին»:

Մեր մարգաբույսերը գիտեն, վոր քիչ չեն գտնվի նայնպի-  
սի մարգագետնային տարածություններ, վորոնցից հեշտութեամբ  
և առանց խոտհարքի ընդհանուր ֆոնդին կպչելու, կարելի յե  
յերեքնուկի, սիդակոտի և այլ լավագույն բույսերի հողակտորներ  
առանձնացնել սերմ ստանալու համար:

Պետք և ասել, վոր արոտների մշակման միջոցով վոչ միայն  
բարձրանում և նրանց կերարժեքը, այլև անասունները գերծ են  
մնում արոտավայրի շատ հիվանդություններից, ինչպես,  
որինակ պերոպլազմոզից, մի շարք ճիճվային հիվանդություննե-  
րից, թուճավոր խոտերով թուճավորվելուց և այլն:

## ԱՐՈՏՆԵՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՅԵՎ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Տավարածը պետք և խմանա թե արոտավայրերի ինչպիսի  
հողակտորների վրա առատութեամբ աճում են մոլախոտեր ու  
թուճավոր բույսեր, թե վոր հողակտորների վրա կան ճահիճներ  
և ճլիւղտներ, վոր արոտամասերն են ծածկված թփուտներով և  
վորակի են շատ լինում անտառային բուսեր ու տիգեր: Բոլորին  
պարզ և թուճավոր բույսերից օտաջացող վտանգը, իսկ այն մա-

սին, թե ինչպես պետք և պաշտպանել նախիրը թուճավոր բույ-  
սերով թուճավորվելուց, նկարագրված և այս հուշատետրի հետա-  
գա հատուկ գլխում: Բայց, ի հարկե, շատ ավելի ճիշտ և կարե-  
վոր և արոտավայրն ազատել մոլախոտերից ու թուճավոր բույ-  
սերից, քան թե անընդհատ պտտել սրանց շուրջը և մշտապես  
վախենալ: Թե վորեւ անասուն կարող և ազահարար թուճավոր  
բույս ուտել ու չլսավել:

Ամենավտանգավոր և արոտավայրերում մշտապես հանդի-  
պող թուճավոր բույսերի ճանաչելը նկարագրված և նաև թու-  
նավորման վերաբերյալ գլխում:

Մոլախոտերի և թուճավոր բույսերի հեռացման ամենալավ  
միջոցն արտաի կուլտուրականացումն է: Սակայն դեպքեր են լի-  
նում, յիրք կուլտուրական մարգագետիններում անգամ թուճա-  
վոր բույսեր են յերևան գալիս: Սա առաջանում և հետևյա  
կերպ. բավական և, վոր վորեւ արոտամասում բանի վորեւ թու-  
նավոր կամ չուտվող մոլախոտ, նա սկսում և ավելի արագ  
տարածվել, քան լավ բույսերը, վորովհետև կենդանիները, ի հար-  
դի, ուտում են լավ բույսերը, իսկ թուճավոր բույսն առանց  
վորեւ խոչընդոտի սկսում և ծաղկել ու սերմ տալ: Այստեղից և  
հետեվում և, վոր պետք և թուճավոր բույսերի և մոլախոտերի  
դեմ պայքարել, այսինքն՝ հնձել մինչ նրանց ծաղկելը, կույսեր  
կազմել և այլեր:

Այսպիսով, հաշվի առնելով թուճավոր բուսականութեամբ  
հարուստ հողամասերը, պետք և գարնանը, հենց վոր թուճավոր  
բույսերն սկսեն աճել, կազմակերպել ամենից ավելի վտանգավոր  
հողամասերի բույսերի քողը: Ի հարկե, թուճավոր բույսերի մեծ մա-  
սը բողմամյա յեն, այդ պատճառով և հնձելուց հետո նրանք  
սկսում են արմատից նորից աճել, բայց համենայն դեպս նրանք  
այլևս մյուս արոտամասերի վրա չեն տարածվի:

Ճահիճներն ու ճլիւղտներն իրենց վատ ջրով վտանգավոր  
են ստամոքսա-աղիքային և վարակիչ հիվանդությունների տե-  
սակետից: Հաղվազյուտ չեն դեպքեր, յերբ անասունները վա-  
սվել կամ նույնիսկ մահացել են ճահճուտ տեղերում:

Այս բոլորով հանդերձ այսպիսի վայրերում անասուններն

իրենց ստամոքսը լցնելով ցածրարժեք, անարակ կերով, համարյա թե նրանցից վոչ մի սնունդ չեն ստանում:

Պարզ է, վոր կարելի չե ազատվել այսպիսի վտանգներից հողերի չորացման միջոցով, իսկ յեթե դա ինչ-ինչ պատճառներով անհնար է, այդ դեպքում մեռւմ է միայն խիստ հետեվել, վոր վոչ մի դեպքում վոչ արածեցնելու և վոչ էլ ջուր խմելու ժամանակ անասուններն այդ տեղերին չմտտենան:

Մացառապատ տեղերը վոչ միայն լավ արոտավայրերից մեծ տարածութուններ են խլում, այլ և կարող են անասուններին ֆլաս պատճառել:

Հայտնի չե, վոր թփերը տիգերի ապաստարան են հանդիսանում, իսկ տիգերից կարող է տարածվել պիրուպլազմոզ հիվանդութունը: Բացի դրանից, թփերն իրենց տակ կարող են թագցրել սատկած անասունների լեչեր ու ամեն տեսակ անմաքրութուններ, վորոնք և կարող են վարակել և ճիճվային հիվանդութունների աղբյուր դառնալ. բացի այդ, նրանք կարող են ապաստարան դառնալ բոլոր տեսակի թռչող միջատների, նույնիսկ բուսերի համար:

Այդ թփերը հողի վրա սովեր գցելով, խոչընդոտ են հանդիսանում լավագույն բույսերի աճմանն ու նպաստում են մորախոտերի զարգանալուն: Թփուտների առկայութան պեպքում հողամասերի բարելավումն անհնարին է: Դրա համար էլ արոտավայրերի թփերը պետք է կտրտել, արմատահան անել ու հեռացնել:

## ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԶՐԵԼԱՏԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարզագետնային բույսերը պարունակում են մոտ 80% ջուր, հետևաբար յեթե կովը 50 կիլոգրամ կանաչ խոտ ուտի, ապա նա կստանա միայն 10 կգ չոր կեր և 40 կգ ջուր, այսինքն՝ մոտ 3 դույլ ջուր: Իսկ յեթե նա ուտի 35 կիլոգրամ կանաչ կեր, այս դեպքում կստանա մոտ 2 դույլ ջուր:

Սակայն կովին որվա ընթացքում անհրաժեշտ է 5—6 դույլ ջուր: Զրի պակասութունն անդրադառնում է անասունի առողջության և կաթնատվության վրա: Սրա համար էլ չի կարելի

հույս դնել, ինչպես յերբեմն արտահայտվում են, թե թարժ կանաչ կերի մեջ բավարար չափով ջուր կա: Շոգ օրերին կանաչի մեջ յեղածի քանակը նույնիսկ բոլորովին չի կարելի նկատի ունենալ, վորովհետև ջոգ ժամանակ կովը նույնիսկ 6 դույլից ավելի ջուր կխմի:

Յեթե արոտավայրում կամ սրանց մոտիկ տեղերում լավ գետակներ են հասում, կամ յեթե լավ, մաքուր լճեր են գտնվում, այս դեպքում ջրելատեղի հարցն ինքնին լուծվում է: Պետք միայն հ հոգալ ջրաբեր ճեշտ կարգի պահպանման մասին: Սակայն շատ արոտավայրեր իրենց մոտակայքում առուներ ու լճեր չունեն: Նման շատ դեպքերում վորպես ջրելատեղ ոգտագործում են բոլոր տեսակի կանգնած ջրերը, լճակները, ճահճուտները և այլն:

Պետք է վորոշակի ասել, վոր այդպիսի ջրելատեղերը հաճախ վարակիչ և ճիճվային հիվանդութունների գլխավոր աղբյուրներ են հանդիսանում: Զրելատեղի կազմակերպումը մեր կոյտնտեսութունների և խորհրտեստեթյունների նախրի պահպանման գլխավոր խնդիրներից մեկն է: Ձի կարելի այս խնդրի հաջող լուծման համար խնայել վոչ աշխատանք և վոչ էլ միջոցներ: Իսկ վճարող և լինչպիսի ջուր պետք է վորոնենք կենդանիների ջրելու համար և վճարյաին պետք է խոտանենք:

## ԶՐՉՈՐԱՅԻՆ ԶՐԵԼԱՏԵՂԵՐ

Ամենալավ ջուրը ստորերկրյա, յենթահողային ջուրն է, վոր կարելի չե ստանալ աղբյուրներից և ջրհորներից: Սակայն այս դեպքում ջրհորները պետք է փորված լինեն 4 մետրի չափ մինչ ջրի մակերեսը: Այնուամենայնիվ այսպիսի խորության դեպքում անգամ անհրաժեշտ է ջրհորը պատրաստել ախպես, վոր նրա մեջ գետնի մակերեսից ջուր չհոսի: Այդ նպատակի համար ջրհորի կտրվածքը պետք է ամուր լինի և հողի մակերեսից բարձր: Ամենից լավ կլինի ջրհորի վերին մասը զինել ցեմենտից: Յեթե դա անհնար է, ապա կտրվածքի վերին մասը՝ 2—2,5 մետր՝ յերկտակ կառուցել: Այսպիսով, ջրհորի ներքին կտրվածքը կլինի համատարած մինչև անջրանցիկ շերտը, իսկ յերկբորդ՝ արտաքին

կարվածքը մոտ 3 մետր գետնի մեջ կլինի ու գետնի մակերեսից 0,5 մետր բարձր: Այս դեպքում յերկրորդ կարվածքը կարելի չե՛ ձյութել և ձյութած տորֆի վրա գերան դնել: Այս բոլորով հանդերձ՝ ջրհորից 20 մետր հեռավորության սահմանում չպետք կեղտի կուտակում լինի: Ամենից լավն այն է, յերբ ջրհորի մեջ դրված է պոմպ՝ ջուր քաշելու համար և վերևից ջրհորը ծածկված է: Ընդհանրապես պետք է հետևել ջրհորի մաքրությանը:

Պետք է նաև հետևել, վոր բոլոր տեսակի հիվանդությունների գեպքում թույլ չտրվի անասուններին ընդհանուր տաշտին մոտենալու, այլ առանձին ջրվեժն և վոչ մի ոտար անասուն կուտեստեսության ընդհանուր ջրատաշտակից ջուր չխմի: Այս նպատակով, այլև ջրելուց հետո տաշտակը չորացնելու համար պետք է այն շուռ տալ կամ թե նրա վրա ունենալ կողպեքով կափարիչ և ջրի ֆնացորդը թափելուց հետո կողպել:

Այնտեղ, վորտեղ ստորերկրյա ջրերը շատ խոր են գտնվում, հարկ է լինում այսպես կոչված արտեզյան ջրհորներ փորել:

Ջրհորի ջրի քանակը և սպառվելուց հետո նրա վերստին կուտակման արագությունը կարելի չե՛ վորոշել հեռեկալ կերպ. դույլը չոր պարանով իջեցվում է մինչև ջրհորի հատակը. պարանի թրջված մասով նշվում է ջրի խորությունը՝ ասենք 6 մետր, այնուհետև 20 դույլ ջուր են դատարկում և նորից չոր պարանով դույլն իջեցնում են մինչև հորի հատակը: Չափելով պարանի թրջված մասը, ստանում ենք որինակ՝ 5,5 մետր: Կընշանակի 0,5 մետրի մեջ կա 20 դույլ ջուր, իսկ 6 մետրի մեջ՝ 240 դույլ: Ապա տարբեր ժամկետներում կարելի չե՛ իջեցնել դույլը մինչև հատակը, մինչև այն ժամանակ, յերբ ջուրը կուտակվելով կհասնի իր նախկին մակարդակին, վորպեսզի վորոշվի կուտակման արագությունը: Ինչ վերաբերում է ջրի վորակին, այն պարզ կերպով կարելի չե՛ վորոշել գույնով, հոտով և համով: Ջուրը պետք է լինի թափանցիկ և անգույն, առանց դեղնության և պղտորության: Ջուրը չպետք է նեխած լինի և վոչ էլ ամոնյակի հոտ ունենա: Հորի ջուրը չպետք է ունենա աղի կամ դառն համ: Պետք է վորոշել վոչ միայն ջրհորների, այլև բոլոր տեսակի ջրամբարների խմելու ջրի վորակը:


### ԲԱՑ ԶՐԵԼԱՏԵԼԵՐԻ ԽՆԱՄԲԸ

Այն տեղերում, վորտեղ ստորերկրյա ջրերն արդեն յեւք են գտել առունների կամ աղբյուրների ձևով, կարելի չե՛ հոսող լճակներ կառուցել: Ինձ վիճակվել է կոթստեսություններից մեկում այդպիսի մի լճակ տեսնել, վոր պատած էր ամուր ցանկապատով և վոչ վորքի թույլ չե՛ր տրվու: Եղտեղից ջուր վերցնել. թույլ էր տրվում վերցնել միայն լճակից փողրակով դուրս յեղող ջրից: Լճակի հատակը և ափերը լցված էին մանրախճով: Փողրակի միջոցով լճակից դուրս յեղող ջուրը մաքուր էր, ինչպես աղբյուրի ջուրը:

Նախրի և առանձին անասունների ամառվա ջրելատեղը կանոնավոր պահպանելու համար հատուկ հոգատարություն է պահանջվում: Անմիջականորին ջրամբարից խմելու համար անհրաժեշտ է ընտրել թե՛ք ափ, բայց վոչ լճացած և տղմոտ. այս տեղերում պետք է մանրախիճ լցնել, իսկ վորտեղ կարելի չե՛ քարով սալահատակել: Ջրի շուրջը ցանկապատ պետք է կառուցել այն հաշվով, վոր անասունը ջուր խմելու համար դուռնչն ազատ ջրի մեջ հասցնել կարողանա, բայց վոչ թե ամբողջովին ջրի մեջ մտնի (նկ. 9): Անասուններին ջրի մեջ անտեղի չպետք է պահել, վորպեսզի սրանք իրենց արտաթորությամբ չկեղտոտեն ջուրը և ափերը (նկ. 10): Ափերը պետք է մաքրել: Յեթե բնակելի վայրերից, գործարաններից, սպանդանոցից գետի մեջ ջուր է թափվում, այդ դեպքում ջրելատեղը պետք է սարքել այդ վայրերից բարձր տեղում այսինքն՝ գետի հոսանքից վերև:

### ԱՆՊԵՏԲ ԶՐԵԼԱՏԵԼԵՐ

Իրրև ջրելատեղ ծառայող կանգնած լճակները, մանավանդ յերբ նրանց մեջ գոմից, բնակելի վայրից և գոմաղբի ու կեղտի փոսից ջուր է թափվում, անհրաժեշտ է անպայման խոտանել: Այդպիսի լճակները պետք է ցանկապատել և արգելիլ անասունների մուտքը: Կանգնած առունները, առվակներն ու արոտավայրերում գտնվող ջրափոսերը պետք է ցածրացնել, կամ նույն-



Նկ. 9. Ջրելատեղի ցանկապտտելը



Նկ. 10. Ջրելատեղի կեղտավերն անասունների կողմից

պես ցանկապտտել, վոր անասունները չմտնեն, կամ լցնել 1—2 դուլ մազութ կամ կուպր, վորպեսզի անասունն ալտեղից ջուր չխմի:

Նեխած և կանգնած ճահրճներում անասուններին ջրելը անթույլատրելի յե:

Անուշադրության մատնված, կեղտոտ ջրհորները շատ քիչ րանով են տարբերվում կեղտոտ ջրափոսերից, հետևաբար նման ջրհորների ջուրն էլ անպետք և խմելու համար: Ջրհորների վրա պետք և սահմանել հսկողություն և խնամք:

Արտավայրում անասուններին ջրելու կարգը մանրամասն նկարագրված և արածեցնելու կարգի վերաբերյալ գլխում:

Սակայն արոտավայրերի պլանը կազմելիս անհրաժեշտ և հաջվի առնել ջրելատեղերի ինչպես գոյություն ունեցող պայմանները, նույնպես և նրա բարելավման հնարավորությունները՝ ջրհորներ փորելու, մանր առուններ անցկացնելու (վորոնք ամառը չորանալիս առաջացնում են կանգնած ջրափոսեր), պատվարներ (թմբեր) սարքելու միջոցով, ջուրը դուրս գալու համար անցք թողնելով:

Պետք և այս ամենը հաջվի առնել և լավ կազմակերպել անասունների պահպանման վերաբերյալ այս բոլոր կարևորագույն ձեռնարկումների կենսագործման աշխատանքը: Ջրելատեղերը պետք և ընկած լինեն արոտավայրերի կենտրոնում, վորպեսզի անասուններին հերթական հոգամասի վրա կանոնավոր արածեցնելիս միշտ հարմար լինի ոգտվել ջրից:

Այս բանին կարելի յե հասնել արածեցման համապատասխան պլանի միջոցով, վորի մասին խոսվում և հետագայում:

### ԱՐՈՏԱՎԱՅՐԻ ԿԵՆՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես մենք արդեն ասել ենք, մեր մի շարք գյուղերը չբր-ջապատող հողակոշտերից և վոչ պիտանի հողերից կարելի յե դատել, վոր արոտավայրերը միշտ յեղել են գյուղերին մոտ, բայց տրորելով և քայքայելով այդ հողերը, մարդիկ միջոցներ ձեռք չեյին առնում այդպիսիների վերականգնման համար և անասուններին արածեցնելով գյուղից ավելի ու ավելի հեռու յեն գնա-

ցելու նախկին Ուրալի մարզի, Սիբիրի և հյուսիսային չերկրների վորոշ տեղերում արտադրվող գյուղից 10—15 կիլոմետր հեռացել է։ Այսպիսի հեռավորություն պատճառով վորոշ տնտեսություններ արտադրարարներում անասունների համար շինել են ծածկով աղալներ, իսկ տավարածների համար՝ բնակատեղ։ Սա միանգամայն ճիշտ է։ Իսկ շատ տնտեսություններ անասունները քրում են 5—10 կիլոմետր հեռու գտնվող արոտները և տուն են վերադարձնում միայն գիշերելու համար։ Այս ձևով կաթնատու կովերին ամեն օր արոտ տանել բերելիս նրանք կիրի զգալի մասը ծախսում են մկանների աշխատանքի վրա և բացի այդ, 2—3 ժամով կրճատվում են արածեցման ժամանակը։ Այդ պատճառով վորոշ պրտանի հողերը մշակման միջոցով բարելավելու ճանապարհով կարելի չե ունենալ արոտատեղեր, վորոնք հարմար դասավորված լինեն թե ջրելատեղին և թե ֆերմային ու այլ տնտեսական շենքերին՝ մոտիկ լինելու տեսակետից։ Սա արոտատեղերը տնտեսություններ մոտեցնելու ամենաճիշտ և ամենապատշաճ միջոցն է։ Իսկ յեթե այս բանը կատարելը մոտ ժամանակամիջոցում ինչ-ինչ պատճառով անհնար է, և արոտավայրերը տնտեսությունից 5—10 կիլոմետր հեռու լինելու մեջ, այդ դեպքում անհրաժեշտ է այդ հեռու ընկած արոտավայրերում չոր հողատեղերի վրա պատրաստել ծածկով աղալներ, վորտեղ նախիրը կարողանա գիշերել ամբողջ արածեցման ժամանակաշրջանում։ Աղալները պետք է ամեն օր մաքրել դոմազրից, վերջինս պետք է ոգտագործել դաշտերը պարարտացնելու համար։

Աղալներում յեղած գոմաղը հովաքում, լցնում են դոմազրահորի մեջ այնպես, ինչպես անասունների մյուս բոլոր տեսակի շենքերից են հավաքում։

Համենայն դեպս հեռու ընկած և ցրված արոտավայրերն այնպիսի անհարմարություն են ստեղծում և՛ կիրի, և՛ տնտեսական տեսակետից, վոր պետք է բոլոր ուժերը դործարել անցնելու պրանային արածեցման՝ մշակման միջոցով բարելավված արոտներում։

### ԱՐԱԾԵՑՄԱՆ ՊԼԱՆԻ ԿԱԶՄԵԼԸ

Արածեցման պլանավորումը խիստ կարևոր պայման է թե արոտավայրում յեղած կերի ռացիոնալ և լրիվ ոգտագործման և թե անասունների առողջության ավելի քան հուսալի պահովություն համար։ Պլանավորումը պետք է կատարվի կոլեկտիվ ձևով՝ տավարածների բրիգադի, անասնաբուժի, դաշտավարի և տնտեսություն այլ պատասխանատու անձանց մասնակցությամբ, վորպեսզի հաշվի առնվեն արածեցնելու ամբողջ ժամանակաշրջանում առողջ և կուշտ կերակրելու բոլոր հիմնական պայմանները։

Պլանավորման առաջին հարցն է սահմանել տարբեր տեսակի անասունների համար անհրաժեշտ արոտամասերի տարածությունը, այլև այնպիսի հողամասերի, վորոնք պրտանի յեն տավարի, վոչխարների և ձիերի միատեղ արածեցման համար։ Պետք է ասել, վոր այս միատեղ արածեցումն ունի հետևյալ դրական կողմերը. առաջին՝ լրիվ ոգտագործվում է բուսականը, քանի վոր անասունների տարբեր տեսակներ ուտում են բույսերի տարբեր տեսակները, յերկրորդ՝ թեթևանում է տավարածի բեռնվածությունը և հեղտանում է արածեցնելու վորջ պլանի կատարումը։

Բայց այսպիսի միատեղ արածեցնելը հնարավոր է միայն միատարր ընկան կամ թե կուլտուրական արոտավայրերի պայմաններում։ Իսկ յերբ արոտավայրերը տարածված են թե չոր հողերում, թե ցածր վայրերում, թե անտառներում ու բլուրների վրա, այդ դեպքում անհրաժեշտ է տարբեր տեսակի անասունների համար հատկացնել տարբեր հողամասեր։ Վոչխարների համար պահանջվում են չորավուն հողամասեր, բոտ վորում վոչխարները կարող են բավարարվել ավելի չոր և մանր բուսականությամբ։ Ճիշտ այդպես էլ չորավուն հողերն ավելի հարմար են նաև ձիերի համար։ Իսկ տավարի համար կարելի չե հատկացնել ավելի փարթամ և հյութալի բուսականություն ունեցող ցածրադիր արոտները։

Հատուկ խողարուծական տնտեսություններում խողերին արածեցնելը պահանջում է աշխատանքի կազմակերպման բոլորովին առանձին ձև, խողերին, ծծից կտրած գոջիներին, ինչպես

և բոլոր մատղաշներին պետք է փոխադրել հատուկ արոտային հողակտորներ Վրա՝ ճամբարային դասավորութեամբ: Խոզերի մատղաշներին այս ձևի խնամքն ու կերակրումը շատ լավ արդյունք է տալիս:

Հորթերի համար պետք է հատկացվեն տնտեսութեան ամենից ավելի մոտ գտնվող առանձին չոր, լավ արոտային հողակտորներ:

Պլանավորման յերկրորդ հարցը՝ արոտավայրերը հերթով ոգտագործելու նպատակով՝ մասերի բաժանելն է: Այստեղ նորից հարկ է լինում կրկնել, վոր կուլտուրական արոտավայրի առկայութեան դեպքում այս հարցը լուծվում է հեշտ և պարզ, իսկ արոտավայրերը հողափոխերի, անտառների, կիրճերի և ցածրավայրերի միջև ցրված լինելու դեպքում, այս հարցի լուծումը շատ է դժվարանում: Մինչդեռ այս հարցը պետք է անպայման լուծել, և վորքան արոտավայրն աղքատ է, այնքան ավելի կարևոր կլինի այս հարցի լուծումը, քանի վոր հերթական հողակտորներով արածեցնելն զգալի չափով բարձրացնում է արոտավայրերի ընդհանուր կերարժեքը:

Ինչպես արդեն ասված է, Հյուսիսային յերկրի «Մալոչնոյե» տոհմաբուծական տնտեսութեանում արոտավայրերի վրա հերթականորեն արածեցնելն ստուգելիս, անտառային արոտներն արոտի սեզոնում 34% -ով, իսկ դաշտային արոտները 15% -ով ավելի բերք են տվել, քան անսխառն արածեցնելու դեպքում:

Արոտավայրերը հերթով ոգտագործելու համար նրանց ըստ հողակտորների բաշխելիս պետք է հաշվի առնել հետևյալը. առաջին՝ յուրաքանչյուր հողամասի մեծութեանը համաձայն նախրի կազմի. յերկրորդ՝ հողամասի կերի հատկութեաններն ու բույսի վորակը: Այս հաշվառումն անհրաժեշտ է հողամասերի մեծութեանը, ինչպես նաև յուրաքանչյուր արոտատեղում արածեցնելու ժամկետն ու տեղութեանը վորոշելու համար: Վերջումն է վորպես որինակ հետևյալ դեպքը. նախրի 200 գլուխ կթան կովերին, ստերջներին ու ցլեկներին 6 որ արածեցնելու համար պետք է 35 տոնն կանաչ, իսկ մեր արոտավայրերը՝ կանաչի միջակ աճման դեպքում՝ մեկ հեկտարին տալիս են 2-ից մինչև 4

տոնն կանաչ: Կնշանակի 200 գլուխ ունեցող նախրին պետք է մոտավորապես 12 հեկտար հերթական հողամաս: Յեթե առաջին արածեցված արոտակտորը մի ամսից հետո բավական կվերածի, իսկ 6 որից հետո էլ յերկրորդ արոտակտորը կվերածի, 6 որ հետո էլ՝ յերրորդ արոտակտորը և այսպես շարունակաբար, այդ դեպքում պարզ է, վոր մենք պետք է ունենանք 5 արոտակտոր, յուրաքանչյուրը 12 հեկտար մեծութեամբ, վորոնք մենք կոգտագործենք հերթականորեն՝ 6 որը մեկ անգամ փոխելով: Բուսակազմն ավելի թույլ լինելու դեպքում գուցե ավելի խոշոր արոտակտորների կարիք զգացվի. որինակ 15—20 հեկտար և գուցե վոչ թե 5, այլ ավելի թվով արոտակտորներ, վորպեսզի ոգտագործված արոտներն ավելի շատ ժամանակ ունենան կազուրկելու ու վերածելու համար: Որինակ, նույն «Մալոչնոյե» տոհմատնտեսութեանը փորձական դիտումներով պարզել է, վոր միջակ մարգագետնային արոտներում լավ է մեկ հեկտարի վրա հաշվել 12—14 գլուխ անասուն. մոտավորապես նույնն է ստացվում նաև մեր հաշվումներով: Բացի այդ, պարզվել է, վոր արոտի սկզբնական շրջանում արդեն արածեցրած հողամասը լավ վերածում է 20—24 որ հետո, իսկ արոտի վերջին շրջանում՝ 30—36 որից: Նշանակում է, վոր յուրաքանչյուր արոտակտորին հարկ լեղածին չափ հանգիստ տալու համար պետք է ունենալ 5—6 հերթափոխ հողակտոր, ինչպես մենք արդեն ասել ենք: Այս ամենը պետք է հաշվի առնել արոտի հերթերը վորոշելու ժամանակ: Նույն կերպ էլ պետք է հաշվի առնել առանձին արոտակտորների բուսականութեան վորակը, վորպեսզի սրանք համարակալվեն ըստ հասունացման աստիճանի՝ առաջին, յերկրորդ, յերրորդ, չորրորդ և հինգերորդ հերթին արածեցնելու համար: Արածեցումը պետք է սկսել ամենից ավելի պատրաստի՝ աճած կտորներից: Նման ձևով պլանավորվում է տարբեր տեսակի կենդանիների արածեցումը, յեթե նրանք առանձին են արածում, և մատղաշներին:

Ամենից ավելի պատրաստի՝ առաջին արոտակտորների ընտրութեան ժամանակ պետք է շրջահայաց լինել, վորովհետև թաց փուխը հողերում արածեցնելիս մատղաջ բույսերի դեռևս

չամրացած արմատները արորվելուց պոկվում- դուրս են գալիս. Առաջին սկզբնական արածեցման համար պետք է ընտրել բլուր- ների արևահայաց լանջերը, վորտեղ ավելի շուտ են բույսերը ծլում: Առաջին մի քանի որն արածեցնելու համար կարելի յե ոգտագործել բոլոր ամենից ավելի պատրաստի արոտակտորները, միայն յերկար կանգ չառնել նրանց վրա; վորպեսզի շատ չտոր- վեն: Հետո արդեն կարելի յե անցնել ավելի հասուն արոտատե- ղերին և ապա սկսել պլանային արածեցումը, ըստ վորում այդ պլանային արածեցման առաջին որերն այնուամենայնիվ չպետք է հասցնել մինչև լրիվ ժամկետը՝ 6 որ, այլ յուրաքանչյուր արո- տամասում արոտի շրջանը կրճատել 2—3 որով: Արածեցման սկզբնական շրջանում արոտի ոգտագործման գործում այդ գզու- շուկոունը խիստ կարևոր է տավարածի համար: Հերթով ոգտա- գործվելիք արոտատեղերի սահմանները պետք է նշված լինեն վորևե նշանով՝ սյուներով, բրերով, հողակույտերով և այլն:

Պլանավորման լուրջ խնդիրներից է նաև ջրելատեղի ոգտա- գործումը: Անհրաժեշտ է արածեցումն այնպես պլանավորել, վոր ջրին մոտենալը դժվար չլինի և ջրելատեղն արոտատեղից հեռու ընդամ մի յեղք կա՝ հեռու ընկած արոտավայրերի հողակտորներում ջրհորներ վորելը: Արածեցման պլանային հարցերի թվում կարող է լինել նաև ծանրած կովերն (ծնելու վերջին ամսում) ու ցուլիկներն առանձին արածեցնելու հարցը: Բավարար տարածության արոտ լինելու դեպքում, այս կենդանիների համար հնարավոր է առանձին հողակտորներ հատկացնել, բայց սա էլ կապված է տավարածների կաղերի ավելացման հետ: Յեթե այդ հնարավոր չէ կատարել, այս դեպքում պետք է հարկադրված կերպով հղիներին թողնել ընդհանուր նախրի հետ, բայց հատուկ խմբով և հատուկ հսկո- ղության տակ, իսկ հղիության վերջին որերին կերակրել գոմում և զրոսանքի հանել անտեսության շուրջը:

Աչքաթող արված արոտավայրերի տարբեր հողակտորներում, կերի վորակի տեսակետից բազմազանություն լինելու կապակցու- թյամբ, այնպիսի դրություն կարող է ստեղծվել, վոր մի քանի հողա- մասեր, ինչքան էլ նրանց տարածությունն ավելացնենք, միևնույն

է, ցածր վորակի պատճառով սնունդ քիչ կտան: Պարզ է, վոր այս- տեղ արածեցումը պլանավորելու ժամանակ պետք է լուծել նաև նախրի ոժանդակ կերակրման խնդիրը:

Արոտի պլանը կազմելիս հարկավոր է վոչ միայն հաշվի առնել կոլտնտեսության և Ֆերմայի հանրայնացված նախրի քա- նակը, այլև կոլտնտեսականների ու աջխատավոր մենատնտես- ների անհատական ոգտագործման տակ գտնվող անասունների քանակը: Պետք է հիշել, վոր սոցիալիստական անտեսության աճի ու զարգացման համար յուրաքանչյուր արդյունավետ անասուն պիտանի յե, քանի վոր մասնակցում է յուզի, մսի մթերման պլանի կատարմանը, և յուրաքանչյուր կոլտնտեսականի ունե- րության ընդհանուր վերելքին:

Պետք է հիշել ընկ. Ստալինի խոսքերն այն մասին, թե «մենատնտեսներ կան և նրանց չի կարելի հաշվից դուրս գցել, վորովհետև նրանք մեր վաղվա կոլտնտեսականներն են»:

## ԱՐՈՏՆԵՐԸ ՅՈՒՐԱՎԱՆՉՅՈՒՐ ՏԱՐԻ ՆԱԽԱՂԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ամեն տարի, վաղ գարնանը, արոտավայրերը պետք է առողջապահական վիճակում դնել: Սա նշանակում է, վոր արո- տավայրերում, ուղեմասերում, կացատեղերում և ջրելատեղե- րում անասունների առողջությանը վոչ մի վտանգ չպիտի սպա- նա: Իսկ ինչ բան կարող է վտանգավոր լինել: Ամենից առաջ և ամենից ավելի բոլոր տեսակի լեչերը և նրանց մնացորդները:

Սոշոր վտանգ է նաև անասնազերեղմանոցների անկանոն լինելը, այլև այն առանձին գերեզմանները, վորտեղ յերբեմն դիակները թաղում են, վորպեսզի գերեզմանոց փոխադրելու համար ավելորդ չարչարանք չկրեն:

Վտանգավոր են նաև կանգնած ջրերը, կեղտոտ ջրափոսերը, անմաքուր առուները և նման ազոտոտ ջրամբարները: Ապա վը- տանգավոր են նաև սրածայր առարկաները, ինչպես, որինակ՝ կոտրած շերը, փշալարերը, մոլախոտերով հարուստ մացառուա- ները, ճահճուտները, գոմաղբով կեղտոտված կացատեղերը:

Ահա այն հիմնական կետերը, վորոնց վրա գարնանային նախապատրաստման շրջանում պետք է ամենալուրջ ուշադրութիւն դարձնել:


## ԼԵՇԵՐԻ ՀԱՎԱՔԵԼԸ

Շատ դեպքերում սատկած կովերին և ձիերին թաղում են, իսկ գառների կամ գոջիների դիակը շարտում են ձորի կամ մուրախոտների մեջ: Իսկ սատկած ճագարների, հավերի և մյուս մանր կենդանիների վրա բոլորովին ուշադրութիւն չեն դարձնում:

Շներն այդ լեշերը քաշքշում են և՛ արոտավայրերով, և՛ նրա ուղեմասերով. չհավաքված լեշերի թափթփվածքները գարնանային անձրևներն ու ջրերը քշում-տանում են առուներով և հովիտներով, մինչդեռ պետք է զխտնալ, վոր վոչ միայն վարակված ձիերի ու կովերի դիակների թափթփվածքներից և ֆուցորդներից, այլև բոլոր տեսակի լեշերից կարող են տարածվել այնպիսի մանրէներ, վորոնք անասունների հիվանդութեան պատճառ են դառնում:

Պետք է զխտնալ, վոր այդպիսի հիվանդութեանների վարակը, ինչպես, որինակ՝ ձիերի, տավարի, վոջխարների սրբիրախտը, խոզերի կարմրատապը և այլն, տարիներով կարող են մնալ դիակների, վարակված հողերի և մանավանդ վոսկորների մեջ: Այսպիսով, այն վոսկորները, վորոնց վրա յերբեմն ուշադրութիւն չեն գարձնում, կարող են տարափոխիկ հիվանդութեանների ու անասունների անկման պատճառ դառնալ: Չէ՞ վոր արոտի կանաչն անասունների համար նույնն է, ինչ վոր սեղանի վրայի կերակուրը մարդու համար:

Հետևաբար, բոլոր արոտների, ուղեմասերի վրա, ձորերի, թփերի մեջ գտնվող լեշերը և սրանց բոլոր տեսակի ֆուցորդները՝ վոսկորները, սմբակները, յեղջուրները պետք է հավաքել, տանել գերեզմանոց և թողել: Ի հարկե, յեթե կան թափթփուկների ոգտագործման գործարաններ, ապա այս ամենը, մանավանդ հատկապես յեղջուրները, սմբակները, վոսկորները, կարող են ոգտագործվել վորպես հումուս:



Նկ. 11. Անասնագերեզմանոց

## ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՑՆԵՐԸ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՎԻՃԱԿՈՒՄ ՊԱՇԵԼԸ

Սակայն պետք է նկատի ունենալ, վոր վտանգ կարող է լինել վոչ միայն չթաղված, այլև թաղված լեշերից, յեթե դրանք թաղված են արոտավայրերում, ամայի տեղերում, անտառներում գտնվող առանձին գերեզմանոցներում, այլև այն դեպքերում, յերբ անասնագերեզմանոցները սխալ են կառուցված, անկանոն են պահվում և դիակները խնամքով չեն թաղվում:

Անհրաժեշտ է ճիշտ վորոշել, թե կենդանիների այս կամ այն դիակը առանձին վորտեղ է թաղված. այսպիսի առանձին ընկած գերեզմանները պետք է ցանկապատել կամ քարերի կույտով ծածկել:

Անասնագերեզմանոցները կարգին կարելի յե համարել այն գեպքում, յեթե նրանք լավ են ցանկապատած և անասունների համար անմատչելի յեն, գերեզմանոցի շուրջը ներսից առու յե փորված, վորպեսզի նրա միջից կեղտի և անձրևի ջրերը գուրս չհոսեն, իսկ պերեզմանները պետք է միշտ հողով ծածկված լինեն (նկ. 11):

Անասնագրեզմանի խորութիւնը պետք է այնպես լինի, վոր դիակի վրա 1 մետրից վոչ պակաս ազատ հողի լինի: Մինչ դիակը գերեզման գցելը, հարկավոր է փոսի մեջ ցախ, չորացած մոլախոտ կամ թե թե ծղոտ լցնել ու այրել: Յերբ սկսվի այրվել, այն ժամանակ դիակը գցել կրակի մեջ, ավելացնել ելի վառելիք և ծածկել կրակով: Դրանով անասունի կաշին ձյութապատվում է, վորը և պաշտպանում է վարակը տարածելուց և խանգարում է կաշին հանելու նպատակով գերեզմանը քանդելու փորձերն այն դեպքերում, յերբ անասնաբուժական որինքների համաձայն դա խիստ արգելվում է:

### ՋՐԵԼԱՏԵՂԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Արոտավայրերի նախապատրաստման ժամանակ հատուկ ուշադրութիւն պետք է դարձնել անասունների ջրելատեղերի վրա: Մենք արդեն ասել ենք, վոր արոտներում ջրի պակասութեան դեպքում պետք է ջրհորներ փորել: Սակայն թե բնական ջրելատեղերը և թե ջրհորները խնամք են պահանջում: Պետք է գարնանից առուններ, լճեր, ամբարտակների վրա ջրելատեղեր նշել: Մանրամասն հետազոտել գետերի ափերն ու շրջապատը և տեսնել, թե արդյոք չկան դիակներ, հեղեղից բացված գերեզմաններ կամ թե կեղտերի կուտակում: Հենց վոր գետի ջուրն իջնի, պետք է մաքրել ջրին մոտենալու տեղերը և նշել ջրելատեղերի սահմանները՝ մեծ նախիրը հերթով ջրելու հարմարութիւն ստեղծելու համար, բայց, ի հարկէ, առանց ավելորդ ձգձգման և շտապողականութեան: Յեթե գետերը կամ լճերը մեծ են և ջրառատ, ապա անասունների ջրի մեջ մտնելը փաստ չի կարող տալ, սակայն փոքր առվակների և հատկապես լճակների ջրի մեջ մտնող անասուններն իրենց արտաթորութիւններով և մեզով խիստ աղտոտում են ջուրը: Վորպեսզի արգելվի անասունների ջրի մեջ մտնելը, անհրաժեշտ է ափերը ցանկապատել այնպես, ինչպես ցույց է տրված վերևում՝ բաց ջրելատեղերի խնամքի վերաբերյալ գլխում: Ջրհորներում պետք է ստուգել ջրի քանակն ու վորակը (ինչպես նշված է 28-րդ էջում) և անհրաժեշտութեան դեպքում՝

ջրհորը մաքրել ու վերանորոգել, հետո անհրաժեշտ է պատրաստել բավարար քանակի սարքին ջրատաշտակներ: Ջրատաշտակների մեծութիւնը կախված է ջրի լցվելու արագութիւնից: Ջուրը դանդաղ լցվելու դեպքում տաշտը պետք է մեծ ծավալ ունենա, վորպեսզի ջրի բավարար պաշար հավաքվի: Անասունների մեկը մյուսին հրելուց խուսափելու համար՝ յերկկողմից ջրելու դեպքում՝ 5—6 գլխի համար պատրաստում են մեկ մետր յերկարութեամբ տաշտակ:

### ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ԱՄԵՆ ՏԱՐԻ ԱՐՈՏԻ ՀԱՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Անասուններն արոտի հանելու նախապատրաստումը հետևյալ հիմնական խնդիրներն ունի.

- 1) ընդհանուր նախրի մեջ չթողնել այնպիսի անասուններ վորոնք մյուս անասուններին կարող են վտանգ սպառնալ.
- 2) նախազգուշական պատվաստ կատարել.
- 3) մաքսողական որդանները սովորեցնել կերի նոր տեսակին.
- 4) նախապատրաստել սմբակները՝ տարբեր տեսակի հողերով մեծ տարածութիւններ անցնելու համար:

### ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Անասնաբուժական քննութիւնն ամենակարևորն է, մասնավանդ վարակիչ հիվանդութիւնների վերաբերմամբ, վորովհետև վարակիչ հիվանդութիւնների դեպքում անասուններն արտաքին տեսքից կարող են լիովին առողջ թվալ, մինչդեռ նրանց մարմնի մեջ կարող է լինել վարակ և արտաթորութեան, մեզի ու թքի հետ միասին դուրս գալ ի հարկէ, այսպիսի կենդանիները կարող են մյուս անասունների համար վտանգավոր լինել նաև ընդհանուր գոմում, բայց վոչ այն չափով, ինչ չափով արոտավայրերում, վորտեղ նրանք կարող են վարակել ընդհանուր կերն ու ջրատեղերը և մշտական շփում ունենալ նախրի տարբեր անասունների

հետ: Անասնագումում կերի, ջրի և խնամքի առանձնացման միջոցով այս վտանգը դժվար չե վերացնել, իսկ արոտում այս բանը հնարավոր չե անել:

Իրա համար ել մինչև արոտի թողնելը, բոլոր անասուններին պետք է անասնաբուժական մարազնին քննութեան յենթարկել, վորով կորոշվի, թե սրանցից վորին պետք է առանձին խմբերով պահել, կամ նույնիսկ գումում թողնել, վորին պետք է ստուգել հատուկ քննութեամբ, որինակ՝ տուբերկուլի-նիզացիայի յենթարկելով, արյունն ուսումնասիրելով:

Վորոշ վտանգ են ներկայացնում չար և կովարար անասունները, մանավանդ հարու տվող կովերը: Պետք է նախ այդպիսի կենդանիների մարմինն վորոշ պայմանական նշան անել և յերկրորդ՝ նրանց յեղջուրների ծայրերը սղոցել և մեծ խարտոցով այնպես հարթել, վոր բուժ լինեն, բացի դրանից, նրանց յեղջուրները կարելի յե կանեփի թելով կամ ճիւղով փաթաթել: Չ

Նախազգուշական պատվաստ կատարելու հարցի լուծումը, որինակ՝ սրբերախտի, խոզերի տարափոխիկ հիվանդութեաների դեմ, ամբողջութեամբ կախված է տեղի պայմաններից, վորի հիման վրա տեղի անասնաբուժական հիմնարկութեաններն ու կազմակերպութեանները մտտենում են հարցի այս կամ այն լուծմանը և կազմակերպում պատվաստի գործը:

### ԱՆԱՍՈՒՆԻՆ ԿԵՐԻ ՓՈՓՈԽԵԼՈՒՆ ՍՈՎՈՐԵՑՆԵԼԸ

Անասուններին նոր տեսակի կերին սովորեցնելը նշանակութուն ունի բոլոր տեսակի փոփոխութեաների դեպքում, հատկապես չոր կերը հյութալի կերով փոխարինելու դեպքում, վորովհետև չոր կեր ուտելու ժամանակ մարսողական խողովակում մեծ քանակութեամբ թուք և լորձուցք է արտադրվում, իսկ չոր կերն արագորեն հյութալի կերով փոխարինելու դեպքում, լորձուցքի ավելցուկները բույսի առատ թարմ հյութի հետ միասին կարող են փորլուծ առաջացնել:

Սա ավելի թույլ է ազդում այն անասունների ստամոքսի ու աղիքների վրա, վորոնք մսուրային կերակրման ժամանակ կերաբաժնում հյութառատ սիլոս կամ արմատապտուղ եյին ստու-

նում: Համեմայն դեպս արոտին անցնելը պետք է կատարել աստիճանաբար՝ 7—8 որվա ընթացքում, սկսելով մի քանի ժամ առաձեցնելուց և որըստորե ավելացնելով ժամերի թիվը, մինչև լրիվ որվա հասցնելը:

Այս դեպքում արածեցումը պետք է սկսել ավելի չոր տեղերից՝ բլուրների արևահայաց թեք լանջերից և արոտի դուրս բերելուց առաջ անասուններին ոժանդակ կեր տալ: Գարնանը և հետագայում տրվելիք ոժանդակ կերի նորման պետք է սահմանել արոտավայրերի բուսականության համաձայն:

Յեթե մենք հաղվով գտնում ենք, վոր կոջն արոտավայրից թեկուզ մեկ միավոր կեր պակաս է ստանում, կամ թե նկատում ենք, վոր կովերը պակասեցնում են կիթը, ապա կսկսենք կերի մեկ միավորից սկսած ավելացնել, որինակ 6 կգ սիլոս կամ 3—4 կգ խառնուրդ ցանովի խոտ, իսկ հետագայում՝ կաթնառատ կովերին կավելացնենք նաև խոտացրած կերեր, ինչպես ցույց է տրված 46 եջում:

### ՍՄԲԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Բոլոր կենդանիների սմբակներն աճում են այնպես, ինչպես մեր մատերի յեղունգները, սակայն յեթե դրանք մի շարք կենդանիների մոտ չափից ավելի չեն յերկարում, այդ կախված է նրանից, վոր կենդանիները քայլում են սմբակների վրա և այն մաշում են: Մակայն մսուրային պահպանման շրջանում սմբակները բավարար չափով չեն մաշում և ձմրան ընթացքում ուժեղ աճում են, իսկ հետո արոտի թողնելիս կոտրատվում են և խանգարում անասունի քայլելուն, յերբեմն կաղուժյուն և սմբակների հիվանդութեան առաջացնելով: Հետևապես մինչև արոտի հանելը պետք է բոլոր կենդանիների սմբակներն ստուգել և չափից դուրս աճած սմբակները կտրել, իսկ յեղերքները մեծ խարտոցով հարթել: Կարելի յե սմբակի ունելիով պոկոտել սմբակների ավելորդ մասերը, բայց ավելի նպատակահարմար է վոտքը դնել սրա համար հատուկ պատրաստած հարթ կլորակ փայտի վրա և նոր միայն սուր դրով կտրել սմբակի ավելորդ մասե-

ըլլի Դուրը պետք է դնել սմբակի աճած ծայրի վրա և մուր-  
ձով խփել-կտրել:

Ի՞նչ բանի վրա յեն հիմնված կենդանիներին արոտի համար  
նախապատրաստելու այս բոլոր կանոնները:

Այդ կանոնները մշակելիս նկատի յե առնված կենդանի  
որգանիզմի կապն ու կախումը արտաքին պայմաններից: Այդ  
կապն ու կախումը պետք է միշտ հաշվի առնել, ինչպես մսու-  
րային, նույնպես և արոտի պահպանման ջրջանում, հատկապես  
խնամքի մի պայմանից մյուսին անցնելու դեպքում, քանի վոր  
սրանց սուր փոփոխություն հետևանքով առաջանում են հիվան-  
դություններ և պակասում է մթերատվությունը:

Կենդանիների հիվանդությունների կանխումն ու հիվանդնե-  
րին ոգնելը նույնպես հիմնված են այն բանի վրա, թե ինչ կապ  
կա կամ ինչպես են ազդում արտաքին տարրեր պայմանները  
կենդանու որգանիզմի վրա:

Դրա համար էլ անհրաժեշտ է հասկացողություն ունենալ  
այն մասին, թե ի՞նչ է ներկայացնում իրենից կենդանի որգա-  
նիզմը, ի՞նչ է որգանիզմի կյանքի ու առողջության եյությունը

## ՆԱԽԻՐՆ ԱՐՈՏԻ ՀԱՆՆԵԼՈՒ ՅԵՎ ՎԵՐԱՎԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Նախիրն արոտ դուրս բերելու և վերադարձնելու ձիշտ սահ-  
մանած կարգն անպայման պետք է պահպանվի, վորովհետև սա  
մեծ նշանակություն ունի նախիրը հիվանդությունների տարա-  
ժոււմից պաշտպանելու գործում:

Այդ կարգի հիմնական պայմանները հետևյալներն են.

1) նախիրն արոտի թողնելիս ինչպես ֆերմայի, նույնպես  
և անհատական ոգտագործման տակ գտնվող անասունները պետք  
է մեկ մեկ անցնեն նախիրն իր պատասխանատվության տակ  
առնող ավագ տավարածի մոտով:

2) յեթե տնտեսությունում անասնաբուժական աշխատա-  
կից կա, ապա այս դեպքում նա պետք է ներկա լինի:

3) նույն կերպ պետք է վարվել նաև անասուններն արո-  
տից վերադառնալիս:

4) տնտեսություն բերված նոր անասունները չի թույլ  
տրվում նախրի հետ խառնել մինչև կարանտինային ժամկետն  
անցկացնելը:

5) յեթե արոտավայրի ճանապարհին լավ ջրելատեղեր կան  
և յերկյուղ չկա, վոր անասունները կարող են վորևե ջրափոսից  
ջուր խմել, ապա կարելի յե առաջին հերթին սրանց լավ ջրելա-  
տեղ տանել, բայց ավելի լավ է մինչ արոտի հանելը՝ ջրել անա-  
սունին:

6) ցուրտ յեղանակներին և հատկապես մեծ տեղումների ժա-  
մանակ (անձրևի, ցուլի, յեղյամի դեպքում) նախիրը չպետք է շուտ  
դուրս բերել, այլ պետք է սպասել արևի դուրս գալուն, ընդհա-  
րապես որվա տաքանալուն: Սա հատկապես պետք է խստիվ կի-  
րառել մատղաչների և հղիության վերջին ամիսներում գտնվող  
անասունների նկատմամբ:

7) արոտի ճանապարհին տավարածները գնում են նախրի  
առաջից և կողքերից, իսկ ավագ տավարածը նախրի յետևից,  
վորպեսզի դիտի շարժման կարգն ու անասունների վիճակը (ար-  
դյոք վորևե անասուն չի կաղում կամ յետ մնացողներ չկան):

Պարզ է, վոր հիվանդ անասուններին մինչ նախրի դուրս  
թողնելը ժամանակին առանձնացնելը մեծ նշանակություն ու-  
նի վոչ միայն հիվանդացող անասունին ոգնելու, այլև մյուս  
կենդանիներին պաշտպանելու տեսակետից, յեթե հիվանդու-  
թյունը վարակիչ է:

Նախիրը վերադառնալու ժամանակ հիվանդներին հայտաբե-  
րելը նշանակություն ունի վոչ միայն նրանց ժամանակին ոգնե-  
լու, այլև հիվանդության պատճառը պարզելու և վերացնելու  
համար, յեթե այդ պատճառը արոտի կամ ջրելատեղի անկանո-  
նության հետևանք է:

Կարելի յե դիտել, թե ինչպես առավոտյան բաց թողնված  
կովերն իրենց ծարավը հագեցնելու համար փնտրում են վորևե  
ջրափոս: Ի հարկե, այդպիսի պատահական ջրափոսերից ջուր  
խմելու դեպքում կարող են հիվանդություններ առաջանալ, այդ-  
պատճառով, արոտի հանելուց առաջ, կենդանիներին ջրելը առող-  
ջապահական ամենակարևոր պայմաններից մեկն է:

Վորպես ընդհանուր կանոն կովերը թե արոտ գնալիս և թե արոտում արածելիս պետք է հանգիստ քայլեն. այդ կանոնն առանձնապես պետք է պահպանվի նախրի տուն վերադառնալու ժամանակ: Այնինչ հաճախ կարելի յե տեսնել, թե ինչպես տավարածներն ընթրիքի և գիշերելու համար շտապելու պատճառով կովերին արագ քշում են փոշու ամպի մեջ:

Արագ քշելուց լցված կրծերը թափահարվում են այս ու այն կողմ և հաճախ վնասվածքներ են ստանում:

Նախիրը վերադառնալիս ավագ տավարածը պետք է գնա նախրի առջևից, վորպեսզի թույլ չտա, վոր անասունին արագ քշեն և նախիրը տեղ հասնելիս բոլոր անասուններին մեկ-մեկ դիտելով բաց թողնի:

Արոտի առաջին որերն անասուններին տանն ոժանդակ կեր տալու մասին մենք արդեն խոսել ենք, սակայն այստեղ պետք է ավելացնել, վոր ոժանդակ կերակրումը մինչ արոտի թողնելն անհրաժեշտ է ընդհանրապես այն դեպքերում, յերբ նրոտավայրի կերերը վատ են, վորպեսզի հնարավոր լինի խուսափել թուլնավոր բույսերով թուլնավորվելու դեպքերից, վորովհետև քաղցած անասունները բույսերի մեջ խտրություն չեն դնում: Մյուս կողմից՝ հարուստ, փարթամ արոտների դեպքում, ինչպես, որինակ՝ յերեքնուկի, տանը նախապես ոժանդակ չոր կեր տալը հանդիսանում է հիմնական նախազգուշական միջոց գանձակի (թափանի) ուռչելու դեմ, վոր մասին մենք կխոսենք հետագայում: Բացի դրանից՝ պետք է հաշվի առնել կերակրի աղի ավելացման պահանջը ևս, վորը տրվում է տանն ոժանդակ կեր տալու ժամանակ՝ կոշտերի ձևով՝ լիզելու համար կամ թե կերի վրա շաղ տրված — խոշոր անասուններին՝ 30—40 գրամ, իսկ հորթերին՝ 15—20 գ:

Մինչ արոտի դուրս բերելը, վորպես պարտադիր կանոն, հորթերին պետք է տալ ոժանդակ կեր: Նաև պարտադիր է խրատացրած կերերից ոժանդակ կեր տալ շատ կաթ տվող կովերին: Ոժանդակ կերակրման ժամանակ խտացրած կերեր՝ քուսպ, թեփ, հատիկ և այլն պետք է տալ հետևյալ հաշվով. այլազգի բույսերով հարուստ, վոչ կուլտուրական արոտների դեպքում, յիթե

կովը տալիս է 8 լիտր կաթ, պետք է լրացուցիչ տալ 1 կգ խրատացրած կեր, իսկ դրանից բարձր յուրաքանչյուր 2 լիտր կաթի համար հարկավոր է ավելացնել 500 գ խտացրած կեր:

## ԱՐԱՄԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Արածեցնելու կարգն ամենից առաջ պետք է համաձայնեցված լինի արոտավայրի արոտակտորների տեղաձևման, այդ արոտակտորները հերթով արածեցնելու և վորոչ անասունների (ինչպես, որինակ՝ մատղաշների, ծանրած կովերի) համար առանձին հողակտորներ հատկացնելու պլանի հետ: Այսպիսի պլան կազմելու մասին արդեն խոսել ենք հատուկ գլխում: Այստեղ մեզ ֆնում է ասել, վոր ավագ տավարածը պետք է ունենա փոքր հուշատետր՝ պլանը մեջը գրած և այդ հուշատետրում անի որագրային նշումներ՝ անցած արոտակտորների և բուսակազմի մասին:

Կարելի յե համոզված կերպով ասել, վոր այդպիսի որագիր պահելու դեպքում ինքը տավարածը կհամոզվի, վոր դա շատ ոգտակար բան է. նա միշտ գործի դրությանը տեղյակ կլինի, հաջորդ որվա արածեցնելու մասին գուշակություններ չի կատարի, միշտ հիմնավորված տվյալներ կունենա արտադրական խորհրդակցություններում և տնտեսության վարչության առաջ արածեցնելու վերաբերյալ այս կամ այն խնդիրները քննելիս:

Այս հուշատետրի վերջում մեջ է բերվում մի զրույց, վորը տեղի յե ունեցել մի տավարածի հետ՝ իրենց բրիգադի պահած որագրի վերաբերյալ:

Արածեցնելու կարգի ընթացքում շատ կարևոր է պահպանել հետևյալ կանոնները:

## ԱՄԵՆՈՐՅԱ ԱՐԱՄԵՑՆԵԼՈՒ ՍԿԻԶԲՆ ՈՒ ԸՆԴՄԻՋՈՒՄՆԵՐԸ

Ամենորյա արածեցումը պետք է սկսել արոտավայրի նստացած և նախորդ որվա արածեցրած տեղից՝ ստատիճանաբար նախիրը տանելով դեպի կանաչով հարուստ տեղերը:

Նախիրը բաց չթողնել ամբողջ արոտավայրի վրա, այլ արածեցնել, ինչպես ասում են՝ «վոտքի տակ գտնվածից սկսած»:

Այս պայմանները հնարավորորոշութուն են տալիս հողամասն ավելի լրիվ չափով ոգտագործել և պահպանում են անասունների թափանն արագ լցվելուց, վորիցնա կարող և ուսել և անցքը փակվել:

3—4 ժամ արածեցնելուց հետո, կերցրած տեղերում նախիրը պետք և կանգնեցնել և համախմբել: Այդ դադարն ու համախմբումն անհրաժեշտ են անասունների հանգստի և կերածը վորոճալու համար: Սովորաբար անասուններն այդպիսի դադարների ժամանակ պառկում են. այդ հանգիստը տևում է 1½ ժամ, վորից հետո անասունները կարելի յե քչիւ ջրելու, թեև գոմից դուրս գալուց առաջ ջրած անասուններն ընգմիջումին ջուր քիչ են խժում և վոչ խորթակով, այդ պատճառով առաջին հանգստից հետո արածեցնելը կարելի յե 3—4 ժամ ևս շարունակել, վորից հետո դարձյալ յերկրորդ անգամ հանգիստ տալ:

Յերկրորդ հանգստից հետո անպայման պետք և նախիրը տանել ջրելու և նորից արտտի բերել: Յերրորդ հանգիստը տըրվում և նախրի գոմ վերադառնալուց առաջ: Այս հանգիստն առանձնապես անհրաժեշտ և, յեթե արտտը գոմից մի քանի կիլոմետր հեռու յե գտնվում:

Ափերը և ջուրը կեղտոտելուց խուսափելու համար ջրելատեղերի մոտ կարիք չկա նախիրն ավելորդ տեղը կանգնեցնել և վոչ ևլ ուղիղ ափի մոտ կացատեղ ընտրել:

Պետք և հետեվել ափերի մաքրությանը, և չորացած աղբն այրել:

Ջրհորներից ջրելիս պետք և ունենալ անհրաժեշտ քանակի տաշտակներ, և առհասարակ պետք և հետևել ջրելատեղերին, ինչպես այդ ցույց և տրված արտտների ջրելատեղերի և սրանց նախապատրաստման մասին յեղած գլխում (40 էջում):

## ՇՈՐ ԺԱՄԱՆԱԿ ԱՐԱՄԵՑՆԵԼԸ

Տաք որերին՝ հնարավորության սահմաններում՝ կեսորվա հանգիստը պետք և կաղմակերպել բարձր և բաց տեղերում: Յեթե հերթական արտտամասը բավարարում և այս պահանջներին, այս

դեպքում նախիրին պետք և հենց այդտեղ ևլ հանգիստ տալ: Բայց մեծ մասամբ տավարածները հակառակ ձևով են վարվում՝ շոգին նրանք աշխատում են նախիրը քչել անտառ, թփուտները և ճահճուտները:

Այս ամենը ճիշտ չե: Պետք և ասել, վոր շոգն անասունների համար ավելի քիչ և քնասակար, նրանց ավելի քիչ և տանջում, քան բոռերը, տիղերը, պիժակները, վորոնք հատկապես թփուտներում, մացառուտներում, անտառային բացատներում և այլն ավելի հաճախ են հարձակվում անասունների վրա: Միջատներից պաշտպանվելու ամենալավ միջոցը հանդիսանում և քամին, իսկ յեթե հնարավոր՝ և ծուխը: Իսկ այդ հատկապես հնարավոր և բարձր ու բաց տեղերում, վորտեղ միշտ ողի շարժում կա և անվատնգ կերպով կարելի յե վոչ այնքան մեծ խարույկ վառել այնպես, վոր ծուխն անցնի նախրի վրայով: Հնձած մոլխտտերն ու կաղրտված կոճղերը հաջողությամբ կարելի յե գործադրել խարույկի համար. ի հարկե, պետք և խիստ հազվի առնել հրդեհի վտանգները. չպետք խարույկ անել անտառներին, արտտավայրերին, խտտերի դեղերին մոտիկ, և վոչ մի դեպքում առանց խարույկը կանգնեցնելու չհեռանալ կացատեղից:

Ծածկատեղերում նույնպես վերջիվերջո կուտակվում և աղբ, վորն ապաստարան և դառնում միջատների համար: Յերբեմն նկատելի յե, վոր իբր թե արևահարությունից խուսափելու համար հորթերին ևլ են թաղցնում արևից. պետք և ասել, վոր հաճախ արևահարությունը խառնում են ջերմահարության հետ, վորը պատահում և կամ չափազանց բտված անասունների հետ, կամ թե խիստ խանվածության դեպքում, իսկ արտտում կովերի և մանավանդ հորթերի արևահարությունից վախենալու վոչ մի հիմք չկա:

Անասունների մարմնի դիրքի փոփոխումներն ու ազատ շարժումները նրանց պահպանում են արեգակի ճառագայթներով չափից դուրս տաքանալուց:

Սակայն խոշոր նշանակություն ունեն արտտներում գտնված ծածկերն ու առանձին սովորոտ տեղերը և խոշոր ծառերը, վորոնք պաշտպանում են անասուններին սառն անձրևից և

կարկտից: Իսկ յիթե ծածկերն ու ծառերը գտնվում են քամուն  
յենթակա և բարձր տեղերում, ընդ վորում ծածկերն ել բարձր  
են, և նրանց մեջ ողի ազատ շարժում կա, այս դեպքում, ի հարկե,  
սրանք կարող են ծառայել նաև արևից պաշտպանվելու համար,  
յերբ անասուններն անշարժ հանգստանում են. սակայն, ի հարկե,  
սրան սովորեցնելու միտք չկա: Այս դեպքում պիտի բացառու-  
թյուն անել խիստ չաղացած խոզերին, վորոնք կարող են արևա-  
հար կամ ջերմահար լինել: Սակայն խոզերի արածեցնելն ընդհան-  
րապես այլ կարգ է պահանջում, քան մյուս կենդանիներինը: Ամե-  
նից առաջ նրանց անհրաժեշտ է տալ ոժանդակ կեր, յերկրորդ՝  
նրանց պետք արոտ բաց թողնել առավոտը մինչ ոժանդակ կեր  
տալը, իսկ ոժանդակ կերից հետո հանդիստ տալ որվա ամբողջ  
չոգ ժամանակ (3—4 ժամ), իսկ հետո արդեն կարելի չէ նրանց  
բաց թողնել սովերոտ տեղեր, յիթե այդպիսիք կան, կամ թե  
ուղղակի արածեցնել մինչ յերեկոյան ոժանդակ կեր տալը: Շատ  
ոգտակար է խոզերին յողացնելու համար արոտներում ունենալ  
ավազաններ, մշակել կաղնու ծառեր, վորոնք խոզերին կտան  
սննդարար կեր՝ խոզակաղին, առանձին հողակտորներում ցանել  
առվույտ կամ յերեքնուկ, կառուցել առանձին ճամբարային  
տնակներ կամ թե ծածկեր:

Ընդհանրապես խոզերի պահպանումն արոտներում պետք է  
կազմակերպել լրիվ ճանրարային ձևով, հնարավորության սահ-  
մաններում յերկար ժամանակամիջոցի համար, ընդ վորում,  
ի հարկե, ճամբար են փոխադրվում խոզապահների բոլոր աշխա-  
տանքները:

Հորթերի արածեցման մասին պետք է կրկնել, վոր նրանց  
համար անհրաժեշտ է առանձին արոտատեղ, հետևաբար և առան-  
ձին տավարած (հորթապահ):

### ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՐՈՏ

Բուսեր, պիծակներ և այլ միջատներ շատ լինելու դեպքում  
յերբեմն հարկ է լինում բոլորովին փոխել արածեցնելու կարգը,  
այն է՝ ամառվա տոթ շրջանում անցնել գիշերային արոտի:  
Այդպիսի դեպքերում նախիրն արոտ է բաց թողնվում յերեկո-

յան կիթից հետո (ժամը 7—8-ին). առավոտվա կիթը կատար-  
վում է արոտում, իսկ կեսօրվա կիթի ժամանակ նախիրը վերա-  
դառնում է գոմ:

Գիշերվա ամենամութ ժամերին նախիրը 2—3 ժամ հավաք-  
վում է կացատեղը՝ հանգստանալու համար: Գիշերային արոտի  
դեպքում նախիրը զազաններից պահպանելու համար պետք է խիստ  
հսկողություն լինի. անտառային շրջաններում այս հսկողություն-  
ը պետք է լինի նաև ցերեկը, վորի մասին կխոսվի ներքևում:  
Մի շարք վայրերում, հատկապես լայնածավալ արոտների դեպ-  
քում, կիրառվում է ամբողջ որն արածեցնելու յեղանակը: Առող-  
ջապահական տեսակետից այս յեղանակով արածեցնելը շատ  
ոգտակար է, սակայն սա պահանջում է մեծացնել տավարածների  
կազմը և նրանց համար կացատեղում բնակարան շինել:  
Մեծող յորն արածեցնելու դեպքում կիրառվում է գիշերային  
արոտի վերը նշած կարգը, այսինքն՝ ցերեկվա շոգ ժամերին և  
գիշերվա խիստ մութ ժամերին նախիրը մնում է կացատեղում:

### ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՈՏԻ ՄԱՆՐՈՒՆՔՆԵՐԻՆ

Արածեցնելու կարգի խնդրում խոշոր նշանակություն ունի  
տավարածի ուշադիր վերաբերմունքն արածեցնելու վողջ պայ-  
մանների, անասունների վարմունքի և այսպես կոչված բոլոր  
տեսակի մանրունքների նկատմամբ: Շատ բաներ կան, վորոնց  
կողքից, ինչպես մանրունքների, տավարածն անցնում է առանց  
ուշադրություն դարձնելու, որինակ՝ ալբի կույտերը, խլրարնե-  
րը, ճահճացած ջրափսսերը, մալխտտերը, մատաղ թփերը, պա-  
տահամար թողնված վոսկորները, ջարդված ապակիները և այլն:

Այդ ամենը փչացնում են արոտը և կարող են վնաս հասցը-  
նել անասուններին: Այս ամենը պետք է արոտից հեռացնել  
Միթե տավարածներն ու նրանց ոգնականները նախրի հան-  
զըստի ժամանակ չեն կարող ցրել ազրակույտերը, հավա-  
քել ապակիները և լցնել թեկուզ հենց այդ խլրարների մեջ և  
հավասարեցնել դրանք և այլն: Այս ամենը կատարել դժվար չէ,

առանց նախրի նկատմամբ հսկողութիւնը թուլացնելու<sup>1)</sup>: Տավարածներէից վոմանք արածեցման սեզոնի վերջում արդեն չօրացած խոտերն ու մոլախոտերն այրում են: Այս յեզանակով մաքրվում և պարարտացվում է արոտավայրը, սակայն հրդեհի տեսակետից վտանգավոր է:

## ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ՀՍԿԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՎԱՐՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հերթական հողակտորներով արածեցնելու դեպքում վոչ պակաս կարևոր նշանակութիւն ունի նրանց ճիշտ ողտագործումը արոտի ընթացքում:

Արոտի ընթացքում պետք է հսկել այն անասունների վրա, վորոնք սիրում են թափառել հենց նախրի մեջ և այնքան չեն ուտում, վաքքան տրորում են կանաչը: Տավարածն այդպիսի անասուններին պետք է ճանաչի և նրանց պահի նախրի առաջին գծի վրա, վորովհետև հազվագեպ է լինում, վոր նրանք յետ դառնան նախրի մեջ, այլ ազահութիւնից դրդված կամ ախորժակով ուտող մյուս կենդանիներին նախանձելով, միշտ ձգտում են առաջ կամ աջ ու ձախ կողմ և խանգարում են խողող անասունների արածեցնելը: Իսկ արոտի առաջին գծում լինելով, իրենց առաջ այլ կենդանիներ չտեսնելով, նրանք ավելի հանգիստ են արածում: Սակայն յերբեմն էլ հենց առաջին գծում ևս լինելով, նրանք ձգտում են թափառել ու խանգարել մյուս անասունների արածելը: Այսպիսի անկարգութիւններ կատարելու դեպքում կարելի յե նրանց պատժել՝ ճիպտորով գավակին խփելով, սակայն վոչ յերկար մտրակով, վոր կրծին չդիպչի: Բայց վոչ մի դեպքում չպիտի թույլ տալ դաս տալը դառնա անասուններին սանձահարելու մշտական միջոց: Ծիպոտով խփելը պետք է միայն վորպես դաս լինի և բավական է նման 2—3 դաս, վոր անասունները վախենան և այնուհետև գոռալու և սպառնալու դեպքում կարգին պահեն իրենց:

1) Իսկ յեթե արոտի վորեւ պակասութիւնը տավարածների բերեալը էլ կարողանում մենակ ուղղել, այդ դեպքում պետք է հայտնի կողմնակողմութիւն վարչութիւնից:

Չպիտի թույլ տալ, վոր անասուններն իրար հետ կազեն: Ինչպես ընդհանուր կանոն չի կարելի անասուններին ձեծել վոչ արոտում, վոչ էլ գոմում, վորովհետև դրանով փչանում է անասունների բնավորութիւնը և ընկնում է նրանց արտադրողականութիւնն ու աշխատունակութիւնը: Այդպիսի վերաբերմունքի որինակներ անասունների մեջ մենք ունենք. ձիերը կամակոր են դառնում, կովերի կիթը պակասում է, անաստ են դառնում, ցուլերը չարանում են և այլն:

Տավարածներն այս բոլորը պետք է նկատի ունենան անասունների հետ վարվելու ժամանակ: Տավարածի վերաբերմունքը պետք է լինի հանգիստ, գործնական, հարկ յեղած դեպքում քրնքուր, հարկ յեղած դեպքում խիստ, բայց վոչ չար:

Անասունների հսկողութիւն կարևորագոյն նպատակն է պարզել նրանց առողջութիւնն վիճակը: Սա կարևոր է նրա համար, վոր վարակիչ հիվանդութիւններով հիվանդ անասունները ժամանակին մեկուսացվեն և հիվանդ կենդանիներին իր ժամանակին բժշկական ոգնութիւն ցույց տրվի: Դա կարևոր է նաև նրա համար, վոր ստուգվի, թե արդյոք արոտի գործում ինչ անկանոնութիւն կա և ժամանակին վերացվի այն: Հսկողութիւնը հաշոդ կատարելու համար տավարածը պետք է ճանաչի անասունների հիվանդ վիճակի նշաններն ընդհանրապես ու վարակիչ հիվանդութիւնները՝ մասնավորապես:

## ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ ՅԵՎ ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Շատ հաճախ հիվանդութիւնը վորոշում են հետևյալ նշաններով. անասունը կեր չի ուտում, տեղից վեր չի կենում կամ թե հազում է: Այսպիսի նշաններ հայտնի յեն ամենքին: Նույն կերպ են դատում և այն դեպքում, յերբ անասունը փորլուծութիւն ունի, թափանն ուռել է, կամ թե քթից, սեռական որդաններից թարախ է հոսում, կամ թե մարմնի վրա վորեւ վերք, կտրուկ վածք, ուռուցք ունի, կամ կաղում է, կամ վորեւ տեղից արյուն է հոսում: Սրանք արդեն հիվանդութիւն պարզ նշաններ են:

ի հարկե, այսպիսի անասուններին չի կարելի նախընտրել մեջ թողնել:  
Բայց պատահում են և դեպքեր, յերբ այսպիսի ակնհայտ նշաններ չկան, բայց և այնպես անասունն արդեն հիվանդացել է և պետք է հենց սկզբից հիվանդության առաջն առնել: Տավարածը միշտ պետք է հետևի անասուններին և ճանաչի այն նշանները, վորոնց դեպքում հարկավոր է շտապ միջոցներ ձեռք առնել:  
Ահա այդ նշանները 1) անասունը թուլացել է, տխուր է և կարծես թե հոգնած է. 2) մազերը փայլուն ու հարթ չեն, այլ չոր և զգգզված. 3) կովի քթահայելին չոր է և տաք, յեղջյուրներն ու ականջները նույնպես տաք են. 4) ձիու ականջները շատ տաք են. 5) քթի ու ականջի թաղանթները կարմրած կամ կապտած են կամ ել դեղնած. 6) անասունը թեև ուտում է, բայց շատ արարկոտ, դանդաղ և յերբեմն անգամ բերանից կերը թափվում է. 7) կովի վորոճը կանգ է առնում. 8) ձիու ստամոքսի մեջ ուժեղ զրգոտց է լինում. 9) կովի բերանից մեծ քանակով լորձուճք է հոսում. 10) անասունները հաճախ հորանջում են. 11) ջրելուց ձիու քթածակերից ջուր է հոսում. 12) աղբի մեջ լորձուճք կամ թե ճիճուներ են լինում (սպիտակ ճիճուներ). 13) անասունները հաճախակի կամ քիչ-քիչ են միզում, կամ ցանկանում են միզել, բայց չեն կարողանում, կամ թե մեզը մուգ արնախառն է լինում. 14) անասունը հաճախ քրտնում է, նույնիսկ առանց աշխատելու և հով ժամանակ. 15) անասունը շատ հաճախ փոխում է իր դիրքը՝ կամ պառկում է, կամ կանգնում. 16) շնչառությունը շատ է արագանում. 17) անասունը քոր է զգում. 18) անասունի մարմնի վորակե մասին ձեռք տալիս՝ դողում է. 19) կովը խիստ պակասեցնում է իր կաթը. 20) ժամանակ առ ժամանակ անասունի վորտքերն ուռչում են. 21) անասունը դողում է, չնայած վոր ողջ տաք է և մազը չոր. 22) անասունը դժվարությամբ է քայլում, կարծես նրա վորտքերը փայտացած են կամ, ընդհակառակը, վորտքերի վրա յերբերվում է:

Այս նշաններից ամեն մեկը կարող է առանձին յերևան զալ անասունի վրա, բայց մեծ մասամբ մի քանի նշաններ միատեղ են յերևան զալիս: Որինակ՝ անասունը տխուր է, ականջները տաք են, աչքերը կարմիր, բորբոքված.

Յեթե նախիրն արոտի հանելիս այս նշաններից մեկը նկատվի վորակե անասունի վրա, այս դեպքում այդպիսի անասունը պետք է պահվի զոմում և յինթարկվի անասնաբուժական քննության, վորից հետո անասնաբուժը կամ բուժակը կորոշեն, թե կարելի՞ յե այդ անասունը նախրի մեջ թողնել և ընդհանրապես կարելի՞ յե նրան արոտի հանել:

Պետք է ստել, վոր մի շարք հիվանդությունների դեպքում վաղ միայն արոտի հանելը փաստակար չէ, այլև նույնիսկ ոգտակար, բայց այս խնդիրը կարող է վորոշել միայն անասնաբուժ-մասնագետը, վորպեսզի վաբակիչ հիվանդություններով վարակված վորակե անասուն նախրի հետ միասին ընդհանուր արոտ և ջրելատեղ բաց չթողնվի:

Յեթե վերը նկարագրված նշանները վորակե անասունի վրա նկատվեն արոտում, այս դեպքում տավարածը պարտավոր է հեռացնել նրան նախրից և հսկել նրա վրա, իսկ յերբեմն ել նույնիսկ շտապ ոգնություն ցույց տալ, վորի մասին նկարագրված է ներքևում: Վարակիչ հիվանդություն վերաբերյալ վորակե կապած լինելիս, կամ թե հիվանդությունն ուժեղանալիս, անասունին անմիջապես պետք է ուղարկել զոմ՝ անասնաբուժական քննության յինթարկելու և ոգնություն ցույց տալու համար:

### ՎԱՐԱԿԻՉ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍԿԱԾՆԵԼԻ ՆՇԱՆՆԵՐԸ ՅԵՎ ՇՏԱՊ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Բոլոր տեսակի վարակիչ հիվանդությունների ընդհանուր նշանները հետևյալներն են՝ 1) հիվանդությունը հանդես է գալիս մի քանի անասունի վրա ու միատեսակ նշաններով, կամ թե անասունները հիվանդանում են մեկը մյուսի յետևից՝ վորոշ ժամանակից հետո. 2) անասունները մարմնի ջերմաստիճանն ակնհայտ կերպով բարձրանում է (ականջները, քիթը, յեղջյուրները տաք են լինում), կամ թե զոդ է ընկնում մարմինը. 3) անասունները բերված են այնպիսի տեղից, կամ թե այնպիսի ճանապարհներով, վորտեղ անասունների հիվանդություն կա:

Ըստ առանձին հիվանդությունների պեսը է երկել հետևյալ

նշանները. 1) ձեռքի, կոճերի կամ վոչխարների հանկարծակի, առանց նկատելի պատճառի սատկելը կամ թե անասունների տարափոխիկ հիվանդութիւնները և անկումը, վորոնց դեպքում բոխախի վրա, վորաների արանքներում, կողքին կամ թե մարմնի ուրիշ մասերի վրա լինում են ուռուցքներ, սիբիրախտի նշան ե, հատկապես յեթե այդ տեղի յե ունենում ամառը և կենդանու սատկելուց հետո քթից, բերնից, հետույքից արյունահոսութիւնն է լինում. 2) ձիու քթից կանաչ լարձուն թարախ հոսելը և ծնոտի տակ ուռուցքներ կամ մարմնի վրա (վոտքերի, կողքերի վրա) խուլեր և խոցեր լինելը, ցուլց ե տալիս խլախտ հիվանդութիւնն (сани), 3) հազ՝ քթից ժանգոտ գույնի արյունահոսութիւնն հետ, թոքերի վարակիչ բորբոքման նշան ե, 4) կովի բերնի մեջ և կնգակների արանքում յեղած խոցերը դարադի նշան են, 5) կոճերի հյուսիսի վրա, հազը, հատկապես գիշերները, յերբեմն կրծի վրա ուռուցքներ լինելը պալարախտի նշան ե. 6) խոզերի տարափոխիկ անկումը, վորի հետ միաժամանակ լինում ե փորլուծութիւնն և մարմնի վրա բծեր, ցուլց ե տալիս խոզերի ժանտախտը կամ կարմրախտը. 7) վարակիչ վիժման (ինֆեկցիոն արբոր) դեպքում կոճերն առանց վորեւ պատճառի վիժում են. 8). չարորակ դումային տենդի դեպքում կովի աչքերը թարախակալում են և քթից թարախ ե հոսում. 9) ձիերը բթանում են, յերբեմն են և յերբեմն կատաղութիւն են հասնում մենինգիտի (ուղեղապատյանի բորբոքում) դեպքում, 10) հորթերի լուծն ու հազը հաճախ վարակիչ բնույթ ե կրում. 11) մաշկի ուժեղ քորը և կաշվի վրայի կեղերը քոսի նշան են:

Նման նշանների դեպքում պարզ ե, վոր անասունին յերբեք չի կարելի նախրի մեջ թողնել: Տանը նման նշաններ ունեցող անասունները պետք ե առանձնացվեն առանձին շենքի մեջ և լինեն անասնաբուժի հսկողութիւնն տակ: Յեթե նախրում վորեւ անասունի վրա այս նշանները նկատվեն, կամ թե վորեւ անասուն հանկարծ սատկի, այս դեպքում տաժարածը պետք ե անմիջապես ձեռք առնի հետևյալ միջոցները.

1) հիվանդ անասուններին անմիջապես ուղարկել գոմ՝ անասնաբուժական քննութիւնն.

2) սատկած անասունի դիակն անմիջապես ծածկել մուխտտերով, ծառի ճուղերով և այլ բաներով և այս մասին շտապ հաղորդել կոլտնտեսութիւնն կամ խորհրտեսութիւնն վարչութիւնն՝ դիակը շտապ վերցնելու և բժշկական քննութիւնն յենթարկելու համար.

3) տվյալ արտոտմասից նախիրը փոխադրել հարեան արտոտմաս, մինչև վոր կպարզվի անասնաբուժական քննութիւնն արդյունքը.

4) հետևել, վոր վոչ մի անասուն և շուն չմտենա դիակին.

5) դիակը և նրա արտաթորութիւնը վերցնելուց հետո ընկած տեղը կրակ անել, յեթե հրդեհի վտանգ չկա, կամ թե առատ չհանգած կիր շաղ տալ:

Ինչո՞ւ արտոտային պահվածքի ժամանակ հիվանդութիւններ առաջանալիս այսպիսի առանձնահատուկ և խիստ կարգ պետք ե պահպանել:

Ինչպես վերևում ասված ե, այդ բանն անհրաժեշտ ե նրա համար, վոր անասունները նախրի մեջ միատեղ պահելու ժամանակ, կարելի յե ասել, վոր ունեն ընդհանուր մուտը և ընդհանուր ջրելատեղ, իսկ յերբեմն արտաքինից վոչ վտանգավոր հիվանդութիւնն տակ կարող ե թագնվել վարակիչ հիվանդութիւնն և վարակել մյուսներին:

Նախրի մեջ վարակիչ հիվանդութիւններ կարող են բերել թե անասունները և թե կողմնակի մարդիկ. յեթե մուտը այն շրջանում գոյութիւնն ունի այն կարգը, ըստ վորի վոչ գոմում և վոչ ել ջրելատեղերի տաշտակների մոտ չի թուլատրվում կողմնակի անասունների մուտքը, պարզ ե, վոր այս կարգն ամբողջութիւն վերաբերում ե նաև արտոտի շրջանի նախրին, քանի վոր այս դեպքում վորեւ մոլորված անասունի մուտքն ավելի հնարավոր ե: Նմանապես չպետք ե թուլ տալ, վոր կողմնակի մարդիկ անասուններին ձեռք տան, որինակ բերանը բաց անեն, նայեն, քթին, աչքին, կրծին ձեռք տան և այլն: Հատկապես չպետք ե նախրի մեջ թողնել ամեն տեսակի պրակտիկ ձիաբուժներին, վոսկրաբուժներին, «բուժիչներին», «գիտուններին», վորոնց անվան տակ աշխատում են վոչ միայն խաբարաներ, այլև փասարարներ: Այս

մարդկանց շարժակրատանքի սպորեցության տակ չընկնելու համար անհրաժեշտ է, վոր տավարածը գիտենա, թե ինչ բան է վարակը:


## ՎԱՐԱԿԻՉ ՄԱՆՐԵՆԵՐ ՅԵՎ ՊԱՅԳԱՐ ՆՐԱՆՑ ԳԵՄ

Միկրոբները հազար անգամ փոքր են, քան հազիվ նկատելի ամենափոքր փոշին, սակայն նրանք ապրում և սնվում են, ըստ վորում սրանցից վտմանք սննդանյութ վերցնում են նաև այլևայլ թափթփվածքներից, ջրից, հողից, իսկ մյուսները՝ գերազանցում են անասունների կենդանի մարմինը (նկ. 12):

Առաջինները մինչև իսկ սպտակար են. նրանք առաջացնում են որինակ՝ սիրուսի խմորում, կաթի մակարըում, բույսերի համար սննդանյութ են արտադրում (ազոտ), իսկ յերկրորդները կենդանի մարմնի չարագույն պարազիտներ են հանդիսանում՝ առաջացնելով վարակիչ հիվանդություններ: Բայց շատ մանրեներ ունեն այնպիսի յերկյակ հատկություն, վոր մեծ քանակությամբ անփնաս ձևով ապրում են ամենուրեք՝ անասունի մարմնի շրջապատում և անասունի մարմնի որդաններում (բերանում, աղիք-

ներում), այդ մանրենները սնվում են թափթփուկներով այնքան ժամանակ, քանի դեռ մարմինն առողջ է և փնասվածքներից զերծ, բայց բավական է, վոր մարմինը վորևե փնասվածք ստանա կամ թուլանա, այդ անփնաս մանրեններն առաջացնում են բարբոթում, թարախակալում, լուծ, անըզգայություն և այլն:

Պարզ է, վոր անասունի մարմնի ամեն տեսակի փնասվածքները, թե արտաքին և թե ներքին, վոչ



Նկ. 12. Միկրոբներն արյան մարմնիկներէ միջև (1000 անգամ մեծացրած)

միայն խախտում են մարմնի նորմալ դրությունը, այլև ճանապարհ են բաց անում մանրենների համար:

Ահա թե ինչու որդանիզմի նորմալ կյանքի պայմանների պահպանումը հանդիսանում է մանրենների դեմ պայքարելու կարևորագույն միջոցը: Միկրոբներին թուլացնում և իսպառ վոչընչացնում են ախտահանիչ միջոցները:

Այս միջոցներից ամենաուժեղը արեգակի ճառագայթներն են, սաստիկ ջերմությունը (կրակը, յեռացումը): Առորյա կյանքում վորպես տնային ախտահանիչ միջոցներ կարելի յե նշել չհանգած կիթը, ձյութը, մոխրաջուրը: Պարզ է, վոր այդ միջոցների մեծ մասը, որինակ՝ կիթը, յեռացնելը, շիկացնելը կարելի յե գործադրել այլևայլ առարկաների, բայց վոչ մարմնի վրա: Դեղատնային ախտահանիչ միջոցներից հայտնի յեն՝ կրեոլինը, կարբոլաթթուն, կալիումի մանգանաթթու, յողը և այլն:

Վորպես վերքերի և խոցերի վրա ցանելու ախտահանիչ միջոց կարելի յե առաջարկել վրան նաֆթալին ավելացրած կադնու կամ ուռենու չորացրած կեղևի փոշին: Ախտահանիչ միջոցների մասին ավելի մանրամասնորեն կխոսվի հետագայում:

Պեռք է նիշել, վոր արդեն որդանիզմ մուտք գործած մանրենների դեմ պայքարելը շատ դժվար է, ուստի և ամենից կարեվոր է վոչընչացնել և թուլացնել նրանց ամենուրեք, մանավանդ անասունի շրջապատում, վորտեղ այդ հնարավոր է, և ամեն կերպ խանգարել նրանց տարածումը:

Մանրեններն արտադրում են թույն՝ մարմնի կենդանի մասերի համար: Միկրոբներից վտմանց թույնը քիչ վտանգավոր է, իսկ շատերի թույնը՝ շատ վտանգավոր, հատկապես վարակիչ հիվանդություններ առաջացնող միկրոբների թույնը, ընդ վորում տարբեր միկրոբների թույնը տարբեր ձևով է ազդում: Դրա համար էլ զանազան վարակիչ հիվանդություններ, որինակ՝ խլախտը, սիբիբախտը, պարախտը և այլն, վորոնք առաջ են գալիս տարբեր մանրեններից, տարբեր նշաններ են ունենում:

Դիտությունն նվաճումների թվում կա մի քանի վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու կարևորագույն մի միջոց, դա զատվատան է, վորը կատարում են անասնաբուժները: Սա-

կայն յուրաքանչյուր կողանտեսություն ևս կարող է այսպես կոչ-  
ված պրոֆիլակտիկ—նախազգուշական միջոցներ ձեռք առնել վա-  
րակիչ հիվանդությունների դեմ:

Այդ միջոցների նպատակն է վերացնել այն պատճառները,  
վորոնք նպաստում են վտանգավոր մանրեաների տարածմանը:

Վտանգավոր մանրեաները տարածվում են գլխավորապես  
ամառն այն վայրերում, վորտեղ կան ճահճոտ, ցածրադիր արո-  
տավայրեր, ճահճացած ջրելու տեղեր, լեշերով զդոտոված արո-  
տավայրեր, մարգագետիններ, ճանապարհներ, քանդված, հեղեղ-  
ված և չցանկապատված անասնագերեզմանոցներ և այս ու այն  
կողմ թողած դեղակներ:

Յեթե մենք վերացնենք այս թերությունները, վերացրած  
կլինենք նաև վարակիչ հիվանդությունների գլխավոր պատճառը:

Այնուհետև՝ մանրեաները տարածվում են այնտեղ, վորտեղ  
անասունների շենքերը կենդոտոտ, սուր ու խոնավ են, վորտեղ  
անասուններին կեղտոտ են պահում և հիվանդներին առողջներին  
չեն մեկուսացնում և այլն, վորի մասին վերևում արդեն ասված է:

Բացի մանրեաներից, գոյություն ունեն վարակիչ հիվանդու-  
թյուններ առաջացնող ավելի խոշոր մակարույծներ ևս. որինսկի՝  
քոսի տիգերը, վորոնց մասին կխոսվի հետագայում:

## ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սիբիրախոս.—Սիբիրախոսի միկրոբներն առաջացնում են սպոր-  
ներ (մանրագույն հատիկների ձևով), վորոնք հողի մեջ կարող  
են յերկար տարիներ պահպանել իրենց վարակիչ հատկությունը:  
Սիբիրախոսով կարող են վարակվել բոլոր տեսակի կենդանիները:  
Սիբիրախոսի ժամանակ յերբեմն կենդանիների բոխախի, կողերի,  
վզի, աճուկի մոտերը լինում են ուռուցքներ, բայց մեծ մասամբ  
անասունները զոդում են, տենդ են ունենում, ընկճվում են, իսկ  
2—3 որից հետո սատկում են:

Կենդանիները յերբեմն հանկարծամահ են լինում, առանց  
վորեն նշանների, իսկ յերբեմն՝ հիվանդությունը ձգձգվում է մին-  
չև մի շաբաթ. այս դեպքում արյունային փորլուծություն է

առաջանում, կամ թե, ինչպես վերևում հիշատակված էր, մարմ-  
նի վրա ուռուցքներ են առաջանում: Անասունների սատկելուց  
հետո, իսկ յերբեմն մինչև սատկելը՝ ջթից, հետույքից, բերանից  
արյուն է հոսում, իսկ դիակը 2—3 ժամից հետո խիստ ուռչում է:

Յեթե ամբանը մի անգամից միջանի անասուն կամ թե  
մեկը մյուսի յետևից հիվանդանում են նման հիվանդությամբ,  
պետք է նախիրն արտաի հանել մինչև բժշկի քննելն ու կար-  
գադրություն անելը. այս դեպքում պետք է ձեռք առնել այն բո-  
լոր միջոցները, ինչ վոր ասված է վարակիչ հիվանդությունների  
դեմ պայքարելու ընդհանուր միջոցառումների մասին, այն է՝ հի-  
վանդների մեկուսացում, ախտահանում, դիակները ճավաքելը և  
այլն:

Հատկապես պետք է խիստ հետևել դիակները կանոնավոր  
հավաքելու գործին: Սատկած անասունների կաշին, մազը, յեղ-  
ջուրները, սմբակները չպետք է հանել, վորովհետև այս մասե-  
րից վարակը վոչ սիայն տարածվում է անասունների մեջ, այլև  
կարող է անցնել մարդուն, վորը սիբիրախոսից կարող է մեռնել:  
Սիբիրախոսի դեմ պայքարելու համար անասնարուժները պա-  
վաստ են կատարում:

Կարմրուկ.—Սոգերի կարմրուկը, ինչպես և սիբիրախոսը,  
սմեն տարվա հյուր է հանդիսանում այն տեղերի համար, ուր  
սատկած գոջիները շարտում են վորտեղ պատահի, քանի վոր  
նրա վարակը նույնպես կարող է հողի մեջ յերկար մնալ:

Սոգերի ժամախոսը ևս, իհարկե, տարածվում է չհավաքված  
լեզերից, բայց հաճախ այս հիվանդությունը տարածում են շուկա-  
յից՝ վարակված տնտեսություններից բերված խոզերն ու գոջիները,  
յեթե տնտեսություն բերելի նրանք չեն յենթարկվել կարան-  
տինի:

Կարմրուկի և ժամախոսի միջև շատ դժվար է տարբերու-  
թյուն գնել: Այս հիվանդություններով վարակվելիս անասուն-  
ները կամ փորլուծություն են ունենում, կամ փորկապություն,  
մարմնի վրա բծեր են լինում, անասունը թուլություն, հոգնա-  
ծություն և մարմնի բարձր ջերմաստիճան է ունենում: Մրանց  
դեմ պայքարելու միջոցառումները միևնույն են և ամբողջությամբ

հենց այն միջոցներն են, ինչ վոր ընդհանուր գծերով վերևում նկարագրվեցին, այսինքն՝ պետք է դիտարկենք ժողովել, շենքերն ախտահանել, նախազգուշանալ՝ նոր անասուններ գնելիս և պատվաստումներ կատարել:

Պատվաստը պետք է կատարել անասնաբուժը, վորը և զիտե թե այս դեպքում ինչ հիվանդութունն է և ինչ պատվաստ պետք է կատարել, իսկ բժիշկ պետք է կանչել ու վերը նշած մյուս բոլոր միջոցառումները պետք է անմիջապես կատարել՝ բոլոր տեսակի կասկածելի հիվանդութունների դեպքում:

Խլախտ. — Խլախտով հիվանդանում են ձիերը: Կարող են վարակվել նաև մարդիկ, սակայն տավարն ու խոզերը խլախտով չեն վարակվում: Խլախտի դեպքում ձիու քթից մեծ մասամբ արտահոսում է մածուցիկ կանաչավուն թարախ, իսկ ծնոտի տակ նկատվում են (ցավազուրկ) պինդ ուռուցքներ: Ցերքեմն քթից արյունախառն լորձուցք է հոսում, յերբեմն փորի, կողերի և վոաքերի վրա յերևում են գնդաձև ուռուցքներ, իսկ յերբեմն անասունները միայն հյուժվում են և արտաքին ուրիշ վոչ մի նշան չեն ունենում: Այդպիսի թագնված ձևի խլախտն ամենից վտանգավորն է, վորովհետև դրանով վարակված ձիերը կարող են թափառել յերամակներում և վարակը տարածել: Խլախտի թագնված ձևը հայտարարելու համար անասնաբուժները մալիխնիզոցիա յեն կատարում՝ ձիու աչքի մեջ խլախտի միկրոօրգանիզմի ստացված մալիխն հոչվող հեղուկից մի կաթիլ լցնելով:

Խլախտով վարակված ձիերին վոչնչացնում են, վորովհետև բուժումը հաջող չի անցնում, իսկ վարակման վտանգը մեծ է: Իրակից չի կարելի վոչ կաշին և վոչ էլ մազը հանել. ի հարկե, այս հիվանդութունը կարող են միայն անասնաբուժները հասկանալ, բայց հիվանդ ձին ժամանակին մեկուսացնելու և սրա հետ զգուշ վարվելու ճանապարհով միշտ էլ հնարավոր է մնացած ձիերին և մարդկանց պահպանել վարակից. այս բանը պետք է խստիվ կիրառեն տավարածն ու ձիապահը:

Գեղձատապ (МЫТ). — Գեղձատապով հիվանդանում են միայն ձիերը, այն էլ յերիտասարդ ձիերը: Գեղձատապի ժամանակ ևս քթից արտահոսութուն է լինում և ծնոտի տակ ուռուցքներ են

առաջանում, դրա համար էլ հաճախ գեղձատապը շփոթում են խլախտի հետ: Գործին անտեղյակ մարդիկ ասում են, վոր գեղձատապը կարող է վերածվել խլախտի: Սա ճիշտ չէ, քանի վոր խլախտն ու գեղձատապը տարբեր հիվանդութուններ են, բայց այդ հիվանդութուններն իրարից տարբերել կարող է միայն անասնաբուժը: Գեղձատապի դեմ պայքարելու լավագույն միջոցներն են՝ ձիերին լավ խնամելն ու կերակրելը, անասուններին հիվանդներից մեկուսացնելն ու ցրտից պահպանելը:

Գորաղ. — Անտեղյակ մարդիկ հաճախ անասունի բերնում յեղած բոլոր տեսակի խոցերը դաբաղ են անվանում. մինչդեռ իրապես բերնում խոցեր կարող են առաջանալ՝ փշոտ, կծու և փչացած կերբերից: Սակայն դաբաղը վարակիչ հիվանդութունն է, վորից մեծ մասամբ վարակվում է տավարը, վորից և վարակն անցնում է խոզերի, այլ կենդանիների, իսկ յերբեմն մարդկանց վրա: Գորաղի դեպքում՝ բացի լեզվի և լնդերքի վրայի խոցերից, մշտապես խոցեր են լինում կծղակների արանքում, իսկ յերբեմն նաև կրծի վրա:

Այս հիվանդութունն այնքան կայուն է, վոր յիթե նախրի մեջ յերևաց, կվարակի ամբողջ նախիրը և կօարածվի հարևան նախիրներում. բայց այս հիվանդութունից անասունները համարյա չեն ստակում: Այս հիվանդության հետևանքով յերկար ժամանակ (յերբեմն մինչև հետևյալ ծինը) դադարում է կովի կաթնարտադրութունը և դրանով խոշոր վնաս է հասնում անասնապահությանը: Պայքարելու հիմնական միջոցը կարանտինի խստիվ կիրառումն է անասնաբուժի կողմից, վորը պահանջ զգալու դեպքում կարող է և անասուններին պատվաստել Բուժելու համար պետք է անասուններին մաքուր պահել, նրանց տալ փափուկ կամ ջրալի կերեր, բերանն ու կծղակները լվանալ մատաղ կաղնու կամ թե ուտեսու կեղևի խաշվով:

Կատարուրյուն. — Անասունների կատարության վարակը գտնվում է հիվանդների թքի մեջ և առողջին անցնում է կծելու միջոցով: Այս հիվանդության գլխավոր տարածողները շներն ու գայլերն են, զրա համար էլ այս հիվանդության դեմ պայքարելու հիմնական միջոցը հանդիսանում է այն, վոր վոչնչացվեն

գայերն ու թափառող շները: Կատաղած անասուններից վարակ-  
վել կարող են բոլոր տեսակի անասուններն ու մարդիկ: Վարակ-  
ված մարդուն պատվաստում են, վորը և համարյա բոլոր դեպ-  
քերում փրկում է մարդուն հիվանդանալուց: Շան վարակիչ կա-  
տաղուլթյունը սովորական գրգռվածութունից տարբերելու հա-  
մար կարելի յե շանը մի 2—3 ուր կապել: Շան կատաղությունն  
արագ է տարածվում: շունը խապոտ ձայնով հաչում է, կծում է  
և բոլոր տեսակի առարկաները կուլ է տալիս, թուք է արտադ-  
րում, խեղդվում է, ծնոտները չխկչխկում են: 2—3 ուրից հետո  
հետին մասը թուլանում է և ցած է իջնում, իսկ աչքերն անշարժ  
նայում են, կարծես վոչինչ չեն տեսնում: Կծելուց հետո հիվան-  
դությունը յերեան է գալիս 2—3 շաբաթից մինչև մի քանի ամ-  
սրվա ընթացքում, յերբեմն, սակավ դեպքերում, հիվանդությու-  
նը պարզվում է 3 շաբաթից ավելի շուտ, կամ թե մեկ տարուց  
ավելի ուշ:

Անհրաժեշտ է, վոր տավարածը լուրջ կերպով հսկի շներին  
ե վոչ մի դեպքում կողմնակի շուն չթողնի նախրի մեջ:

Պալարախոս (սուրբեկուլյոզ).—Պալարախոտով կամ թոքախոտով  
հիվանդանում են մեծ մասամբ կովերն ու խոզերը: Այս հիվանդու-  
թյունն ամենալուրջ նշանակությունն ունի կաթնատու կովերի  
համար, վորովհետև կաթի միջոցով վարակը կարող է փոխանցվել  
և հորթերին, և խոզերին, և մարդկանց: Կովերը նույնպես յեր-  
բեմն թոքախոտով վարակվում են մարդուց: Վաղը շրջերի միջոցով,  
վորոնց մեջ վաղվելու ժամանակ ընկնում է հիվանդ մարդկանց  
թուքը, խորխը և այլն:

Հիվանդության նշանները հետևյալներն են՝ հյուծվելը, հազը,  
յերբեմն կաթի քանակի պակասում, յերբեմն կրծի ուռուցքներ,  
յերբեմն ստերլություն, չնայած սեռական մեծ ցանկության: Այդ  
հիվանդությունը չի բուժվում, իսկ պայքարի միջոցն ուղղակի  
մորթելն է մսի համար: Կենդանի ժամանակ անասունի հիվան-  
դությունը և մորթելիս մսի պիտանիությունը վորոշում է անաս-  
նաբուժը: Այդ հիվանդության դեմ նախապատշաճ կան միջոցներ  
հանդիսանում են պահելու պայմանների բարելավումը և կա-  
կածելի անասունների մեկուսացումը:

Վարակիչ վիժում (ինֆեկցիոն վիժում, բրուցելլոզ).—Այս  
հիվանդության վարակը կարող է կովանոցներում յերկար մնալ  
և փոխանցվել ուրիշին՝ կերի, ցամքարի ու բոլոր տեսակի կեղտի  
հետ, ինամեկու ժամանակ և կթելիս, այլև արածելիս: Յերբեմն  
բոլոր կովերը վարակվում են և վիժում, այնպես վոր սպասվող  
ամբողջ սերունդը կորչում է: Պայքարը պետք է ընթանա  
անասնաբուժի ցուցմունքներով, իսկ տավարածներն ու դոժա-  
պահները անասունների վիժած տեղերում ամենախիստ մաքուր-  
թյուն պետք է պահպանեն, անասուններին պահեն մեկուսացրած  
վիճակում, կաթի առաջին շիթերը թափեն վոչ թե հողի վրա, այլ  
առանձին անոթի մեջ, և կովի ամբողջ կաթը լավ յեռացնեն:  
Հիվանդությունը վարակիչ է թե ուրիշ անասունների և թե  
մարդկանց համար. վարակածները ծանր դողերոցք են ունենում:

Նեոսոցի վարակիչ բորբոխ (վագինիտ).—Կովերի հեղուցի  
դրսի մասի վրա առաջ է գալիս ցան, վորի հետևանքով նրանք  
դառնում են ընդհանրապես վատառողջ, նրանց կաթը պակասում  
է, իսկ յերբեմն էլ վիժում են: Այսպիսի ցան է առաջանում նաև  
ցուլերի թլիփի և առնանդամի վրա, վորոնք և հիվանդության  
զլխավոր փոխանցողներն են հանդիսանում:

Այս հիվանդության դեպքում անասուններին պետք է բու-  
ժել կաղնու կեղևից պատրաստած խաչվով և կրեոլինի լուծույթ-  
ով: Պայքարի միջոցն է հսկել բեղմնավորող ցուլերի վրա:

Տավարի դումալիե սենդ.—Վորոշ պուղերում տարեց-տարի  
ցուլերը կոտորվում են մի հիվանդութունից, վորը գուժամային  
(կատարային) չարորակ տենդ կամ գլխի հիվանդություն է կոչ-  
վում: Այդ անունն է կրում նրա համար, վոր հիվանդության  
զլխավոր նշաններն արտահայտվում են գլխի վրա, այն է՝ ականջ-  
ներն ու յեղջյուրները տաքանում են, աչքերը թարախակալում  
ու պղտորվում են, քթից ու բերանից լորձունք ու թարախ է  
հոսում: Սկզբում կենդանին փորկապ, իսկ հետո լուծ է ունենում:  
Վարակը կարող է գտնվել խոնավ գոմերում, իսկ մեծ մասամբ  
կեղտոտ և կանգնած ջրերում:

Ձիերի մեկնիզիս.—Մենինգիտը ևս յերբեմն կոչվում է գլխի  
հիվանդություն, յերբեմն էլ «թափառաշրջիկ» կապված նրա

գլխավոր նշաններն հետ, այն է՝ հիվանդ ձին ցնդածի նման գլխով հենվում ե պատին, հետո կատաղում ե եզրույր խփում այս աւ այն կողմը, վերջիվերջո անդամալուծութունից շուրթերը կախվում են, հետամասը թուլանում ե ու յերբերվում նույնպես անդամալուծութունից:

Մենինգիտով հիվանդացած ձիերին պետք ե անմիջապես ընդհանուր ախոռներից ու յերամակներին մեկուսացնել ե հայտնել անասնաբուժին՝ մյուս միջոցառումները գործադրելու համար:

Մտադառների վտրակիչ հիվանդությունները.— Ավելի շատ կորուստներ լինում են մատղաշների, հատկապես հորթերի մեջ. սպիտակ փորուձից ե պարատիֆից: Պետք ե ասել, վոր այս յերկու հիվանդութուններն ժամանակ ել լուծ ե լինում. դրա համար ել մատղաշների բոլոր տեսակի լուծի դեպքում պետք ե սրանց անմիջապես նախրից անջատել ե անասնաբուժի ցուցմունքներով բուժման միջոցներ ձեռք առնել: Մի քանի վայրերում, գլխավորապես հարավային յերկրներում, լինում ե նաե մատղաշների թռքերի վարակիչ բորբոքում, վորի ժամանակ անասունները հազում են, թուլանում ու հյուժվում: Այսպիսի հիվանդներին ես պետք ե անմիջապես մեկուսացնել:

Այդ հիվանդութուններն գլխավոր պատճառը ծծկեր մտադաշներին կեղտոտ պահելն ու կերակրելն ե, այդ պատճառով այդ հիվանդութունների առաջին կանխման միջոցը խնամքի ե կերակրման ժամանակ մաքրութուն պահպանելն ե:

## ՊԱՐԱԶԻՏՆԵՐԻ ԱՌԱՋԱՅՐԱՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թեև վարակիչ հիվանդութուն առաջացնող միկրոբները նույնպես հանդիսանում են պարազիտներ, սակայն բառի լայն իմաստով ընդունված ե պարազիտ անվանել ավելի խոշոր որդանիզմներին (ինչպես, որինսակ՝ ճիճուները, անտառային տիգերը, բուռերի թրթուրները, քոսի տիգերը), վորոնք սնվում են ուրիշի օրգանիզմի հաշվին: Այդ պարազիտներից մի քանիսը վոչ միայն սնվում են ուրիշ մարմնի հաշվին, այլև թունավորում են մարմինն իրենց թույնով: Այդպես են, որինսակ՝ ճիճուները, բուռերի

թրթուրները: Իսկ մի քանիսը վոչ միայն ոտարի արյունով են սնվում, այլև նրա մեջ են մտցնում վարակը: Այդպես են, որինսակ՝ անտառային տիգերը: Մենք այդ պարազիտներից ել կսկսենք, վորովհետև նրանք կենդանիներին փոխանցում են ամենալուրջ արտաային հիվանդութուններից մեկը, վորը կոչվում ե պիրոպլազմոզ:

## ՊԻՐՈՊԼԱԶՄՈԶ

Ինչպես մարդուն մալարիայով (դողերոցք) վարակում են մոծակները, նույն կերպ ե անասուններին նման հիվանդությամբ վարակում են անտառային տիգերը: Զիերի մեջ այս հիվանդութունը տարածվում ե գարնանը՝ մինչև հուլիս ամիսը, դրա համար ել այս հիվանդութունը յերբեմն կոչվում ե նաե ձիերի գարնանային հիվանդութուն, սակայն այդ հիվանդութունը կարող ե տարածվել նաե աշնանը: Տավարը ես գլխավորապես վարակվում ե գարնանը ե աշնանը, սակայն նրանց մոտ այդ ժամանակ հիվանդությանը զուգակցում ե արենախառն միզածորութունը. վորի պատճառով ե հիվանդութունը կոչվում ե արյունոտ մեզ: Սակայն արյունոտ մեզն առաջ ե գալիս նաե մի քանի կանաչ խոտերով ե կպրոտ բույսերով վավակվելուց, վորի մասին կխոսվի հետագայում:

Վարակիչ արյունոտ մեզի (պիրոպլազմոզ) առանձնահատուկ տարբերութունն այն ե, վոր այս դեպքում առաջանում ե ուժեղ տապ (տաքութուն), հիվանդութունը ձգձգվում ե մի շաբաթ ե ավելի, ե նրանով վարակվում են կենդանիները մեկը մյուսի յետևից ամբողջ գարնան ընթացքում, յերբեմն նաե ամառը:

Այս հիվանդության վարակը հանդիսանում են քորոցի ծակոցի հետքից հազար անգամ փոքր, մանրագույն պարազիտները: Այս պարազիտները տիգերի միջոցով ընկնելով անասունի արյան մեջ, տարածվում ու բազմանում են ե քայքայում նրա մասերը (արյան կարմիր մարմնիկները): Բոլոր տիգերը, իհարկ ե, վարակ չեն տարածում, սակայն անասունների արյունը ծծող տիգերի մեջ նույնպես կարող են լինել հիվանդութուն փոխանցողներ:

Քիերի մոտ տիգերն ամենից ավելի շատ կպած են լինում բաշխ տակ, իսկ տավարի մոտ՝ վոտների վրա (աճուկների տակ):

Տիգերը վարակը վերցնում են հիվանդ անասունի արյան հետ և փոխանցում իրենց սերնդին: Հետևյալ դարնանը տիգերի սերունդը վարակում է առողջ կենդանիներին:

Հիվանդութունն ավելի ճիշտ կարելի չե վորոշել արյան քննությամբ, իսկ այդ, իհարկ է, միայն անասնաբուժը կարող է կատարել:

Պետք է հիշել, յեթե գարնանն անասուններն արածում են ճահճոտ արոտներում և այնտեղից տիգեր են բերում իրենց մարմնի վրա, ապա նրանք կարող են հիվանդանալ այդ հիվանդությամբ:

Յեթե անասունները թուլանում, տխրում, վատ են ուտում, աչքերն ու յեղջուրները տաքանում են, աչքերը դեղնում են և շնչառությունն արագանում է, նշանակում է հնարավոր է, վոր սրանք տիգերի միջոցով վարակված լինեն պիրոպլազմոզով:

Այնուհետև տավարի, իսկ յերբեմն և ձիերի մեղը կալմբագորջ մուգ եզառնում, անասունները խիստ մաշվում են, թուլանում և հարկ յեղած չափով խնամքի ու բուժման բացակայության դեպքում հաճախ սատկում են:

Այս հիվանդությունը բուժում են արյան մեջ հատուկ ներարկումներ կատարելով, վորը պետք է կատարի անասնաբուժը կամ բուժակը:

Հիվանդ անասունի սատկելու կամ առողջանալու հարցը մեծ մասամբ նրա խնամքից է կախված:

Այդ խնամքը հետևյալն է.

1. անասունին լրիվ հանգիստ տալ չոր, մաքուր շենքում, վորի ողը մաքուր պետք է լինի և միջանցիկ քամիներ չպետք է լինեն.

2. կերակրել միայն լավ խոտով, քիչ քանակի վարսակի (ձիերի համար) կամ թեփի (կովերի համար) հետ միասին.

3. հաճախակի խմեցնել մաքուր, զով ջուր:

Ամենից կարևորը նախազուշական միջոցներն են, վորոնց մասին հատկապես տավարածը պետք է լավ իմանա: Այդ միջոցառումները հետևյալներն են.

1. պետք է դարնան և աշնան ամիսներին խուսափել անա-

սուններին արածեցնել ցածրադիր, մանր ծառերով ու թփուտներով ծածկված վայրերում և առհասարակ այն տեղերում, վորտեղ տիգեր կան. տավարածը պետք է այս վայրերը լավ ճանաչի.

2. մինչ տրոտի հանելը անասունների վզին ու վոտներին քսել վորև է հոտավետ նյութ, որինակ՝ ձեթի հետ խառնած նավթ կամ յավշանի խաշուն կանեփի ձեթի հետ.

3. հաճախակի գննել անասուններին, հավաքել նրանց վրա գտնված տիգերը և տրորել վոտքի տակ.

4. ամեն որ արտաից կամ աշխատանքից հետո ուշագիր կերպով մաքրել անասուններին, անպայման հեռացնելով և վոշնչացնելով տիգերին:

Ներկայմուս անասուններին մեծ հաջողությամբ լողացնում են կամ շփում են մկնդեղային լուծույթով, վորն սպանում է տիգերին:

Անասուններին լողացնելու և շփելու նման գործողությունները պետք է կատարել միայն անասնաբուժի կամ բուժակի ղեկավարությամբ, ճիշտ ստուգելով լուծույթի վորակը, վորպեսզի թունավորման դեպքեր չլինեն:

Անասուններին տիգերից պաշտպանելու ամենահուսալի միջոցը մարդագետիսների և արոտների մշակումն է, միտամանակ պոկահանելով թփուտները, վոշնչացնելով մուխոտները, չորացնելով ցածրադիր տեղերը, փոփոխելով արոտակտորները, նրանք վարելով և հանքային նյութերով պարարտացնելով: Դրա մասին մենք խստեցինք նաև այս գրքի սկզբում և պետք է կրկնենք, վոր այս կարևոր տնտեսական միջոցառումը հանդիսանում է նաև անասուններին բոլոր տեսակի պարազիտներից պաշտպանելու սանիտարական կարևորագույն միջոցը:

### ՃԻՃՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒՅՈՒՆՆԵՐ

Կենդանիների ճիճվային հիվանդությունների վրա քիչ ուշագրություն ենք դարձնում: Այնինչ այս հիվանդություններն աճանապահությանը շատ խոշոր վնաս են հասցնում: Տավարածը պետք է ծանոթանա այս հիվանդությունների, նրանց պատ-


ճառները և պայքարի միջոցները հետ, վորովհետև հիվանդութիւններն առաջանում ու տարածվում են մեծ մասամբ արտա-  
յին թերութիւնների հետեանքով:

Լյարդանհիմունք.— Աշնանը կամ գարնանն առաջ են գալիս  
վոչխարների համաճարակ հիվանդութիւններ, վորոնց պատճառը  
սխալմամբ յերբեմն մրսելն են համարում:

Հիվանդութիւնն սկսվում է հետեյալ նշաններով. վոչխարը  
հետզհետե ուժից ընկնում է, ախորժակը կորցնում է, Ապա մարմ-  
նի զանազան մասերում, իսկ ամենից շատ ներքեի ծնոտի և  
գլխի վրա յերևան են գալիս այտուցներ (խմորման ուռուցքներ).  
յերբեմն լուծ է լինում: Լորձաթաղանթն աչքերի կոպերի տակ  
և բերանի մեջ զուստովում է կամ դեղնում:

Վոչխարը կամ շուտով մահանում է, կամ թե թուլանում,  
քաջ է գալիս մինչև այն ժամանակ, յերբ հարկադրված են լինում  
մորթելու:

Յերբ այդպիսի հիվանդ վոչխարը մորթում են և նրա լյար-  
դը քննում, տեսնում են, վոր հիվանդութեան պատճառը վոչ թե  
մրսելն է յեղել, այլ լյարդաճիճուները (տերեւածն քափանակ), վո-  
րոնք վոչխարի լյարդի մեջ են մտել դեռևս ամառը և ծծում են ին-  
նրա հյութերը (նկ. 13):



Նկ. 13. Լյարդաճիճու (քափանակ)  
և խիռնջ

Այդ ճիճուների սաղմերը բազ-  
մանում են ամրանը՝ ճակիճների  
լճացած ջրերի ակերին ապրող  
փոքրիկ խիռնջների մեջ: Խը-  
խուռնջի մարմնից դուրս գալով,  
սաղմերը կպչում են խոտերին  
կամ լողում ջրի մեջ:

Այսպիսի տեղերում վոչխար-  
արածելիս սաղմից գուրս յեկած  
մանր ճիճիկները կամ կանաչի  
կամ ջրի հետ ընկնում են նրա  
ստամոքսի և ապա աղիքների

մեջ, այնտեղից ել լյարդի մեջ, վորտեղ պարզանալով, աշնանը  
զառնում են տերեւածն ճիճու:

Խիռնջներն ել իրենց հերթին այս ճիճուների սաղմերն  
ստանում են հիվանդ վոչխարների խոնավ տեղերում ընկած աղբից:

Այսպիսով, առողջ վոչխարներն այնպիսի ցածրադիր վայ-  
րերում, վորտեղ կան վարակված խիռնջներ, ստանում են ճիճու-  
ներ, իսկ հիվանդ վոչխարներն իրենց աղբի միջոցով ճիճուների  
սաղմերը փոխանցում են ուրիշ առողջ խիռնջների՝ նոր տեղում:

Պարզ է, վոր այս հիվանդութեան դեմ պայքարելու համար  
պետք է դորձադրել կրկնակի նախազգուշութիւն. առաջինը՝  
պաշտպանել վոչխարները վարակումից և յերկրորդ՝ թույլ չտալ  
վոր խիռնջները վարակվեն:

Կնշանակի, նախ՝ չպետք է թողնել, վոր վոչխարներն արա-  
ձեն ցածրադիր վայրերում և ճահճային տեղերում, վորտեղ  
խիռնջներ կան, այլ պետք է չորացնել նման տեղերը, վորով-  
հետև չոր տեղերում թե խիռնջները և թե ճիճուների սաղմերը  
վոչնչանում են: Յերկրորդ՝ վոչխարի աղբը պետք է տեղափոխել  
միայն չոր և բարձր հողամասերը, վորտեղ խիռնջներ չկան և  
անասուններ չեն արածում, իսկ հիվանդ վոչխարների լյարդը  
պետք է կամ վոչնչացնել, կամ թե շատ լավ յեփել. վոչ մի դեպ-  
քում կենդանիներին չի կարելի կերակրել հում լյարդով. թեև  
նրանք կարող են չվարակվել, բայց յերբեմն կարող են իրենց  
արտաթորութեան միջոցով տարածել վորդերի սաղմերը:

Պետք է սաւել, վոր ճիճուները կարող են լինել նաև տաղարի  
(մանավանդ հորթերի), և նույնիսկ մարդկանց լյարդի մեջ, յեթե  
լյարդաճիճուների սաղմեր ունեցող ջուր խմեն: Բայց ճիճուները  
դիտավորապես վոչխարի լյարդում են լինում:

Փոխանցում.— Վոչխարների թօքերում լինում են նաև  
բարակ, վորովմած մաղի նման վորդերի ձևի ճիճուներ. այդ  
ճիճուները գոյանում են սաղմերից նույնպես խոնավ, ճահճուս  
արտազայրերում և լճացած ջրերում: Վոչխարներն այս ճիճու-  
ներից հաղում են, կոկորդը քոր է գալիս, քթից լորձ է ծորում,  
նիհարում են և նույնպես կարող են սատկել: Սակայն յեթե հա-  
ջողի այդպիսի հիվանդ վոչխարներին լավ կերակրելով ու խնամելով  
պահել մինչև գարուն, այդ ժամանակ նրանք հաղալով ու խիռ-  
նջով վատրում են ճիճուներին և առողջանում: Հետևապես, պայքարն

այդ ճիճուներին դեմ տարվում է նախ՝ նույն չորացման միջոցառումներով և արոտավայրերի մշակման միջոցով. յերկրորդ՝ հիվանդ վոչխարներին ձմեռվա ընթացքում ավելի լավ խնամելու միջոցով և յերրորդ՝ հետևել, վոր գարնանը, յերբ հիվանդ վոչխարներն սկսում են խխել ճիճուներին, նրանց խուխն ու աղբը խնամքով հավաքվի, այրվի կամ հողի մեջ թաղվի:

Նախքան ճիճուներից ազատվելը վոչխարներին արոտավայր դուրս չբերել, կամ նրանց համար հատկացնել առանձնացրած և չոր արոտավայր, վորը 5-6 որ ոգտագործելուց հետո հանքային պարարտանյութի հետ վարել: Նույն թոքաճիճուներից ունենում են նաև արոտում արածող հորթերը. հիվանդության նշաններն ու պայքարի միջոցները նույնն են, ինչվոր ասված է վոչխարների մասին:

Երիկնոկներ յիվ ուղեղային պեքսիս.— Շների աղիքներում քարակ յերկդի ձևով ճիճուներ են լինում: Այդ ճիճուների մի տեսակը շատ փոքր է լինում (մի սանտիմետրից վոչ ավելի յերկար) և կոչվում է եխինոկոկ, իսկ մյուսները (մինչև 20—30 սանտիմետր յերկարությամբ)՝ կոչվում են ուղեղաճիճու (уепень мозговика): Շները վազվում են արոտների վրայով և իրենց կղկղանքի հետ արտաթորում են այս վորդերի մասերը կամ ձվերը: Յերբ շատ կեղտոտած կանաչի հետ եխինոկոկի ձվերն ընկնում են անասունների ստամոքսն ու աղիքները, այդ ժամանակ ձվերից անջատվում են վորդերի սաղմերը, վորոնք և անցնում են լյարդի, թոքերի և այլ որդանների մեջ. անա այսպեղ գոյանում են եխինոկոկի ջրալի բջտիկները: Անասունները մորթելիս նրանց թոքերում և լյարդում այդպիսի բջտիկներ հաճախ են լինում:

Յերբեմն այս բջտիկները քայքայում են թոքերը և լյարդի մեծ մասը: Դրա հետևանքով անասունները թուլանում, հիվանդանում և կորցնում են իրենց արտադրողականությունը: Անասունների այս հիվանդությունն այն աստիճանի ձգձգվող է, վոր ձանաչել անգամ դժվար է: Կովն անընդհատ հազում է, մաշվում է, վատ է ուտում, թուլանում է, բայց ազրում է 1—2 տարի, իհարկ է, միանգամայն ի վնաս տեսեսության:

Իսկ շները վճրտեղից են վերցնում այս ճիճուները. իհարկե, վոչխարի լյարդի, թոքերի մեջ գտնվող այդ բջտիկներից, և մարգիկ, փոխանակ շան ստամոքսը ճիճուներից մաքրելու մասին մտածելու, իրենք են այս ճիճուներով վարսկում շներին, վորովհետև անասունը մորթելուց հետո բջտիկներից փչացած թոքերն ու լյարդը շարտում են շների առաջ: Պետք է այսպիսի բջտիկներ ունեցող թոքերն ու լյարդն անպայման լավ յեփել և նոր միայն գործադրել: Պետք է ասել, վոր մարդը ևս կարող է եխինոկոկի ձվերից վարակվել և նրանց լյարդում ու թոքերում ևս կարող են բջտիկներ զարգանալ. դա կարող է առաջանալ շների կեղտոտած կանաչեղեն ուտելուց, կամ թե կեղտոտ ձեռքերով շներին ձեռք տալուց:

Յերկրորդ՝ ավելի յերկար շնաճիճուներից միանգամայն նույնանման ճանապարհով վոչխարները վարակվում են պտտախտով. այս դեպքում բջտիկներն առաջանում են նրանց ուղեղի մեջ, Դրա հետևանքով առաջանում է ծանր և անբուժելի մի հիվանդություն, վորը կոչվում է ուղեղային պտտախտ: Իսկ շները վարակվում են այդ ուղեղային ճիճվով, յերբ ուտում են ուղեղային պտտախտից ստեղծված վոչխարի գլուխը՝ վորովհետև հիվանդ վոչխարի գլուխը գցում են շներին: Հետևապես այս դեպքում ևս հենց իրենք մարդիկ ոգնում են ճիճուներին իրենց զարգացման ցիկը լրիվ կատարելու:

Ուղեղային պտտախտով հիվանդ վոչխարը կանգնում է գլխիկոր, կամ ջղաձգաբար վիզը ծուռում է մի կողմ, կամ յետ՝ գեղի մեջքը: Աչքերը կարմրում, շլվում են, ատամները կրճտում և բերանից փրփուր է գալիս: Յերբեմն վոչխարը վազ է տալիս գեպի առաջ, բաղիվելով զանազան առարկաների, իսկ յերբեմն էլ նույն տեղում շրջապտույտ է անում: Յերբեմն թվում է, թե հիվանդությունն ընդհատվել է, բայց մի քանի ամիս հետո նորից յերբան է գալիս և անգամ անասունին սպանում:

Այս հիվանդությունն անբուժելի յի, դրա համար էլ խիստ ուշադրություն պետք է դարձնել, վոր անասուններն այս հիվանդությամբ չհիվանդանան:

Բանի վոր ճիճուները շների միջոցով են տարածվում արոտ-

ների մեջ, նշանակում է այն շներին, վորոնք նախքի հետ շք-  
ջում են, կամ առնասարակ լինում են արտաներում, պետք է  
անասնաբուժի ցուցմունքներով ամեն տարի դաբնանը ճիճուներ-  
բից մաքրել:

Բուժման ամբողջ ժամանակամիջոցում (10—12 օր) շունք  
կապած են պահում, իսկ կղկղանքը թաղում են հողի մեջ: Նախ-  
քի շներին ճիճուներից մաքրելու ամբողջ հոգան ընկնում է տա-  
վաբաժի վրա, վորը պարտավոր է այս գործով դիմել տեղական  
անասնաբուժին կամ բուժակին: Հսկող շներին պետք է կապած  
պահել, իսկ թափառողներին՝ վաչնչացնել:

Յեթե շների մեջ այս ճիճուները չլինեն, անասունի մեջ էլ  
այս բնականորեն չեն լինի, իսկ յեթե շները չուտեն անասունի  
բշտիկներ ունեցող թոքերն ու լյարդը, սրանք էլ այս ճիճուներ-  
ով չեն վարակվի:

Ինչպես տեսնում ենք, ճիճվային հիվանդությունները կապ-  
ված են տարբեր կենդանի եյակների միջև գոյություն ունեցող  
մի ամբողջ շրջապատյալի հետ:

Սրա համար էլ այս հիվանդությունները դեմ պայքարելիս  
պետք է դիտենալ, թե յնրը և վորտեղ են նրանք բնակվում  
և վորտեղ կարելի յե նրանց հեշտությամբ վաչնչացնել:

Աղիքային ճիճուներ (պարազիտային վորդեր).—Առողջ կենդա-  
նուն քայքայում են վոչ միայն թոքերի և լյարդի մեջ գտնվող  
պարազիտները, այլև աղիքների ճիճուները՝ այդ սպիտակ, կլոր,  
լուցկու նման բարակ (նաև ավելի հաստ), կամ ժապավենի նման  
հարթ վորդերը, վորոնց կտորտանքը հաճախ կարելի յե տեսնել  
ձիւռ կամ այլ կենդանիների նոր արտաթորած աղբի մեջ: Այդ  
վորդերը յերբեմն այնչափ ջատ են զարգանում ձիւռ աղիքների  
մեջ, վոր ձին վատ է ուտում, քայքայվում է ու տառապում է  
ծակոցներից: Այս վորդերից մի քանիսը խցկվում են աղիքների  
պատերին, ծակում են այն և մահացու հիվանդություն են  
տալ բերում: Անասուններն այս վորդերի մեծ մասն ստանում  
են արտախց: Անասուններին այդ վարակումից պաշտպանել հնա-  
բավոր է հենց իրենց՝ անասուններին բուժելու միջոցով, վորով-  
հետև հենց նրանք են, վոր ճիճուների ձվեր պարունակող իրենց

աղբով վարակում են արոտը, իսկ, վոր ամենակարևորն է, արոտ-  
ների ճիշտ խնամք տանելու միջոցով՝ հողակտորներով արածեց-  
նելու, աղբի կույտերը ցրելու, չորացնելու, չոր աղբը հերկելու,  
ջրեկատեղերի ափերն աղբից մաքրելու միջոցով:

Յեթե անասունի աղբի մեջ նկատվում են կլոր, սղիտակ  
կամ թե ժապավենի նման բարակ վորդեր, այսպիսի անասունին  
պետք է թողնել տանը, վարպետի ճիճուների սաղմերով չվարակի  
արտախցի կանաչն ու ջրեկատեղերը: Այս դեպքում դիմում են բժշ-  
կի՝ հակաճիճվային դեղորայք և դրանց գործադրման վերաբե-  
րյալ ցուցմունքներ ստանալու համար:

Ճիճվային հիվանդությունների նկարագրությունից տեսնում  
ենք, վոր արտախցի պայմաններում ճիճվային վտանգի դեմ պայքա-  
րելը միանգամայն հնարավոր է, անգամ ավելի պարզ ու հեշտ  
գործ է, քան մանրիների դեմ պայքարելը, այնինչ ճիճուները  
կենդանի որգանիզմի համար վոչ միայն ինքնին վտանգավոր  
ֆլասատուներ են, այլև վնասելով մարմնի աղիքներն ու մյուս  
մասերը, մանրենների համար ճանապարհ են բաց անում դեպի  
մարմնի այլ մասերը:

Խոզերի Ֆիմնացներն ու սրիսիմացները. — Խոզապահներն ու  
խոզարածները պետք է լավ հիշեն, վոր խոզերը հաճախ վոչ մի  
կեղտոտությունից, այս թվում նաև մարդկանց արտաթորու-  
թյունից և լիչերից չեն խորշում, այնինչ այդպիսի կերի միջո-  
ցով նրանք կարող են ճիճուներով վարակվել: Այս ճիճուներից  
ամենավտանգավորները ֆիմնաներն ու սրիսիմաներն են, վո-  
րոնք և փչացնում են խոզի միսը:

Ֆիմնաների և սրիսիմաների վարակման վտանգից խոզերին  
կարելի յե պաշտպանել հետևյալ կերպ. չպետք է թույլ տալ, վոր  
մարդիկ արտաթորեն բաց և անհարմար տեղերում: Չպետք է  
թույլ տալ, վոր խոզերն անմաքուր տեղերը փորփրեն, չի կարելի  
արտաներում մկների դիակներ թողնել, պետք է ամեն տեղ և ամեն  
կերպ վաչնչացնել մկներին:

## ԲՈՒԲԵՐԻ ԱՌԱՋԱՑՐԱՍ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բուռերը, պիժակները, կծող ճանճերը, մժգուկները և այլ մի-

Ղատներ կարող են արոտի շրջանում նեղութուն պատճառել անասուններին: Սրանց դեմ պայքարելու ընդհանուր միջոցները հետևյալներն են. առաջինը՝ դարձյալարոտների մշակումը, այսինքն՝ հաժը տեղերի չորացում, թփուտների կտրատում, հերկ, յինթացանք, հանքային պարարտացում. յերկրորդ՝ հողակտորների և անասունների կանգնելու տեղերի փոփոխումը, ազբ ցրելը, չորացնելը և հերկելը. յերրորդ՝ ամենատաք օրերը, յերբ միջատներն ավելի շատ են կուտակվում, արածեցնելու ժամանակ ընդմիջումներ կատարել, անասուններին քամի խաղացող տեղերում կանգնեցնել, մխացող խարույկներ վառել. կամ թե, հակառակ պարագայում, անասուններին զոժում պահել. չորրորդ՝ անասուններն արոտից վերադառնալուց նրանց անպայման թիմարելը, ընդվորում պետք է պատրաստել ոչինչի և մոխրաջրի խաշու և դրանով շփել անասուններին, բացի այդ, խուզել անասունների անիծ պարունակող մազերը:

Չնայած վոր այս ճանճերը կարող են կծելով վարակիչ հիվանդութունները տարածել, բայց դա հաճախակի չի լինում, իսկ բոսերը չնայած չեն խայթում և անասունների արյունը չեն ծծում, սակայն ավելի մեծ վնաս են տալիս, քան մյուս վնասատուները:

Բոսերը ձիերի մազերի մեջ, գլխավորապես վոտքերի վրա ձվեր են դնում, իսկ ձին լիզելով կուլ է տալիս և նրա ստամոքսի մեջ բոսի թրթուրներ են դուրս գալիս, վորոնք և խցկվում են ձիու կոկորդի և աղիքների մեջ (նկ. 14):

Այս թրթուրները վխտում են ձիու աղբի մեջ և հետույքի շուրջը, վորտեղ կպած մնում են, սպասելով իրենց հետագա դարգացման հարմար մոժնություն: Իսկ այդ հետագա դարգացումն այն է, վոր դրանցից դուրս են գալիս նոր բոսեր, վորոնք դարձյալ պետք է



նկ. 14. Բոսը և նրա թրթուրը

իրենց թրթուրների միջոցով վարակեն ձիուն:


Տավարի մոտ բոսերի թրթուրները տեղավորվում են կաշվի տակ՝ վողնաշարի յերկու կողմը, առաջացնելով այստեղ ուռուցք-

ներ և յելունդներ: Վոչխարների մոտ բոսն արդեն թրթուրի պատրաստի սաղմը դնում է նրանց քթի մեջ, Պարագիտների այդ բոլոր գործողութունները խիստ անդրադառնում են անասունների առողջութան վրա: Ձիերը տառապում են ստամոքսի ծակոցներից և անգամ սատկում են: Կովերը մաշվում են, կաթը պակասեցնում. բացի դրանից, մաշկի վրա մնացած ծակերից, սպիններից անասունի կաշին փչանում է և կորցնում իր ապրանքային արժեքը: Վոչխարները հիվանդանում են հարբոխով, հագով, բոսի պտտախտով և հաճախ սատկում են: Անասունի վրա հսկող, նրան խնամող յուրաքանչյուր մարդու և տավարածների համար միանգամայն մատչելի աշխատանք է բոսերի դեմ պայքարելու գործը: Բացի բոսերի դեմ պայքարելու վերը նշած ընդհանուր միջոցառումներից, կիրառվում են առանձին միջոցառումներ: Քանի վոր ձիու բոսն առաջ է գալիս ձիու հետույքից դուրս յեկող թրթուրներից, դրա համար ել թրթուրները պետք է հանել և տրորել, վորպեսզի սրանցից բոսեր դուրս չգան և չթռչեն ձիերի վրա: Նույնը պետք է կատարել նաև այլ տավարի վերաբերմամբ, սրանց մաշկի տակից հեռացնելով բոսի թրթուրները, վորովհետև սրանցից ել դուրս են գալիս կովի բոսերը:

Թրթուրը կարելի յե դուրս հանել նաև մատներով, հուպ տալով ուռուցքի չորս կողմից. սակայն յիրբեմն դրանից թրթուրները ճխլվում են, վորի հետևանքով և մարմնի վրա վնասակար վերքեր են առաջանում: Դրա համար ել նպատակահարմար է ուռուցքը սղմել լայն բուկ ունեցող չի միջոցով, վորով և հեշտ կլինի կաշվի տակից հանել բոսի թրթուրը:

Վոչխարներին բոսից պաշտպանելու համար արոտ ուղարկելուց առաջ կերակրում են ձյութով պատած տաշտակի մեջ, վորովհետև վոչխարը կերն ուտելուց դուրսը ձյութին է քսում, իսկ բոսի թրթուրները դրանից իույս են տալիս:

Տավարին բոսից պաշտպանելու համար կարելի յե նրանց վոտքերի և մեջքի մի քանի մասերին, կրծին քսել ձեթ ու նավթ, կամ ձեթ ու մազութ կամ թե ձեթ ու ձյութ, կամ թե քսել կանեփի ձեթ ոչինչորջրի հետ. իսկ ամենակարևորը՝ շոգ ժամերին, յերբ շատ բոսեր են թռչում, թփուտների մեջ չարածեցնել և



Նկ. 15. Քոսով վարակված վոշիօրը

ամեն որ արտից կամ աշխատանքից դառնալուց հետո, վերևում նկարագրած ձևով հավաքել անասունների վրայի բուսերի անիծ-ները:

### Ք Ո Ս

Պարազիտների առաջացրած հիվանդութունների թվում առանձնակի տեղ է բռնում հատկապես վոշխարարուծությանը խո-չոր ֆլաս հասցնող քոսը, վորը զրկում է վոշխարներին բրդի նոր-ժալ մթերատվությունից: Սակայն յեթե քոսը տարածվի ձիերի մեջ, ապա այն կարող է մեծ ֆլաս հասցնել տնտեսության քաջող ուժին, կովերը վարակվելիս իջնում է նրանց կաթի քանակը, իսկ խոզերը՝ նիհարում են: Ընդհանրապես քոսը լուրջ հի-վանդություն է և տավարածից պահանջում է խիստ հսկողու-թյուն, վորպեսզի վորևե հիվանդ անասուն չխցկվի նախրի մեջ: Այն ասացվածքը, թե «քոսոտ վոշխարը վողջ հոտը կփչացնի» հիմք ունի, քանի վոր քոսը կենդանիների թույլ խնամքի և հըս-կողության բացակայության դեպքում կարող է տարածվել շատ կենդանիների մեջ (նկ. 15):

Քոսն առաջ են բերում մանրագույն, միայն խոչորացնող ապակու առկ տեսանելի հատուկ տիզեր, վորոնք ծակում անց-

ծում են կաշվի մեջ և կերակրվում կենդանու մարմնի հյութերի հաշվին:

Տիզերը կարող են անցնել մի անասունից մյուսին, և ան-գամ մարդուն՝ շփվելու միջոցով. նրանք կարող են անցնել նաև ամեն տեսակի առարկաների միջոցով, վորոնց հետ հիվանդները շփում են ունենում (լծասարք, կերամաններ, ցանկապատեր, վորոնց քսվում են մարմինը քորելու համար): Դրա համար ել պետք է վոշ միայն կենդանիների, այլև նրանց շրջապատող առարկաների վրայի տիզերը վոջնչացնել:

Եզ տիզը կենդանու կաշվի տակ ձվեր է ածում, վորոնք ծածկ-ված են այնպիսի ամուր թաղանթով, վորոնց վրա վոջ մի դեղ համարյա թե ներգործություն չի ունենում: Այս ձվերից 6—8 որ հետո դուրս են դալիս մատաղ տիզեր: Սրա համար ել հիվանդ անասունին բուժող բոլոր միջոցառումները պետք է կրկնել 6—7 որը մեկ անգամ, վորպեսզի վոջնչացվեն այդ նոր դուրս յեկած տիզերը:

Դեզը կազմված է յերկու նյութից. 1) մեկը լուծում է կաշ-վի վրայի թեփերն ու կեղերը և տիզին մերկացնելով՝ զրկում է նրան պաշտպանությունից, 2) իսկ մյուսը՝ թունավորում է հենց իրեն՝ տիզին:

Առաջին դեպքում գործադրում են սագոն, սողայի լուծույթ, մոխրաջուր, կրաջուր, ալկոհոլ: Յերկրորդ դեպքում՝ ձյութ, ծը-ծումբ, հավթ, ծխախոտի խաշուկ, կրեոլինի լուծույթ և այլն:

### ՎԵՐԻ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑԱՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարակիչ հիվանդությունները վտանգավոր են նաև նրա-նով, վոր նախրում առաջ դալիս կարող են արագորեն տարածվել շատ կենդանիների մեջ: Պարազիտներից առաջացող հիվանդու-թյունները ևս կարող են տարածվել շատ կենդանիների մեջ, սա-կայն ամենից ավելի շատ հիվանդություններ առաջանում են կե-րի անկանոնությունից:

Իհարկե, կերային անկանոնությունից քիչ հիվանդություններ

չեն պատահում նաև մտերային պահվածքի ժամանակ, առանձնապես մատղաշները մեջ, բայց կան ավելի ծանր հիվանդութիւններ, վորոնք առաջանում են արոտում: Այս հիվանդութիւնները տավարածը պետք է ճանաչի և հաշվի առնի՝ 1) թունավոր բույսերից առաջացող թունավորումը, 2) տավարի փորուռուցքը (տիմպանիտ), 3) ձիերի ծակոցները:

### ՅՈՒՆԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԻՑ ԱՌԱՋԱՅԱԾ ՅՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այս գրքուկի սկզբում նկարագրված կուլտուրական արոտներում թունավոր բույսերից թունավորման դեպքեր չեն լինում, վորովհետև նման արոտներում բավականաչափ առատ բուսականութիւն կա, հետևաբար անասունները կշտանում են և յեթեարտի վորեն մասում թունավոր բույսի յեն հանդիպում, այդպիսին չեն ել ուտում: Անասունները բույսերի մեջ տարբերութիւն են դրնում անգամ չոր խոտի դեպքում. նրանք ջոկում, ուտում են լավերը, իսկ վատերը, մոլախոտերը մի կողմ են թողնում: Մակայն քաղցած կենդանիներն այնքան ել տարբերութիւն չեն դնում և ուտում են ամեն տեսակի բույսերը, թեև պետք է նշել, վոր կան նաև այնպիսի ազահ և խոտի մեջ տարբերութիւն չգնող կովեր, վորոնք ուտում են ամեն տեսակի մոլախոտեր և չեն խորշում թունավոր բույսերից, հատկապես նրանցից, վորոնք դառ համ չունեն: Բացի դրանից, կենդանիների մարտողութիւն վորոշ խանգարումների դեպքում ճաշակելիքի զգայարանները այնպիսի փոփոխութիւններ են լինում, վոր կենդանիներն ուտում են և դառը, և թունավոր բույսեր:

Այս համառոտ դիտողութիւններից արդեն կարելի յե յեղբակացնել, վոր անասուններին թունավոր բույսերով թունավորվելուց պաշտպանելու հիմնական միջոցառումները հետևյալներն են. 1) արոտների և մարգագետինների մշակումը, 2) մոլախոտերի ու քոլերի անխնա վռնչացումը, 3) քաղցած անասուններին զգուշութեամբ արածեցնելը կամ արածեցնելուց առաջ ոժանդակ կերտալը, 4) հատուկ հսկողութիւն սահմանել ազահ և բույսերի մեջ տարբերութիւն չգնող անասունների նկատմամբ:

Իհարկե, արոտների մշակումը հանդիսանում է ընդհանուր տնտեսական կարգի միջոցառում, վորը պետք է մտնի տնտեսութեան ազդեցութեամբ միջոցառումների ընդհանուր պլանի մեջ:

Մակայն յեղբակացութեան վերջին յերեք կետերը խորջափով կախված են տավարածից: Մոլախոտերով հարուստ, ճահճուտ տեղերը, անտառային մացառուտները, կիրճերը, առունները հանդիսանում են թունավոր բույսերի հիմնական աղբյուր: Այս բոլոր տեղերը տավարածը պետք է լավ ճանաչի:

Այսպիսի վայրերում արածեցնելու և հսկողութեան ամբողջ պատասխանատվութիւնը տավարածին է վերաբերում:

Մոլախոտերն ու վնասակար բույսերը կարող են լինել նաև բարձր հարթ բացուտներում և մարգագետիններում: Այս գրքուկում արդեն նկարագրված է, թե ինչու այդ անպետք բուսականութիւնը կարող է զարգանալ արոտներում և մարգագետիններում և ինչ ձևով կարելի յե այն վռնչացնել: Մակայն այս բույսերի վռնչացման համար միջոցներ ձեռնարկելու և այդպիսի արոտների վրա հատուկ հսկողութիւն սահմանելու համար անհրաժեշտ է գտնել համառոտակի ծանոթանալ ամենից ավելի վտանգավոր բույսերի հետ:

Խոնավ մարգագետինների յեյլ ցածրադիր տրոսների վրա պատահող բուսավոր բույսեր.— 1) ճահճային սպիտակ խնկենի (бегульщик) աճում է վորք թիբերով, ունի սպիտակ ծաղիկներ և նեղ տերևներ:


2) ջրային խնդամուրի (ցիկուտա), ունի մանր ծաղիկներ և սերմեր, վորոնք հովանոցի ձևով նստած են յերկար ցողունի վրա անխոտի և քեմոնի նման:

3) ձմռածաղիկ, ծաղկում է ուշ աշնանը ջուշանի ծաղկի նման, վորը նստած է յերկար տերևների միջև:


4) ճահճային ձիաձետ, նման է դաշտային ձիաձետին:

5) ճահճային ցինգ կամ վոսկեծաղիկ (սպիտակաթեկի), յերկար ցողունների վրա ունի լայն տերևներ, կազմում է կարմիր հատապտուղների կուտակներ (նկ. 16):


6) պարուչեյնիկ (поручейник), նման է թունավոր խնդամուրիին:




Նկ. 16. Ճահճային ցլնդ  
(սպիտակաթելիկ):



Նկ. 17. Շան մաղանոս



Նկ. 18. Կմշարուկ



Նկ. 19 Ագռավի աչք

Սնտառների յեվ բիուսների բուսավոր բույսերը.— 1) Խնդա-  
կոթն (բժավոր խնդակոթ) ունի մանր սղիտակ ծաղիկներ ու  
սերմեր, վորոնք հովանոցի ձևով նստած են անխոտնի նման յեր-  
կար ցողունի վրա. մկան անախորժ հոտ ունի. նման է շան մաղ-  
ղանոսին (նկ. 17):

2) Ընձախոտ՝ (ականխոտն, գայլարմատ) կտրտված տերե-  
ններով և շուշանանման ծաղիկներով:

3) Կմշարուկ՝ ցողունի վերեում ունի յերկար տերեկներ և  
հասկանման մանր ծաղիկներ (նկ. 18):

4) Ագռավի աչք՝ յերկար ցողունի վրա ունի 4 լայն տերե,  
իսկ տերեկների մեջ դեղնավուն ծաղիկ, վորի մեջ առաջանում է  
մուգ-կապտավուն պտուղ (նկ. 19):

5) Անտառային ձիաձիտը (սանդիկոթ) տարբերվում է ճահ-  
ճայինից և դաշտայինից նրանով, վոր սրա փշատերեկները փր-  
ված են հովանոցի ձևով:

6) Անտառային աստղածաղիկն ունի յերկար մազլցող ցո-  
ղուն՝ գույգ տերեկներով, իսկ ծայրում սպիտակ ծաղիկ:

7) Գայլապտուղն ունի թփի ձևով վարդագույն շուշանանման  
ծաղիկներ և ցողունի շուրջը՝ կարմիր պտուղներ:

8) Պտերն (ձառ խոտ) ունի լայն մեծ կտրտված տերեկներ՝  
սպիտակ, հոտավետ, մանր, հանրածանոթ ծաղիկներով, սակայն  
պտերով շատ քիչ են գրավվում անասունները:

Սոլախոտապատ վայրերի բուսավոր բույսերը.— 1) Բանգն ա-  
ճում է կլոր, անկյունաձև թփի ձևով, մանր թավշանման տերե-  
կներով և ցողունի վերին մասում ունի դեղնա-շուշանանման ծա-  
ղիկներ:

2) Գոթախոտը նույնպես աճում է թփի ձևով՝ յերբեմն մի  
մեար բարձրությամբ: Տերեկները նույնպես անկյունաձև են և մեծ,  
բայց վաղ թավշանման, ինչպես բանգի մոտ էր: Ծաղիկն սպի-  
տակ պանդածաղիկ բույսի նման է. հոտը խեղդող, պտուղը շրջա-  
պատված է ծակող փշերով (նկ. 20):



Նկ. 20. Գժախոտ



Նկ. 21. Ծիծեռնախոտ

3) Մորմն աճում է մազլցող թփի ձևով, կարտոֆլի ցողունների նման. ունի ջուլջանանման ծաղիկներ և կարմիր հատապտուղներ:

4) Խնդատերևը և շան մաղդանոսը նման են թունավոր մուլխիհոգին և խնդակոթին (նկ. 17):

5) Ծիծեռնախոտն (գորտնածաղիկ) աճում է թփերով և ունի դեղին ծաղիկներ. ցողունի մեջ պարունակում է դեղնա-կաթնավուն հյուսվածք (նկ. 21):

6) Գայլակաթնուկը ցողունի վերջավորութուններում ունի ասեղանման մանր տերևներ և ծաղիկների փունջ. արտադրում է կծու և այրող հյուսվածք:

Բարձր մազգագեթնների բուսավոր բույսեր. — 1) Սպիտակ չքիտամբին ունի յերբեմն յերկար ցողուն, վորից սկիզբ են առնում յերկար, ձվաձև տերևներ, իսկ ցողունի վերջում՝ սպիտակ ծաղիկներ, վորոնք ժողովված են յերկար հուրանի ձևով (նկ. 22):

2) Վորոմը լինում է հայահատիկային ցանքերի մեջ՝ հասկերով, նման է սիզախոտին:

3) Դաժան գորտնուկն ունի նախընտերևներ և ցողունի վերջավորության վրա դեղին, վոջ այնքան մեծ ծաղիկներ:

4) Շրդավարը (դեղնածաղիկ, ագոնիս) ցողունի ծայրին ունի փշատերևներ և խոշոր դեղին ծաղիկներ:

5) Աստղածաղիկն ունի ճյուղավորված, տարածվող ցողուն՝ փոքրիկ նոսր տերևներով և մանր, սպիտակ ծաղիկներով:

6) Դաշտային մանանեխ՝ (սպիտակ և սև) դեղին ծաղիկներով և կծու սերմերով:



Նկ. 22. Սպիտակ չքիտամբ (անուկ)

Պետք է հիշատակել, վոր այստեղ նշված են թունավոր բույսերի աճման գերակշռող վայրերը, իսկ նշած թունավոր բույսերից շատերն աճում են շատ հաճախ վոջ միայն նշված տեղերում, այլև տարբեր հողերում: Այսպես, որինակ՝ խիստ թունավոր սպիտակ չքիտամբին, շատ թունավոր աստղածաղիկը և թունավոր դաժան գորտնուկները կարող են աճել վոջ միայն անտառներում, այլև ցածրադիր վայրերում:

Անհրաժեշտ է հիշատակել նաև այն մասին, վոր հիվանդութուններ կարող են առաջ գալ, դարգանալ նաև սոճու և յեղևնու, գիհու փշատերև ճյուղեր ուտելուց: Պատահում են և ձիերի թունավորման դեպքեր՝ յավջանից:

Թունավորման ճեղքները յեվ առաջին ոգնութունը. — Բոլոր թունավոր բույսերն՝ իրենց ազդեցության տեսակետից՝ կարելի յե բաժանել 2 գլխավոր խմբի.

1) շմեցնող բույսեր, վորոնք առաջացնում են ընկճված զրություն և անդամալուծութուն, կամ թե, ընդհակառակը՝ կատաղություն և ջգածություն.



Նկ. 23. Դաժան գորտնուկ

2) կծու բույսեր, վորոնք առաջացնում են ստամոքսի, աղիքների, լյարդի, յերկհամեների, միզափամփուռտի և կրծի ուժեղ գրգռում:

Բայց և այնպես այս կարգերի միջև խիստ տարբերություն դնել չի կարելի, վորովհետև թունավոր բույսերից շատերը նեբգործում են և՛ վորպես շշմեցնող, և՛ միաժամանակ վորպես գրգռող, սակայն մենք նրանց 2 կարգի ենք բաժանում համաձայն նրանց գերակշռող ազդեցությունից:

Շշմեցնող բույսերի թվին են պատկանում. 1) գժախոտը, 2) բանգը, 3) խնդակոթը, 4) կողուկը, 5) խնդատերևը, 6) վորոմը, 7) սպիտակ մրտենիս, 8) թունավոր խնդամուկին, 9) աստղածաղիկը, 10) ձիաձետը 11) խաչխաչը:

Անասունների ստամոքսը, աղիքները և մյուս որգանները գրգռող բույսերի թվին են պատկանում. 1) սպիտակ չքիտամիս, 2) դաժան գորտնուկը, 3) ձմռածաղիկը, 4) ցինգը, 5) խնդատերևը, 6) կմշտրուկը, 7) ագռավի աչքը, 8) աստղածաղիկը, 9) շողավարդը (դեղնածաղիկ), 10) գալիապտուղը, 11) ծիծեռնախոտը (գորտնածաղիկ), 12) գայլակաթնուկը, 13) դաշտային մանանիսը՝ հասուն վիճակում, 14) փշաճյուղերը:

Շշմեցնող բույսերով թունավորվելու դեպքում՝ ամենից առաջ անասունն աննորմալանում և, դառնում է յերկչոտ կամ քնկոտ, ճնշված կամ թե կատաղած. հետո վրիզը կամ վերջավորությունները ջղաճգվում են կամ թե կաթված են ստանում, վորտեքերի վրա յերբերում և կատարելապես թուլանում և, կծու բույսերով թունավորվելիս առաջ է գալիս առատ թքածորություն, բերնի թաղանթի բորբոքում (գրգռում), ծակոցներ, լուծ՝ յերբեմն արյան հետ խառը, յիրբեմն արյունախառն մեղ և առաջանում, արյունախառն կաթ է ստացվում: Բերնի թքածորություն ու փրփուրն առաջանում են շշմեցնող կծու բույսերով թունավորվելուց: Ճիշտ այդպես էլ բոլոր տեսակի թունավորումների



Նկ. 24. Աստղածաղիկ

դեպքում՝ անասունները վորտեքերը, ականջներն ու վորջմարմինը սառչում են, իսկ ձիերը յերբեմն քրտնում են:

Բոլոր տեսակի թունավորումների դեպքում առաջին ոգնությունը լուծող դեղերով անասունի ստամոքսն ու աղիքները մաքրելն է, ըստ վորում լավագույն լուծող դեղ է համարվում վուշիկամ կանեփի սերմերից պատրաստած լորձնային խաչուկը, կամ թե վարսակի կրուպայի ու ձիթի խառնուրդից պատրաստած խաչուկը: Այնուհետև ոգտակար է տալ նաև մատաղ կաշնու և ուռնու կեղևի խաչուկը, ոգտակար է հաճախակի հոգնա (կիլգմա) դնելը, վորջմարմինն ու վորտեքերը տրորելը և այլն:

Խիստ թուլություն դեպքում՝ ոգտակար է տալ մի բաժակ ողի մի շիշ տաք ջրի հետ խառը: Յեթե թունավորման ժամանակ ծակոցներ կամ թե գանձակի փքում է լինում, այս դեպքում վարվել այնպես, ինչպես ներքևում այդ հիվանդությունների մասին յեղած հատուկ գլխում նկարագրված է:

**ԳԱՆՁԱԿԻ ՓԲՎԵԼՆ ՈՒ ԱՆՑԱՓԱԿՎԵԼԸ ՅԵՎ ՈԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Դանձակի մեջ գաղերի կուտակում կամ թե կերերի կանգառում կարող են առաջացնել հետևյալ կերերը.

- 1) յերբ սոված անասունն անձրևից կամ յեղյամից հետո ազահաբար և մեծ քանակությամբ հյութալի կանաչ է ուտում,
- 2) յերբ անասունն ազահուլթյամբ ուտում է մատղաջ ապուլայտ,

յերեքնուկ, հնդկացորեն, վիկ, աշնանացան և գարնանացան հացահատիկների ծիրեր, բազուկի, կաղամբի տերևներ, հնձած և կույտերում տաքացած կանաչ, 3) բոլոր տեսակի կանաչ բույսերը, վորանք կեղտոտված են ցեխով, ժանգով, հոսող ջրի նեխվածքով և աղտոտված կանգնած ջուրը, 4) թթված կերերը, խմորված բարդան, կեղտաջրերը և այլն:

Չնայած կերերի այս վերջին ցանկն արտաներին չի վերաբերում, սակայն դրանց մասին հիշատակելը նույնպես ոգտակար է: Ստամոքսի փքումն յերբեմն հանդես է գալիս այդպիսի կերեր ուտելուց անմիջապես հետո և մինչ այն աստիճանի յե հասնում, վոր շնչառությունը դժվարանում է, աչքերն արյունով են լցվում, վոտերը սառչում և ուռչում են, և յեթե շտապ ոգնություն ցույց չարվի, անասունը կարող է սատկել: Անասունի փորը փքվում է ձախ կողմից. այստեղ փոխանակ փոս ընկած աճուկի (սովափորիկի) տեղի յե ունենում թմբուկի նման սաստիկ փքում, վորի պատճառով և այս հիվանդությունը կոչվում է տիմպանիտ, այսինքն՝ թմբկային հիվանդություն:

Այս հիվանդության պատճառների նկարագրությունից կարելի յե հանել նաև յեզրակացությունն՝ նրա վերաբերմամբ կիրառելիք նախազգուշական միջոցների մասին: Պետք է լուրջ հետևել կենդանիների արածելուն և թռչլ չտալ, վոր նրանք ազահությամբ կանաչ ուտեն վտանգավոր տեղերում, արածեն հարուստ և հյութալի բուսականություն ունեցող հողամասերում անձրեից հետո, առատ ցողից կամ յեղյամից հետո և յերեքնուկի դաշտում:

Ազահորեն ուտելու վտանգից ազատվելու համար անասունների նախիրը հարկավոր է շարունակ շարժման մեջ դնել: Սակայն հենց այստեղ է, վոր յերևան է գալիս հովվի հանցանքը. հասցնելով անասուններին վորևե հարուստ հյութալի կանաչ ունեցող հողամասի, վորտեղ անասունը չի թափառում, այլ խաղաղ արածում է, տավարածը հանգիստ նստում է, հույս ունենալով, վոր անասունն այդ լավ տեղից չի շարժվի: Հետևանքն այն է լինում, վոր ավելի ազահ կովերը խիստ հագեցնում են և գանձակի փքվածք ստանում: Այդպիսի տեղերում նախիրն

անընդհատ շարժման մեջ պետք է պահել և հաճախ տանել կանաչուի աղքատ վորևե հողամաս ու անասուններին հանգիստ տալ: Յերբեք չի կարելի բուսառատ հողամասերում արածեցնելուց հետո անասուններին ջրելու տանել, այլ պետք է մոտ յերկու ժամ ընդմիջում տալ:

Հետո, ինչպես արդեն ասված է, պետք է արածեցնելն սկսել բուսականությամբ ավելի աղքատ հողամասերում, իսկ յեթե ոժանդակ կեր տալու հնարավորություն կա, այդպիսին պետք է տալ առավոտը՝ մինչ արոտի հանելը:

Այս ամենը վերաբերում է նաև ցողից ու անձրեից հետո արոտի դուրս բերելուն:

Հիվանդություն առաջանալու դեպքում կենդանուն պետք է ուղարկել անասնարուժարան, կամ թե անասնարուժակ կանչել, բայց բանն այն է, վոր հաճախ փքումն առաջանում է այնպես արագ և այնքան ուժեղ է զարգանում, վոր պահանջվում է ամենաշտապ ոգնություն, այլապես անասունը կարող է խեղդվել:

Այսպիսի շտապ դեպքերում տավարածը պետք է կարողանա հիվանդ անասունին ոգնություն ցույց տալ:

Յերբեմն մեծ արդյունք է տալիս կովին սկիպիդարով (բեվեկնայուղով), իսկ սրա բացակայության դեպքում՝ մաքուր նավթով թրջած հին շորերից պատրաստված կեմով սանձելը: Այդ վերականգնում է բղկոցը և բղկալու հետ միասին նաև գազերի դուրս գալը:

Բղկալը հեշտացնելու համար անասունին այնպիսի դիրք պետք է առնվոր նա հետևի կողմից ավելի ցածր կանգնած լինի, քան առջևից:


Հենց դրա համար էլ բղկալուն ոգնում է, յերբ հիվանդ կովերին գետի կամ լճի մեջ կանգնած ժամանակ նրա գլուխը դեպի ափն ենք դարձնում:

Յերբեմն դանձակից գազերի դուրս գալուն և բղկալուն նւպաստում է անասունի լեզուն դուրս քաշելը, ընդ վորում լեզուն պետք է ձեռով բռնել բերնի խորքից և վոչ թե լեզվի ծայրից: Բղկալուն ոգնում է նաև փորի տրորելը ձախ կողմից, իսկ յեթե այս ամենը չեն ոգնում և անասունը փքվածքի ուժեղանալուց շնչա-

հեղձ է լինում, այս դեպքում սպակեղուց փրկելու համար մնում է մի միջոց՝ գանձակը ծակել հատուկ գործիքի միջոցով, վորը կոչվում է տրոակար:

Այս գործիքը տավարածի շարժական դեղատնում պետք է գանվի անպայման: Տավարածը պետք է տեղի անասնաբուժական կետում սովորի գանձակը ծակելու ձևը: Սա բարդ գործ է, և սովորելն էլ դժվար է:

Տրոակարը բաղկացած է մատիտի հաստության 17-20 սմ յերկարությամբ մի խողովակից և նրանից 2 սանտիմետր յերկար և համարյա նույն հաստության կլոր, խիստ սրածայր բիզից, վորը կիպ մտնում է խողովակի մեջ, իսկ նրա ծայրը 2 սմ-ի չափ դուրս է մնում նրանից: Չախ ածուկում ընտրում են ամենափքված տեղը՝ կոնքի թմբից, վերջին կողից և գոտկատեղից հա-



Նկ. 25. Փքված գանձակի ծակելու տրոակարով

վասար տարածության վրա գտնվող կետում (նկ. 25): Այդ տեղը և տրոակարը լվանում են կրեոլինի լուծույթով կամ դենատուրատով (ալկոհոլ):

Տրոակարի սուր ծայրին հազցրած խողովակն այնպես են պահում այդ տեղին, վոր ծակումը կատարվի ուղիղ փքված մաշ-

կի դեմ (կարծես թե աջ առաջին արմնի կամ աջ կողոսկրի դեմ) և ձեռքով ամուր խփում են գործիքի կոթին:

Յերբ ամբողջ գործիքն արդեն մտել է ներս, բիզը քաշում-հանում են դուրս, թողնելով ծակի մեջ միայն խողովակը, վորից գազն սկսում է շնոցով դուրս գալ: Յեթե խողովակի շնոցը միշտ բռնվում է գանձակի մեջ յեղած կերով, այդ դեպքում մաքրում են բզով: Յեթե գազն անընդհատ ուժեղ կերպով է դուրս գալիս, այդ դեպքում նրա յեղքը չափավորելու համար խողովակի անցքը ժամանակ առ ժամանակ ծածկում են մատով: Գազի արագ դուրս գալու հետևանքով կարող է կենդանու սիրտը դադարել գործելուց:

Գազը դուրս գալուց հետո սովորաբար անասունն անմիջապես աշխուժանում է, բայց դրանով չպետք է հանգստանալ: Խողովակը պետք է ելի 15-20 րոպե թողնել անցքի մեջ և ներչտալ: Խողովակը հանելուց հետո պետք է ծակած տեղը յող կամ վորեկե ախտահանիչ լուծույթ քսել:

Հասարակ դանակով չի կարելի այդպիսի ծակումներ անել, վորովհետև դանակի պատճառած վերքն ավելի դժվար է առողջանում, քան տրոակարի ծակոցը և, բացի դրանից, կարող է վերքը կեղտոտել ու վորովայնամաշկի բորբոքում առաջացնել:

Յերբեմն նույն այդ պատճառներից, վորոնցից գանձակի փքվածք է առաջանում, գանձակի մեջ կերը կանգ է առնում, յերբ գանձակում դադարում է շարժումը և վորոճալու գործողությունը: Փորի ձախ կողմը շոշափելիս նկատվում է կարծես թե գանձակը խմորով է լցված և նրա մեջ ձայներ չեն լսվում:

Այս հիվանդության դեպքում ընդհանրապես կենդանուն պետք է տանել տուն կամ թե անասնաբուժական կայան, սակայն յերբեմն այս հիվանդությունն ևս ծանր դրություն է առաջացնում, ինչպես գանձակի փքվածքի դեպքումն էր: Այսպիսի դեպքերում ոգնելու համար, անասունի փորը ձախ կողմից սառը ջրով թրջելուց հետո շփում են, ապա շրից խմեցնում են սապ-նաջուր 2-3 դրալ սկիպիդարի կամ հասարակ ծխախոտի 25 գ խաշուկի հետ:


**ՁԻՈՒ ԾԱԿՈՑՆԵՐԸ ՅԵՎ ՈԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ձիերի ծակոցներն ավելի սակավ են լինում արոտային կերերից և ջրելուց, քան մսուրային կերերից: Արոտում իր կամքին թողնված ձին շատ բժայխդիր և լինում դեպի կանաչն ու ջուրը, բայց յերբեմն նա չափից անց ուտում և յերեքնուկ և այլ կանաչ բույսեր, դրա համար ել ծակոցների մասին պետք և մի քանի խոսք ասել:

Յերբ ձին ընկնում և գետին, մարմինը խփում և դետուղեն, յերբեմն տնքում ու քրտնում և այս ամենն ստամոքսի ցավերի (ծակոցների) նշաններ են: Ամենից առաջ անհրաժեշտ և ցավերը հանգստացնել, վորի համար հարկավոր և անանուխի, յերիցուկի գուլ բուսաջուր խմեցնելով անասունի ստամոքսը տաքացնել և նույն բուսաջրով հոգնա դնել, փորը շփել ու տաք փաթաթանով կապել: Ոգնում և նաև խաղիսաղի գլխիկներից (1—2 բուռ) պատրաստած խաշու, կես բաժակ ողու (ջրի հետ), մեկ գդալ իխտիոլի կամ լավ կրեոլինի հետ խառը: Աղիքները դատարկելու համար պետք և խմեցնել 1—2 շիշ վուշի կամ կանեփի սերմերի լորձային խաշու, թափահարելով  $\frac{1}{2}$  բաժակ ձեթի հետ և լավ հոգնա դնել, իսկ մինչ այդ յուղոտ ձեռքով դուրս հանել ուղիղ աղիքի ամբողջ կղկղանքը և դուրսընեն շփել աղիքը (նկ. 26):

Ձիերին քչել չի կարելի: Կարելի յե թողնել, վոր պառկեն, թավալեն, իսկ յեթե գլխիվայր ընկնում և գետին, պետք և արգելել, թեթև կերպով նրան ման ածելով: Յերբեմն թեթև ման ածելն ոգնում և, վոր աղիքների գազերը դուրս գան: Սակայն չպիտի հարկադրել հիվանդ ձիուն անընդհատ քայլել, յերբ նա ցանկանում և պառկել: Ձիուն կարելի յե ման ածել, կարելի յե թողնել վոր պառկի: Յերբ վոչինչ չի ոգնում և բժիշկ չկա, կարելի յե փորձ անել փորը սառը ջրով լվանալ, միաժամանակ շարունակելով տաք հեղուկ խմեցնել ու հոգնա դնել:

Ծակոցից հետո ձիուն մի քանի ժամ չկերակրել, վորից հետո քիչ-քիչ տալ լավ խոտ:



Նկ. 26. Ուղիղ աղիքի մաքրումը և մասսաժը

**ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻՑ  
ՊԱՅՏՊԱՆԵԼԸ ՅԵՎ ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

**ԿՐԾԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԸ**

Կթվորները գիտեն, վոր հաճախ և պատահում, յերբ կովն արոտից վերադառնում և լիքը կրծով և կարծես թե ամեն ինչ կարգին և, բայց յերբ նստում ևս կթելու, թույլ չի տալիս անգամ պառկենքին դիպչել. նկատում ևս, վոր կուրծն ել տաք և կամ պատահում և, վոր կրծի վորևե մասը պնդացած և պտուկները չեն կթվում:

Այս դեպքերը գլխավորապես առաջ են գալիս քերծվածք-

ներէից և կրծի զանազան վնասվածքներէից, իսկ վերջիններս հետևանք են տավարածի անուշադրութեան: Ի հարկե, այսպիսի դեպքերը կարող են ոճի կծելու կամ թե մեղուների, ճանձերի խայթելու հետևանք լինել, սակայն դրանք այնքան ել հաճախակի չեն լինում: Տավարածը պետք է հիշի, վոր կաթով լի կուրծը բոլոր տեսակի վնասվածքների վերաբերմամբ զգայուն է, մինչդեռ նա այնքան ցած է կախված դեպի գետին, վոր անասուններն անզգուշ քշելու դեպքում կարող է դիպչել ծառերի փչակներին, արմատներին և ճյուղերին:

Ոգնութեան վերաբերյալ պետք է տալ հետևյալ խորհուրդը յեթե կովը յեկել է տուն կրծի մի մասն ուռած վիճակում, հարկավոր է կթել այնքան, վորքան հնարավոր է: Կոփս, ի հարկե, թույլ չէ տալիս հիվանդ մասին ձեռք տալ, սակայն սա առաջ է գալիս նրանից, վոր ճիշտ չկթելն առողջ կովին ել այնքան դուրեկան չէ, յերբ պտուկները մատերով համարյա թե մինչ գետին են ձգում: Պետք է պտուկները վերցնել բալ մեջ և սկսել սեղմել հենց արմատի տակից: Այս ձեով կթելիս մաքուր կկթվի և կովին ցավ չենք պատճառի:


Բայց և այնպես, յերբ կուրծը շատ է ցավում, չպետք է լարված կերպով կթել, իսկ յեթե պտուկը տաք է և ցավում է ինչպես ուռուցքը, այդ դեպքում բոլորովին չպետք է կթել:

Պետք է կթելուց հետո կամ առանց կթելու ուռած կուրծը շփել չաղած և չլառնացած յուղով կամ ճարպով, ապա բարձրացնել դեպի փորը և փափուկ կապով կապել այնպես, վոր կուրծը չշարժվի (նկ. 27):

Ոգտակար է մածիլու համար գործածվող յուղին կան ճարպին ավելացնել քիչ իխտիլ կամ սալիցիլատթու կամ կամֆորա:

Կուրծը հիվանդ կովին պետք է պահել տանը կամ թե նրա շրջակայքը և չթողնել նախրի մեջ մինչև նրա առողջանալը:

Հիվանդ կրծով կովի կաթը պետք է կթել առանձին ամանի մեջ և յեռացնել: Կրծի մաքրութեան պետք է պահպանել ինչպես արտի, այնպես և մտուրային կերակրման շրջանում, վորովհետև կեղտոտվելուց կամ վորևէ չնչին վնասվածքից կարող է կրծի ծանր հիվանդութեան առաջանալ:



Նկ. 27. Կրծի կապելը

Ոճերի, մեղուների յեկ նստնների խայրոցը.— Ոճերը մարմնի ինչ մասն ել վոր խայթած լինեն, անհրաժեշտ է ամենից առաջ խայթած տեղից վորքան հնարավոր է շատ արյուն հանել, վորից հետո վերքի վրա կալիում մանդանատի թուղ (մուգ կարմիր գույնի) լուծույթի թրջոց դնել:

Մեղուների և ճանձերի խայթելու դեպքում խայթած տեղը լվանալ կալիում մանդանատի վոչ թուղ (փայլուն կարմիր գույնի) լուծույթով կամ թե շփել անուշադրի սպիրտով:

Կնդակների վնասվածքները.— Սուր քարերից և ճյուղերից առաջացած կնդակների վնասվածքներից քիչ դեպքեր չեն լինում, յերբ կովերն ու վոչխարները կաղում են: Յեթե ժամանակին այս վնասվածքները չնկատվեն, ապա կնդակներում և նրա վերին մասերում կարող է բորբոքում, թարախակալում առաջանալ, իսկ այդ դեպքը չէ և տավարածը կարող է նկատել: Հենց վոր արտում անասունն սկսեց կաղալ, պետք է նայել անասունի կնդակների ներսն ու արակը և տեսնել, թե չկան արդյոք նրա ճեղքվածքի մեջ փուշ կամ քարի կտորներ կամ վերքեր: Ինչ վոր լինի կնդակի մեջ, բոլորը պետք է հանել, իսկ յեթե վերք կա՝ քսել յոդ կամ կալիում մանգանատի լուծույթ, կամ մաքուր բենզին, կամ թե ձյութի հետ խառն ողի:

Իսկ յեթե վերքեր ել չկան, կճղակները լվանալ սառք ջրով և կապել մաքուր փալասով: Մինչև կապելն ոգտակար կլինի կրճղակները մեջ և նրանց վրա դնել կաղնու կամ թե ուռնու մատաղ ճյուղերի տերևներ՝ նախորոք լվանալով կրեոլինով:

Պողտեառուքունը յեվ գազամենի ու օճերի կծելը.— Բիչ գեպքեր չեն լինում, յերբ հարու տվող կովերը վերավորում, վնասում են մյուս կովերին:

Այդպիսի կովերին տավարածը միշտ պետք է հսկի, անուշադրության չմատնի նրանց և կոլտնտեսության անասնաբուծից պահանջի, վոր սրանց յեղջյուրները վորքան հնարավոր է սղոցված լինեն և յերկու յեղջյուրի վրա փաթաթված լինի պարան կամ թե մատղաջ կեղևից պատրաստած կեմ:

Յերբեմն շները կծում են նախրի կովերին, սակայն ոտար շներ սակավ են լինում նախրի մեջ, իսկ յեթե պատահամբ վորևե շուն մտնում է նախրի մեջ և կծում անասունին, այս դեպքում առաջին հերթին պետք է նախազգուշանալ այն մասին, թե արդյոք կծող շունը կատաղած չի յեղել այս մասին արդեն խոսվել է «վարակիչ հիվանդություններ» գլխում: Յեթե նախրի շներն են կծում կովերին, սա արդեն անկարգություն է և տավարածի մեղքն է: Նա պետք է շներին պատժի և վերացնի շները այդ սովորությունը:

Անտառային մասերում պակաս չի տուժում նախրը նաև գաղաններից, գլխավորապես գայլերից և մասամբ արջերից: Բայց յերբ նախրն ամբողջովին տավարածի հովանավորության և շների հսկողության առկ է, գաղաններն այդ դեպքում մոտ չեն գալիս: Դազանը վորսում է մենակ մնացած և մոլորված անասուններին: Իրա համար ել այն տեղերում, վորտեղ գաղանները հանգիստ չեն տալիս, անհրաժեշտ է աչալուրջ հետևել, վոր նախրի կովերն իրարից չհեռանան, մանավանդ անտառով, մացառուտանեղ տավարածի ոգնականները և շները պետք է միշտ շղթա կապած լինեն նախրի շուրջը, իսկ բաց դաշտ դուրս գալիս պետք է ստուգել տեսնել, թե արդյոք պակաս չեն նախրի անասունները: Անտառում արածեցնելու ժամանակ պետք է կովերի վրին

զանգակներ կախել: Պետք է ասել, վոր զանգակներ կախելու այդ սովորությունը վատ չէ, քանի վոր զանգակներն ազդանշան են տալիս նախրի մեջ բոլոր տեսակի տազնապների, նախրից յետ մնացած կովերի և ամեն տեսակի անհանգստությունների գեպքում:

Տարբեր վնասվածքներ.— Լինում են նաև դեպքեր, յերբ կենդանու մարմինը ծակոտվում, կտրատվում ու վերավորվում է ցաւկապատից, հատկապես ծակող փշալարից, սուր ճյուղերից, գետնին ընկած ապակու կտորներից: Այս ամենը տավարածը պետք է ուշադիր կերպով նկատի առնի:


Արդեն ասված է, վոր գարնանը՝ մինչ անասուններին արտաի հանելը, արոտներն ու նրանց ճանապարհները քննելիս, պետք է կարգի բերել և հավաքել այնպիսի առարկաները՝ ինչպես, որինակ՝ գետնին ընկած կոտրված շերտ, սուր ցցերը, ճյուղերը և այլն: Իսկ հետո արածեցնելու ժամանակ ել տավարածը պետք է հետևի և այդպիսի առարկաները հավաքի, իսկ այնտեղ, վորտեղ հնարավոր չէ հավաքել, ճանաչի այդպիսի տեղերը և սրանց վրայով նախրն զգուշ կերպով անցկացնի:

## ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԵՐԲԵՐԻ ՅԵՎ ԱՐՅՈՒՆՆՈՍՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Յերբ արոտում վորևե վնասվածք յեղավ, հովիվը պետք է առաջին ոգնությունը ցույց տա: Սրա համար ել նա իր հետ պետք է շրջիլ դեղարկղ ունենա: Այս մասին խոսվում է հետագա գլուխներում:

Արագ կերպով առաջին ոգնություն ցույց տալը խիստ անհրաժեշտ է, վորովհետև անուշադիր թողնված վերքի մեջ առաջ է գալիս թարախակալում, խոցոտում, կաբող է նույնիսկ մաշկի և յենթամաշկի առանձին մասերի մահացում, անզամ արյան վարակում առաջ գալ:

Այս ոգնությունը ցույց տալը դժվար չէ, պետք է մաքրել վերքը կեղտից, փշերից, պետք է մաքրել կրեոլինի կամ կալիում



Նկ. 28. Փաթեթոցի կաղելը - Նկ. 29. Արյունհոսութեան կանգնեցնելը

մանգանատի լուծույթի մեջ թաթախած մաքուր շորով կամ կանեփի խձուձով, կամ կաղնու կեղևի պինդ խաշուկով և քսել յող կամ ձյուլթի սպիրտային լուծույթ: Լինում են դեպքեր, յերբ անասունի կաշվից պոկվում է մի ամբողջ կտոր, վարը մարմնի վրա այս ու այն կողմ տարուբերվելով կեղտոտվում և Մինչև անասունը գոմ կհասնի, մինչև նրան անասնաբուժի մոտ կտանեն, կեղտից վերջը կարող է նույնիսկ նեխել: Մինչդեռ այդ պոկված կտորը սուր սանդղով և ամուր թելով իր պոկված մասին կարելը նույնպես դժվար գործ է: Գուցե հետո այս պոկված կտորն անասնաբուժը կկտրի կամ թե կկարի ինչպես պետքն է, բայց այս խկական բուժումը հեղա կլինի, յերբ վերջը հնացած է և այն կարգի յե բերված առաջին ողնութեան կարգով:

Յերբեմն առաջին ողնութեանը կարող է նույնիսկ կենդանուն փրկել վտանգից:

Որինակ, վտաքի արենատար անոթը վերավորելու դեպքում, յերբ արյունն սկսում է ուժեղ հոսել, պետք է անմիջապես վտաքի

վերավորված տեղի վերին մասից ամուր կապել, ըստ վորում վերջի խոռոչը ցնել վորեւե փաթեթով՝ արյունը կտրելու համար:

Արյունհոսութեանը դադարելուց հետո վտաքը պետք է բինտով փաթաթել (նկ. 28 և 29):

## ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԱՆԱՍՈՒՆԻՆ ՄՐԱԵԼՈՒ ԿԵՏԵՎԱՆԲՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ ԿԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Մրսելը, այսինքն՝ հիվանդանալը մարմնի սառելուց, լինում է այն ժամանակ, յերբ տաքացած մարմինը սառչում է. որինակ՝ աշխատանքից հետո քրտնած ձին կամ թե շատ տաք գոմից սառնամանիք դուրս բերած կովը կարող է մրսել ու հիվանդանալ:

Այսպիսի դեպքերում արենատար անոթների մեջ արյան շրջանառութեանն արագ խախտվում է՝ կաշվի տակ տաքութեանից լայնացած, թուլացած անոթները խիստ սղմվում են ցրտից և արյունը հոսում է ներքին որգանների մեջ՝ գլխավորապես դեպի թոքերը, վորի հետևանքով և այդպիսի մրսելուց առաջանում է թոքերի բորբոքում:

Մրսելը լինում է նաև այն դեպքում, յերբ սառչում է մարմնի վորեւե առանձին մասը, որինակ՝ մարմնի կեսը՝ միջանցիկ քամուց, կոկորդը՝ սառցաշրից, վտաքերը՝ սառը ջրի մեջ կանգնելուց և այլն: Այդ մրսելն առաջանում է նրանից, վոր մարմնի սառած մասերից արյունը յետ է հոսում և դրա հետևանքով նրանց սննդառութեանը թուլանում է. միաժամանակ թուլանում է նաև նրանց դիմադրականութեանը: Նշանակում է՝ մրսելն ինքնըստինքյան հիվանդութեանն է, բայց մի շարք հիվանդութեանների դրդապատճառ, յեթե մարմնի սառչելը տեղի յե ունենում կամ մարմնի կամ նրա վորեւե առանձին մասի տաքանալուց հետո:

Այստեղից այն յեղրակացութեանն ենք անում, վոր պետք է պաշտպանել սառչելուց ինչպես տաքացած կենդանիներին, այնպես և նրանց մարմնի առանձին մասերը: Առաջին դեպքում պահանջվում է տաք շենքերից անասունին սառն անձրեկի, խիստ ու սառը քամու և սառնամանիքի ժամանակ արտաքի չհանել: Յեթե

այսպիսի յեղանակները յերկար են տևում, բայց անհրաժեշտ և նրանց արածեցնել, այս դեպքում անհրաժեշտ և սահմանել հետեւ վյալ կարգը. հետեւել, վոր գումերում մշտապես զով ող լինի. նախ- քան անասուններին արտաի թողնելը, նրանց գոմի բակում ման ածել, ապա վերադարձնել գոմ, կերակրել չոր կերով և դրանից հետո ուղարկել արոտ: Այսպիսի դեպքերի համար ողտակար և արոտներում ունենալ ծածկեր և կացատեղեր (աղալ):

Անասունի մարմնի առանձին մասերը սառչելուց պաշտպա- նելու համար պետք և աշխատել, վոր նախիրն արոտում չպահվի մի ուզգուխամբ փչող և սառը քամու տակ, հարկավոր և նախի- րը շարժման մեջ դնել, շուռ տալ, ապա հետեւել, վոր տաքացած անասուններն աղբյուրի սառը ջուրն ագահուլթյամբ չխմեն:

## ԻՆՉ ԱՆԵԼ ՆԱԽՐԻ ՄԵՋ ՎԻԺՈՒՄՆԵՐ ԿԱՍ ՎԱՂԱԺԱՄ ԾՆՈՒՆԴ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Արոտում նախրի մեջ հերթական ծին չպետք և լինի, վո- րովհետեւ բոլոր հղի կովերն ու ձիերը պետք և ճիշտ հաշվաւման յենթարկված լինեն և ծնեն հատուկ ծնարանում, վորպիսին պետք և լինի գոմին կից: Այսպիսով ձին հղիության վերջին (11-րդ ամսում), իսկ կովը հղիության 9-րդ ամսում չպետք և ընդհանուր նախրի հետ արոտ թողնել, այլ հանել զբոսանքի տնտեսության մոտերքը: Սակայն անժամանակ ծնունդ և առանձ- նապես վիժուլներ կարող են լինել նաև արոտում: Ծննդաբերու- թյան ցավերը բանելու կամ թե հեշտոցի բերանը բացվելու և նրանից հեղուկ ծորալու դեպքում առաջին հերթին հարկավոր և փորձել կովին գոմ տանել: Յեթե պարզվեց, զոր նա տուն գալ չի կա- րող և պարզապես սկսվում և ծննդաբերությունը, այս դեպքում անհրաժեշտ և կողանտեսությունից անասնաբուժ կանչել, իսկ յե- թե բժիշկ չկա, գոնե անասնաբուժ և սանիտար կանչել: Ծնըն- դաբերության համար պետք և ընտրել առանձին մաքուր և չոր տեղ: Պետք և ծաւերից կտրտել մաքուր ճյուղեր կամ թե կա- նաչ քաղել և դնել կովի հետին մասի տակ, յեթե նա պառկած և Մինչև անասնաբուժի կամ սանիտարի գալը, հոտադներից մեկին

ծնող անասունի մոտ հերթապահ դնել և վոչ մի անասուն թույլ չտալ նրան մոտենալ: Յեթե անասունն արդեն ծնել և և նո- րածինը կենդանի յե, ապա պետք և լորձուղից մաքրել նրա բերանը, քիթը, մաքուր թելով կապել պորտը փորին շատ մտ և կտրել կամ թե պոկել այն կապած տեղից մի քանի սանտի- մետրի վրա և կտրած մասին քսել յող կամ կալիում մանգանատի կամ թե կրեոլինի թուրք լուծույթ:

Նորածնի ամբողջ մարմինը շփել մաքուր շորով կամ մա- քուր խոտի փնջով: Ծննդաբերության ժամանակ ոգնուլթյուն ցույց տալու Չ հիմնական կանոն կա. 1) մաքուր թյուն պահպանել ծննդե- նի շուրջը գտնվող բոլոր առարկաների նկատմամբ և ծնընդ- կանին խնամելիս. 2) չշտապեցնել ծնունդը, յեթե նույնիսկ նա ձգձգվի 10—12 ժամ, մինչև անասնաբուժի գալը:

Չազարարձական ոգնուլթյուն ցույց տալու համար հարկա- վոր և հատուկ պատրաստություն՝ բժշկի կամ բուժակի դեկավա- րությամբ:

Յեթե մահացած պողի վիժման դեպք լինի, այդ դեպքում վիժվածքի և նրա հետ միասին դուրս վիժված ընկերքի և այլ մասերի հետ պետք և վարվել այնպես, ինչպես դիակների հետ են վարվում, այսինքն՝ այս ամենը պետք և հավաքել ու մի կույտ կազմել, ճյուղերով կամ մուխտոտերով ծածկել մինչև սայ- լի գալը: վորով և կարելի կլինի այս ամենը տեղափոխել անաս- նադերեզմանոց: Սրա հետ միասին պետք և հայտնել անասնա- բուժական կազմին՝ թե վիժվածքը և թե կովին քննելու համար: Վիժող կովին կամ ձիուն տուն պետք և ուղարկել, իսկ վիժվածքն արտից հեռացնելուց հետո այդ տեղում խարույկ վառել կամ թե կիթ ցրել:

Նախազգուշական այս բոլոր միջոցառումները պետք են, վո- րովհետեւ քիչ չեն լինում վարակիչ վիժման դեպքեր, վորով կոր- չում և ուպագա սերնդի զգալի մասը. բացի այդ, կովերը պակա- սեցնում են կիթը և յերբեմն նույնիսկ մինչև հետևյալ ծինը զբրկ- վում են կաթից: Այդ դեռ բավական չե, նույնիսկ ցրեկ յերինջ- ները կարող են վարակիչ վիժման վարակ ստանալ մինչև հղիա- նալը և հղիանալուց հետո վիժել: Որինականեր կան, թե ինչպես

նախերն սկսում է հալչել և բոլորովին աճ չտալ, միմիայն այս իբր թե վոչ այնքան վտանգավոր հիվանդութեան հետևանքով: Այն նախրում, ուր վիժման թեկուզ յերկու դեպք է յեղել, արդեն վոչ մի դեպքում չի կարելի ցուլին ազատ բեղմնավորվան թողնել, վորովհետև նա կարող է վիժած կովերից վարակը տարածել նաև մյուս կովերի և յերինջները մեջ: Այսպիսի նախերնեքում հարկավոր է բոլոր կենդանիներին կանոնավոր անասնաբուժական քննութեան յենթարկել:

### ՀՍՎՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ՅԵՎ ԲԵՐԻ ԳԱՆՈՒ ՎՐԱ

Չնայած այն բանին, վոր շատ կոլտնտեսութեաններում նախրի մեջ ազատ զուգավորում է կատարվում, բայց պետք է ասել, վոր այս կարգը կարող է միայն վորպես լրացում լինել ձեռնքալ զուգավորման համար, վորի ժամանակ պարզ կերպով հայտնի յե լինում է բերի գալու որը, և ձեռք են առնվում նախազգուշական միջոցներ, վորպեսզի ցուլի միջոցով վորեք հիվանդութեան չտարածվի կովերի մեջ, այլև չստիպանց փոքր հորթերն ազատ են մնում վաղաժամ ծածկվելուց և ծինը կատարվում է ժամանակին և իր տեղում:

Յեթե ցուլը նախրի հետ միասին է, տավարածը պետք է հետևի կովերի ծածկվելուն և զրանցի ժամանակը, բացի այդ, նա պետք է հետևի, վոր անչափահաս հորթերը չծածկվեն: Պատահում է վոր նախրում ցուլն ընկնում է մի կովի հետևից և նրան մի քանի անգամ է ծածկում: այս բանը չպետք է թույլ տալ մեկ անգամ ծածկելը բավական է:

Չեանքալ զուգավորման ժամանակ տավարածը պետք է նշի բերի յեկող կովերին, վորպեսզի նրանք ժամանակին ծածկվեն՝ տուն վերադառնալուց հետո:

Զբեղմնավորված ձիերի սեռական ցանկութեանն ըստ սովորականին յերևան է գալիս գարնանը: Առաջին ցանկութեանը լինում է 1<sup>1</sup>/<sub>2</sub>—2 տարեկան հասակում: Քուսակ ունենալուց հետո ամենից ավելի հաճախ սեռական ցանկութեանը յերևան է գալիս մի շաբաթից, սակայն պատահում է յերբեմն մեկ-յերկու որ առաջ

կամ թե 14 որ ուշացումով: Յեթե քուսակ ունենալուց հետո բերի գալու առաջին ցանկութեանը բաց է թողնված, ապա այն կրկնվում է 1<sup>1</sup>/<sub>2</sub>—2 տասնորյակ հետո: Յանկութեանը տեսնում է 2—5 որ: Այս ժամանակամիջոցում զամբիկն անուշադիր է լինում դեպի կերն ու աշխատանքը: Նրա վողջ ուշադրութեանը կենտրոնացած է լինում սեռական պահանջի վրա: Սա հաճախ միջում է՝ չեղելով վտանգը, բարձրացնում է պոչը, զարժում է հեշտոցը, բացելով և փակելով այն: Հեշտոցից սպիտակավուն լորձունք է հոսում:

Յեթե զամբիկը կանգնում կամ գնում է մյուս ձիերի հետ, այդ դեպքում հավում է նրանց և իր հետույքը դարձնում է նընաց: Հղիացած զամբիկի ցանկութեանը դադարում է հղիացման վողջ ժամանակամիջոցում:

Քանի վոր ցանկութեանը յերևան է գալիս գլխավորապես գարնանը և ամառվա սկզբներին, այդ պատճառով բեղմնավորման կայաններում զուգավորման ժամկետները սահմանված են մարտի կեսից մինչև հուլիսի կեսը:

Քանող ձիերի զուգավորման ամենալավ ժամկետը համարում են ապրիլ և մայիս ամիսները, վորպեսզի ծնունդը լինի մարտին կամ ապրիլի սկզբներին: Այդ դեպքում զամբիկը, մինչ դաշտային աշխատանքների սկիզբը, բավական կամրանա, իսկ քուսակն իր կյանքի առաջին կիսամյակը բնական լավագույն պայմաններում կանցկացնի: Յանկութեան ժամանակաշրջանում զամբիկի աշխատանքը պետք է քիչ թեթևացվի:

Հորթերի առաջին ցանկութեանը յերբեմն հանդես է գալիս Ց-րդ ամսում, բայց ավելի հաճախ մի տարեկան հասակում: Յանկութեանը տեսնում է մեկ որ, իսկ ամենաշատը՝ յերկու որ, իսկ յեթե այն բաց է թողնվում, այսինքն՝ յերինջը չի ծածկվում, կրկնակի ցանկութեանը յերևում է 1,5—3 տասնորյակից հետո:

Մանգից հետո ցանկութեանն առաջ է գալիս մեկ ամսից հետո: Յանկութեան յերևան գալու դեպքում կովը անհանգիստ է դառնում, բառաչում է, հաճախ միջում է, և սրա սեռական գործարաններից էլ, ինչպես զամբիկի, հոսում է լորձունք, յերբեմն արյան հետ լսառը: Կովը ձգտում է դուրս գալ մտերից,

Իսկ յեթե կանգնում ե մյուս կողմերի հետ, ապա ցատկում ե նրանց վրա:

Յեթե բաց ե թողնվում նաև յերկրորդ ցանկությունը, ապա այն յերևան ե գալիս 20—30 որից հետո: Սակայն պատահում ե, վոր յերկու ցանկությունների միջև ընկած ժամանակամիջոցը յերբեմն աժելի յերկար ե լինում: Հորեացած կովերի ցանկությունը դադարում ե հղիության վողջ ժամանակաշրջանում:

Ցանկության նման նշաններ են լինում նաև խոզերի և վոչխարների մոտ: Սակայն վոչխարների մոտ ծնելուց հետո յերբեմն 5—6 ամիս ցանկություն չի լինում, չնայած, վոր կան այնպիսի ցեղեր, ինչպես, որինակ՝ ումանովյանը, վորոնց ցանկությունը յերևան ե գալիս 1,5—2 ամսից հետո:

Առաջին անգամ ծածկելու ամենավաղ ժամկետներն են դամբիկի համար՝ 3 տարեկան հասակը, յերինջների համար՝ 1,5, իսկ խոզերի համար՝ 9 ամիս: Պետք ե ասել, վոր յերբեմն կովերի ցանկությունն այնքան արագ և աննկատելի յե անցնում, վոր այն յերբեմն բաց են թողնում:

Ահա այսպես կոչված «խաղաղ ցանկություն» ունեցող կովերին հայտարարելու համար կարևոր նշանակություն ունի նախրի մեջ ցուլ պահելը:

## ԻՆՉ Ե ՏԱՎԱՐԱԾԻ ՇՄՐԺԱԿԱՆ ԳԵՂԱՐԿՂԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՈԳՏՎԵԼ ՆՐԱՆԻՑ

Արոտում անասունների հիվանդությունների դեպքում առաջին ոգնությունը ցույց տալու տարբեր ձևերի նկարագրություններից յերևում ե, վոր տավարածն իր հետ պետք ե ունենա վորոշ բուժիչ նյութեր և գործիքներ:

Պարուսիներից, կտավից կամ բրեզենտից պատրաստած վոչ այնքան մեծ պայուսակ իր ծածկոցով՝ ահա տավարածի դեղանոցը: Այս պայուսակի մեջ պետք ե տեղավորել 1 շիշ կրեոլինի լուծույթ, <sup>1</sup>/<sub>2</sub> շիշ կալիում մանգանատի թունդ (մուգ կարմիր) լուծույթ, կես շիշ կապարե թրջոց, կամ կաղնու (կամ ուսենու) կեղևից պատրաստած խաշուկ, մի սրվակ ձյուլի սպիրտային

ու ծույթ կամ յող, 1 սրվակ սկիպիդար, մի փոքր ծրար կաղնու կեղևի փոշի, մի ծրարիկ նաֆթալին, մի կապ մաքուր անջիսա խծուծ, մի կապ մաքուր հնոտի, մի քանի հատ մաքուր փալաս, կամ թե մի կտոր մաքուր քաթան կամ մառլայի մի կտոր, մի կապ մաքուր կանեփ, մի սուր ասեղ ամուր մոմած թելի հետ միասին, մի հատ լավ, մաքուր, ծալվող սուր դանակ ու մկրատ:

Այժմ ըստ կարգի նշենք դեղերի անուանները և ցույց տանք, թե ինչպես պետք ե դրանք պատրաստել և ոգտագործել:

Կրեոլինը վերցնում են դեղատնից սև հեղուկ վիճակում՝ ձյուլի նման և բաց են անում մաքուր ջրի մեջ, վերցնելով մի ճաշի գդալ կրեոլինին կես լիտր ջուր: Լուծույթը կուսնիս կաթնամոխրավուն գույն, սա շատ լավ միջոց ե բոլոր տեսակի վերքերն ու քերժվածքները լվանալու և շփելու համար: Այս լուծույթի մեջ մի կտոր մաքուր խծուծ կոմ հնոտի թաթախելով պետք ե դնել թեթևակի վերավորված տեղերին և թեթև կերպով շփել: Այս լուծույթը կարելի յե գործադրել նաև, յերբ կովերի բերանում, հետանցքում կամ թե հեշտոցի մեջ վնասվածքներ կան: Յերբեմն վնասվածքներից կամ թե ալ պատճառներից աղիքը հետույքի անցքից դուրս ե ընկնում: Աղիքը լվանալով կրեոլինի լուծույթով, հարկավոր ե այն վորոշ ժամանակ լավ թրջել կաղնու կեղևի խաշուկով կամ կապարե թրջոցով: Յեթե այս բանն արագ կատարվի, աղիքը նորից հեշտությամբ կհավաքվի իր տեղը: Իսկ յեթե աղիքն այս վիճակում անուշադրության մատնվի, հետո ուղղելը դժվար կլինի:

Կալիում մանգանատի թունդ լուծույթն ստացվում ե կալիում մանգանատի բյուրեղային փոշուց՝ մեկ թեյի գդալը մի շիշ ջրի մեջ լուծելով: Պետք ե հիշել, վոր կալիում մանգանատը չի կարելի խառնել ալկոհոլի, բենզինի և նավթի հետ, վորովհետև այս խառնուրդը կարող ե բոցավառվել: Կալիում մանգանատի լուծույթը գործադրվում ե նույն կերպ, ինչպես կրեոլինը՝ մաքնի արտաքին մասերի վրա: Բացի դրանից, նա գործադրվում ե նաև բոլոր տեսակի թունավորումների և վնասվածքների ժամանակ. որինակ ոճի խայթելուց, թունավոր գազային և հեղուկ նյութերից վնասվածքներ ստանալու դեպքում:

Կազմու կամ ոււեհնու կեղևից դժվար չե խաղուկ պատրաստելու Դրա համար պետք է կազմու կամ ոււեհնու մատղաշ շվերի կեղևները պոկել, յեփել ջրի մեջ այն աստիճան, վոր լեղվով փորձելիս պինդ կպչի բերնին: Դեղը պետք է պատրաստել եմալի, կլայեկած պղնձի կամ թե կավե ամանի մեջ, բայց վոչ թիթեղյա հասարակ ամանի մեջ, վորովհետև դարաղանյութի և յերկաթի միացումից ստացվում է թանաք: Յեփելուց հետո պետք է քամել մաքուր քաթանով և սաւեցնել: Սաւեցրած խաղուկով թացացնել շորը և դնել ֆլասոված տեղերի վրա կամ թե դրանով կապել ֆլասոված տեղերը:

Յողի տեղ կարելի չե ոգտագործել 40<sup>0</sup>/օ-անոց ողու մեջ լուծված ձյութ: Այս դեպքում 100 գր ողուն 2 թեյի գգալ մաքուր և լավորակ ձյութ են խառնում: Չողի վրա փաթաթում են քուղի կամ հնոտու մի փոքր կտոր, թաթախում են ձյութի լուծույթի մեջ և դրանով քսում վերքերին, խոցերին, քերծվածքներին, այլև քերված տեղերին, մկնատամներին, քորված տեղերին և այլն:

Իեվեկնայուղը հարկավոր է թրջելու համար այն փալասը, վորով կապում են կովի բերանը գանձակի փքվածքի դեպքում: Յեթե բեվեկնայուղ չկա, կարելի չե նրա փոխարեն մաքուր քամած նավթ գործածել: Նա գործադրվում է նաև անասունի մարմնի այն մասերին քսելու համար, վորոնց վրա առանձնապես սիրում են նստել բուռերը, պիծակներն ու այլ միջատներ:

Կազմու կեղևի փոշին և նաֆթալինը գործ են ածում վերքերի և խոցերի վրա ցանկելու համար, յերբ դրանք արդեն լվացած են, վորպեսզի ճանճերը նրանց վրա չնստեն և ընդհանրապես այս մասը ծածկեն փոշուց, կեղտից և չորացնեն վերքը: Այս փոշիները կարելի չե առանձին-առանձին գործածել, կարելի չե, նույնիսկ ավելի լավ է, միասին խառնել:

Լավ է վերցնել վոչ թե սպիտակ, այլ մթազույն և խիստ հոտ տվող թեփախման նաֆթալին: Փոշի պատրաստելու համար կազմու մատաղ կեղևը հարկավոր է չորացնել և տրորել հավանգի մեջ:

Յեթե հնարավոր է բամբակ կամ ջուտ, մաղայի կամ կտավե փաթաթաններ ձեռք բերել, պետք է դրանցից պահեստի ունենալ:

Սակայն վերջինները հաջողությամբ կարելի չե փոխարինել լավ, անքիստ և անփուշ մաքուր քուղով և նախապես սապնով լվացված և չորացրած փալասով: Այս բոլոր պիտույքներն անհրաժեշտ են վերքերը և խոցերը լվանալու, շփելու ու կապելու համար:

Վերն արգեն նշվեց, թե ինչքան կարևոր է յերբեմն կենդանու մաշկի պոկված կտորը մեկ յերկու կարով իր տեղում ամրացնել: Դրա համար լավ է ոգտվել այլուրի տապրակ կարելու համար գործածվող բարակ կեռ ասեղից: Ասեղները պետք է շատ սուր լինեն, թե չե կաշին ծակել դժվար կլինի: Անհրաժեշտ է, նախքան կարելը, ասեղն իր թելով մի քանի րոպե պահել կրետինի լուծույթի մեջ:

Մկրատն անհրաժեշտ է վերքի շուրջը գտնվող մազերը խուզելու համար, վորովհետև մազերի փնջերն իրար կպչելով, խանգարում են վերքի առողջացմանը:

Յեթե տավարածը սովորել է գանձակը ծակել, այս դեպքում նա իր շարժական դեղանոցում պետք է ունենա նաև արտակալ ծածկելու համար:

## ՏԱՎԱՐԱԾԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԸ ՅԵՎ ԻՆՖՆԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ

Տավարածին անհրաժեշտ գիտելիքների ծավալն այնքան էր լայն չե, վոր նրանց համար կուրսեր կազմակերպելիս այս կամ այն խոչնդոտների հանդիպեն, ինչպես, որինակ՝ դասատուների կամ ուսումնական պիտույքների պակասը և այլն: Յուրաքանչյուր գոտեխնիկ, յուրաքանչյուր անասնաբուժ կարող է 12—14 օրվա կուրսեր կազմակերպել տավարածնների համար, դիտավորապես անասունների առողջապահության, նախազգուշական ու սանիտարական (պայքար վարակիչ հիվանդությունների դեմ), ինչպես և առաջին ոգնության վերաբերյալ գիտելիքներ տալու համար: Կարելի չե վերցնել թեկուզ հեռոց այն ծրագրեր, վորով կազմված է այս գիթքը, լրացնել այն մուսգյուղերատի հրատարակած Որլովի ու Տրոիցկու «Կենդանիների ճիշտ պահվածքը» գրքով: Բացի այդ, կարելի չե ոգտագործել Ռաբոտնովի և Սմելովի «Ինչ-

պիսի մարգագետիններ են լինում և ինչպես զրանք բարեկամները գիրքը, կամ թե հոնյուշկովի և Սմելովի «Սոսոարքներ և արտավայրեր» բրոշյուրը: Այս գրքերը պետք է մշակել տավարածնների խմբակներում և ապա տավարածններին ապահովել այդ գրքերով՝ ինքնուրույն ընթերցանության համար: Ահա այս է տավարածնի գրտելիքների վողջ դասընթացը: Ի լրումն այս բոլորի, անհրաժեշտ է նաև միջանի ժամ գործնական պարապմունք ունենալ անասունների մոտ՝ անասունների հետ վարվելու և անասնաբուժական առաջին ոգնություն մի քանի ձևերի վերաբերյալ գործնական ծանոթություն տալու համար:

Այնտեղ, վորտեղ այսպիսի դասընթացներ չեն յեղել և չկան, տավարածններն իրենք պետք է այդպիսին կազմակերպելու հարցը դնեն, վորպեսզի համապատասխան վորակ ձևք բերեն:

Ինչպես կազմակերպել անասնապահական խմբակներ:

Անասնապահական խմբակի կազմակերպումը պետք է լինի ամեն տեսակի ուսուցման հիմնական լրացումը, վորովհետև նա պետք է արտադրության մեջ ճիշտ աշխատանքի հիմնաքարը հանդիսանա, վորովհետև նա պետք է կառուցված լինի սոցիալիստական մրցության և ընկերական փոխադարձ ոգնության հիմունքներով, վորովհետև նա ինքնըստինքյան պետք է ուսուցումը տանի այնպես, վոր տեխնիկական յուրաքանչյուր դրվածք վերածվի ամուր և գործնական սովորության:

Խմբակը պետք է քննության առնի տնտեսության բոլոր տեսակի տեխնիկական թերությունները և ուղղի դրանք:

Անասնապահական խմբակների աշխատանքը յերկու նպատակ ունի. առաջինը՝ ձեռք բերել տեխնիկական գիտելիքներ և յերկրորդ՝ այս գիտելիքներն անմիջականորեն կիրառել տնտեսության առօրյա կյանքում:

Խմբակների աշխատանքը պետք է սկսել այս կամ այն գրքի ընդհանուր կամ խմբակային ընթերցանությունով: Այստեղ անհրաժեշտ է, վոր տեղի գոտտեխնիկը կամ անասնաբուժը քննություն առնեն խմբակի կողմից կազմած պարապմունքի պլանը և պարբերաբար մասնակցեն խմբակի պարապմունքներին՝ տալով զեկավար ցուցմունքներ:

Գրքի ընթերցանությունը պետք է տանել հետևյալ կերպ. պարապմունքի առաջին որերը գիրքն ընթերցել սկզբից մինչև վերջ: Ստորին ուսուցման համար հարկավոր գրքերը շատ մեծ չեն և այսպիսի ընթերցանության համար կապահանջվի 3—4 պարապմունք մեկական ժամով:

Հետո խմբակն սկսում է գիրքը մշակել ըստ պլանի: Որինակ, սկսում է անասնապահական շենքերի կառուցման առ պահանջման բաժնից, հետո մշակում է կերակրման, արտի բաժինները և այսպես մինչև վերջ:

Յուրաքանչյուր բաժին կարգալիս սկսում են քննարկել և համեմատել գրքում գրածը և այդ ուղղությամբ տնտեսության մեջ գործնականում կատարվող աշխատանքները:

Հինց այստեղ ել պարապմունքի որագրի մեջ նշում են այն մասին, թե աշխատանքի ընթացքում ինչ բանի վրա պետք է ուշադրություն դարձնել: Խմբակի մասնակիցները հենց այս նշումների համաձայն անմիջապես և պարտադիր կերպով վերափոխում են իրենց աշխատանքն արտադրության մեջ և վերացնում են անասունների պահպանման ու խնամքի բոլոր տեսակի թերությունները:

### ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՈՐԱԳԻՐ

Տավարածնի տեխնիկայի և որագիր տանելու վերաբերյալ յես դրի յեմ առել մի տավարած - բրիգադիբի հետ ունեցած իմ զրույցը: Այս զրույցի հետ ոգտակար է, վոր յուրաքանչյուր տավարած ծանոթանա: Ահա ինչ է պատմում տավարած - բրիգադիբը:

Մեր տավարածի տեխնիկայի մասին շատերն են ասում, վոր այդ տեխնիկան դատարկ բան է: «Իո՞ւ ինչ տեխնիկա ունես», — հարցնում են վոժանք. «մտրակով թափահարելը»: Մտրակով թափահարելը, իհարկե, տեխնիկա չէ, այլ չարաճճիություն: Բայց ահա տեսե՛ք մեր որագիրը և կհամոզվե՛ք, թե ինչ տեխնիկա ունի տավարածը: Մեր որագիրն արածեցնելու յուրաքանչյուր որվա համար ունի առանձին եջ, վորի վրա նշված են կետեր՝ առաջին, յերկրորդ, յերրորդ և այլն. ընդամենը տաս կետ:

Յեզ ահա, ամեն որ, յուրաքանչյուր կետի վերաբերմամբ մենք նշուհներ ենք կատարում, իսկ որագրի սկզբում կա այս կետերի բացատրութիւնը, թե յուրաքանչյուր կետում ինչ հարց է դրված: Առաջին կետի վերաբերմամբ նշվում է հերթական հողամասի համարը և վիճակը: Մեր արտոնները բաժանված են հողակտորների. վերջիններիս համարներով և որագրի միջոցով մենք ստուգում ենք յուրաքանչյուր հողակտոր արածեցնելու ժամկետը, նշում ենք արածեցվող և հերթական հողամասի բուսակազմի վիճակը և այլն:

Յերկրորդ կետում նշվում է, թե այդ որը վորքան անասուն է ընդունվել նախրի մեջ:

Իսկ յերրորդ կետում՝ վորքան են գոմում մնացել և ինչու համար:

Այս կետերով մենք որ որի վրա ստուգում ենք անասունի ընդունումը նախրի մեջ. իսկ ինձ մոտ այսպիսի կարգ գոյութիւն ունի. յես վոչ մի դեպքում թույլ չեմ տա նախրի մեջ մտցնել հիվանդ անասուն առանց անասնաբուժի թույլտվութեան, քանի վոր արտում կենդանիների կերն ու ջուրն ընդհանուր է, և վոր հենց արտում էլ սրանք արտաթորում են. նշանակում է շատ կարելի յե մի հիվանդ անասունից այնտեղ վորևէ վարակ տալածվի:

Այս ամենորյա հաշվառումը հանդէս է այն բանի, վոր մենք նախրի մեջ գտնված յուրաքանչյուր կովին արդեն ճանաչում ենք:

Չորրորդ կետի վերաբերմամբ նշվում է, թե արտում չի՞ յեղել սորոյք անասունի հիվանդութիւն կամ մնասվածք և յեթե յեղել է, ապա ինչ պատճառներէից: Այս կետը մեր բրիգադին հարկաւորում է աչալուրջ հետևել յուրաքանչյուր անասունի, վերջինիս վարվելակերպին՝ արածելու ժամանակ, ջրելատեղում, հանգըստի վայրում և այլն: Յեթե անասունը թուլացել, մի տեսակ ընկճվել է, հնարավորութեան սահմաններում աշխատում ենք պարզել այս վիճակի պատճառները:

Մենք գիտենք արտում ամենից շատ պատահող հիվանդութիւնների պատճառները, դրա համար էլ հետևում ենք այս պատճառների վերացման գործին:

Մենք հետևում ենք, վորպեսզի նախիրը մի տեղում յերկար կանգ չառնի, զո՛ւն ենք նրան այնպիսի տեղերից, վորտեղ շատ փութամ բուսականութիւն կա, որինակ՝ յերեքնուկ, վիկ, առանձնապես ցողից կամ անձրևից հետո, վորովհետև այդպիսի դեպքերում անասուններն ազահորեն արագ ուտում են, վորի հետևանքով զանձակի փքվածք է առաջանում:

Մենք հետևում ենք, վոր անասունները, հատկապես ազահ կովերը յերկար ժամանակ մոլախոտերով հարուստ, մացառոտ, թփաշատ տեղերում չմնան, վորովհետև այստեղ թուշավոր խոտեր են լինում: Հետևում ենք, վոր անասունները լճակների, առուների մոտ և ճահճոտ տեղերում յերկար չմնան, վորովհետև անասունը կարող է կանգնած, փչացած ջուր խմել և հիվանդանալ: Անտառային բացուտներում և թփերում, վորտեղ մենք գիտենք վոր վիտում են անտառային տիգերը, անասուններին՝ բաց չենք թողնում, մանավանդ զարնանն ու աշնանը, յերբ այդ տիգերն ավելի հաճախ են հարձակվում անասունների վրա: Մենք հետևում ենք, վոր նախիրն զգուշ կերպով անցնի կոճղերի, չորուկների, առուների և թփերի միջով, առանց հալածելու նրանց, վորպեսզի վորևէ մնասվածք, քերձվածք չառաջանա, մանավանդ կրծի վրա: Մի խոսքով ամենը կատարում ենք «Տավարածի հուշատետրի» կանոնների համաձայն:

Հիմնգերող կետի վերաբերմամբ նշում ենք, թե արդոյք վորևէ դիակ չի հայտնաբերվել արտներում, միջնակներում (առուներում, թփերում, կերճերում): Քանի վոր մեր որագրում այդպիսի մի փոքր կետ կա, ապա մենք վորևէ սատկած գոջի կամ ցառ աչքաթող չենք անում, մտածելով թե՛ բան չունես, ջները կուտեն... Վո՛չ, կներեք: Մենք որագրում նշում ենք, յեթե գիտենք, նույնիսկ նշաններով, թե վորտեղից է այս լեշը, վորովհետև սա ամենափնասակար բոնն է, յերբ թեկուզ սատկած հափն անկամ շարտում են պատահած տեղը և վոչ թե թաղում վորևէ առանձնացված վայրում: Բոլոր տեսակի լեշերից վարակը կարող է տարածվել և արտի կանաչի վրա և ջրելատեղերում՝ հոսող անձրևաջրի միջոցով: Այսպիսի դեպքերի մասին մենք նույն որը հայտնում ենք կուտնտեսութեան վարչութեանը, վորպեսզի լեշը վերցնելու համար

հատուկ մարդիկ նշանակվեն: Բացի դրանից, ըստ մեր որագրի անասնաբուժներն ել կարող են ստուգել, թե վորտեղ և ինչ կերպ են շակված մեր նշումներն արտոի այսպիսի անկանոնությունների մասին: Մենք նշում ենք նաև չհավաքված հին վոսկորները և հեղեղից լվացված գերեզմանների մասին և այլն:

Վեցերորդ կետում նշում ենք, թե կարպին է արդյոք ջրելատեղը. սա արածեցման տեխնիկայի կարևորագույն պայմանն է: Իհարկե, այնպիսի տեղերում, վորտեղ մեծ գետեր և լճակներ կան, ջրելատեղերի մասին քիչ հոգս է տարվում, բայց ահա ինչ կերպ է մեզ մոտ. մի անկյունում փոքր, լճացած պետակ է, իսկ մյուս ծայրում՝ ջրհոր: Այստեղ պետք է կեղտոտությունից պահպանել և՛ գետակը, և՛ ջրամբարը, և՛ հետևել ջրամբարի մոտ յեղած ջրատաղաններին: Միթե դա տեխնիկա չէ: Այս ամենը մենք նշում ենք թե ստուգման համար և թե նրա համար, վորպեսզի վորևե անկանոնություն պատահելու դեպքում վարչության ուղարկությունը հրավերենք:

Յոթերորդ կետում նշվում է, թե արդյոք կացատեղերում գոմաղը չի հավաքվել կամ թե արոտի վորևե տեղում չկան խուրդների փորփրած տեղեր, արդյոք փոսեր չկան առաջացել, վտակների հոսանքներից աղը, կեղտ չի կուտակվել:

Մեզ մոտ այսպիսի կարգ է սահմանված. նոր արոտամաս տեղափոխվելիս հինը փոցխում ենք, վորպեսզի տրորված ձուտները փխրանան և աղը ցրիվ դա բոլոր կողմերի վրա: Արածեցնելու ժամանակ ևս մենք աղը ցրում ենք վոր չորանա և հարթում ենք խուրդի բները:

Աղբն ել հավաքում և վառում ենք:

Ահա տեսնում եք, մենք յուրաքանչյուր որ այս կետերում գոնե մեկական բառ ենք նշում՝ այո կամ վոչ: Իսկ ըստ որագրի կետերի դիտումներ կատարելը մեղ համար սովորություն է դառել: Իհարկե, մենք ևս աշխատանքի ընթացքում ուղղում ենք ինչ վոր կարողանում ենք և այնուամենայնիվ նշում ենք որագրում՝ թե մեր ուժերով ինչ է ուղղված, իսկ ինչ վոր մեր ուժերով չենք կարողանում ուղղել, մեր նշումների համաձայն միջոցներ ձեռք կառնվեն ուղղելու համար: Այն ժամանակ որագրի մեջ

մենք կնշենք, թե ինչ է ուղղված, իսկ քանի դեռ չեն ուղղել, մենք ամեն որ կնշենք մեր որագրում այս անկանոնությունը:

Ութերորդ կետում նշում ենք, թե նախրի վոր կովերն են բեղմնալորիլ արոտում: Մեղ մոտ, չնայած վոր կովերի ձեռնքաջ ծածկելն է մտցված, բայց յերկու ցուլ նախրի հետ են, իսկ դա բավական կլինի, վորպեսզի կարելի լինի ստուգել ստերջներն և բաց չթողնել ցանկություն ունեցող կովերին:

Իններորդ կետում նշում ենք, թե արդյոք միջատները շատ չեն նեղացնում անասուններին: Շատ նախրներում այս գործին քիչ են ուղարկություն դարձնում: Մինչդեռ սա ևս շուրջ գործ է, վորովհետև նախ՝ կովերը պահասեցնում են իրենց կիթը, յերկրորդ՝ բուսերից կովերի մեջքի վրայի յելունքների մեջ թրթուրներ են զարգանում, և յերրորդ՝ միջատները կարող են նախրում նույնիսկ վարակ փոխանցել:

Յեթե մեզ մոտ որագրում նշված լինի, թե անասունները միջատներից շատ են տուժում, այդ բանի դեմ միջոցներ կձեռնարկվեն, այսինքն՝ տոթ ժամերին արոտի ժամկետը կկրճատվի, նրա փոխարեն կերկաբացվի վաղ առավոտյան և յերեկոյան արածեցնելու ժամանակաշրջանը, հոտավետ ձյութ կքսեն անասունների մարմնի դանաղան մասերին և այլն:

Տասներորդ կետում գրում ենք, թե արդյոք նախրի մեջ առանձնակի դեպքեր չեն պատահել, որինակ վիժում կամ հանկարծակի անկման վորևե դեպք, կամ թե պատահական շուն չի կծել վորևե անասունի: Այսպիսի դեպքերը մեծ վտանգ են ներհայացնում և ամենախիստ ու ամենաշատ միջոցներ են պահանջում, ինչպես, որինակ՝ դիակն անմիջապես վերցնել, անասունի պուճկած տեղն այրել, վիրավորված անասունի մեկուսացում, անասնաբուժական տարբեր կանոնների կիրառում և այլն:

Մի խոսքով, այսպիսի դեպքերում պահանջվում է անասնաբուժին անմիջապես տեղեկացնել, որագրում գրի առնել նրա բուր ցուցմունքներն ու կարգադրությունները և դրանք ձշտորեն ու առանց ձգձգումների կատարել: Յերը մենք սկսեցինք որագրի տանել, ամբողջ բրիգադով թե ճաշին և թե յերեկոյան հավաքվում և ժտածում եյինք՝ ինչ գրել, ասենք՝ յերկրորդ կամ յոթերորդ

կետում: Շրջում եյինք նախքէ շուրջը և մտածում՝ բաց չթողնել վորեւ բան, վորը պետք է նշել որտղորում:

Ինչո՞ւ յեր այսպիսի խոչնդոտ առաջ գալիս. նրա համար, վոր տավարածի գործի տեխնիկան վոչ մի գրանցում չի ունեցել և ընթացել է ինքնահոսի կարգով: Մենք շատ բան ենք բաց թողել, վորը մոռացութեան, վորն շտապելու և վորն անփութութեան հետեանքով:

Իսկ նրան, ով ասում է, թե տավարածի տեխնիկան մտրակով թոփահարելն է, մենք կարող ենք աւել մեր որագէտը կարգաւու. նա կհասկանա, վոր մեր տեխնիկան միայն մտրակ գործածելը չէ, այլ ամեն ժամ անասունի մասին հոգալը՝ թե արդյոք նա կհնչուի, առողջ է, ինչպես է լսմում, ինչն է նրան ֆրասում, ո՞վ է նրան վերավորում:

Սա փոքր տեխնիկա չէ:

Սկզբում կարծում եյինք, թե այս կետերում կխճճվենք, իսկ այժմ մեր գործը հրաշալի յե ընթանում: Մեր տեխնիկայի կարգն ու կանոններն այնպես են մեր սովորութեան մեջ մտել, վոր այս մասին մտածելու կարիք անգամ չկա: Մեր որագէտի բոլոր կետերը կարծես մեր աչքի առաջն են, իսկ արտադրական թորհրդակցութեաններում ըստ որագէտի և մեր կատարած նշումների մենք կարողանում ենք ճշգրտորեն զեկուցում աւել վորեից ամեն ինչ պարզ է դառնում, թե վորտեղ է ինչու՞ն է թերութեանները և ինչ պահանջներ է ներկայացնում արածեցնելու գործը:

Ի՞նչ համոզմունքը սա յե. որագէտը սովորեցրեց մեզ կերպով տեխնիկան վորպես մի ամենասովորական գործ:

	ԿԶ
Տիրապետել գործի տեխնիկային . . . . .	5
Բարձրացնել արտաների վորակը . . . . .	9
Արածեցնելու համար անհրաժեշտ տարածութեան հաշվարկը	10
Տարբեր խոտարույտերի կերարժանիքը . . . . .	16
Արտավայրի բարելավումը . . . . .	22
Արտաների ֆրաստկար հատկութեանների հաշվառումն ու վերացումը . . . . .	24
Արտավայրի ջրեկատեղերի մասին . . . . .	26
Արտավայրի հեռավորութեանը . . . . .	31
Արտավայրի պլանի կազմելը . . . . .	33
Արտաները յուրաքանչյուր տարի նախապատրաստելու կարգը . . . . .	37
Կենդանիներն ամեն տարի արտի հանելու նախապատրաստման կարգը . . . . .	41
Նախիրն արտի հանելու և վերադարձնելու կարգը . . . . .	44
Արածեցնելու կարգը . . . . .	47
Անասուններին հսկելու և նրանց հետ վարվելու կարգը	52
Անասունների հիվանդութեան նշանները և առաջին միջոցառումները . . . . .	53
Վարակիչ հիվանդութեանների կասկածելի նշանները և շտապ միջոցառումները . . . . .	55
Վարակիչ մանրէները և պայքար նրանց դեմ . . . . .	58
Մոանձին վարակիչ հիվանդութեանների մասին . . . . .	60
Պարազիտների առաջացած հիվանդութեանների մասին . . . . .	66
Կերի անկանոնութեանից առաջացած հիվանդութեանները	79
Կենդանիներին մեխանիկական ֆրասովածքներից պաշտպանելը և առաջին ոգնութեան միջոցառումները . . . . .	93

Ինչպես պաշտպանել անասունին՝ մրսելու հետևանքով առաջացած հիվանդություններից . . . . .	99
Ինչ անել նախքին մեջ վիժումներ կամ թե վաղաժամ ծնունդ լինելու դեպքում . . . . .	100
Հսկողություն՝ զուգավորման և բերի դալու վրա . . . . .	102
Ինչ է տավարածի շարժական դեղարկղը և ինչպես ոգտվել նրանից . . . . .	104
Տավարածի ուսուցման դասընթացները և ինքնակրթությունը . . . . .	107
Տեխնիկայի տիրույթուման որագիր . . . . .	109

Գտ. խմբ.՝ Ն. Մալաթյան  
 Տեխն. խմբ.՝ Վ. Ալեքյան  
 Վոճարան՝ Աբր. Գրիգորյան  
 Սրբագրել՝ Խ. Սյվազյան

Ձևավորի լիազոր Ս—473


Հրատ. № 316, տիրած 1500, պտտվեր № 185

Հանձնված է արտադրության 1936 թվի մարտի 19-ին

Ստորագրված է տպագրելու 1936 թվի մայիսի 10-ին

71/4 տպագրական թերթ, 1 տպագրության 24560 աս. նշ

Գյուղերտաի տպարան, Յեթմեառի մարզում, 11



419

21-635

ԳԻՆԸ 1 Ռ. 50 Կ.



---

Ա. Ա. ՕՐԼՈՎ  
Պ Ա Մ Յ Ա Տ  
Պ Ա Տ Մ Ա Տ

ՍԵԼՒՒՅՈՅԳՈՒՄ 1936 ՓՐԻՎԱՆԻ

---